ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ **ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ**

2016

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԲԱՆԿ**



ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2016

ԵՐԵՎԱՆ 2017

Ուղերձ



ԱՐԹՈՒՐ
ՋԱՎԱԴՅԱՆ

ՀՀ կենտրոնական բանկի
նախագահ

Հարգելի ընթերցող

Ձեզ ենք ներկայացնում Կենտրոնական բանկի 2016 թ. տարեկան հաշվետվությունը, որտեղ համառոտ ամփոփված են ԿԲ խնդիրների ուղղությամբ կատարված աշխատանքները և արդյունքները:

Հաշվետու տարում Հայաստանում ապահովվել է գների և ֆինանսական կայունությունը:

Կենտրոնական բանկի հանդեպ վստահության շնորհիվ հասարակության գնաճային սպասումներն էապես նվազել են: Վերջինս արտահայտվել է ֆինանսական շուկայում երկարաժամկետ տոկոսադրույքների նվազմամբ՝ հիմքեր ստեղծելով ներքին պահանջարկի վերականգնման և ապագա տնտեսական աճի համար:

Ցածր գնաճային միջավայրում Կենտրոնական բանկը տարվա ընթացքում աստիճանական նվազեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը ընդհանուր առմամբ 2.5 տոկոսային կետով, որն իր համապատասխան ազդեցությունն է փոխանցել թե՛ պետական պարտատոմսերի շուկա՝ դրանց եկամտաբերության նվազման և թե՛ ֆինանսական համակարգի կողմից տնտեսության ֆինանսավորման ոլորտ՝ վարկերի տոկոսադրույքների նվազման ուղղությամբ:

Գների կայունությունը նպաստել է մեր հասարակության և բիզնեսի շատ կարևոր առաջնահերթ մի քանի խնդիրների լուծմանը, ինչպիսիք են աշխատավարձերի և այլ եկամուտների **գնողունակության պահպանման** միջոցով **սպառողների կենսամակարդակի պահպանումը, ձեռնարկությունների մրցունակության վերականգնումը** և **արտահանելի հատվածի դրական զարգացումների ապահովումը**:

Հաշվետու տարին նշանակալի էր նաև Կենտրոնական բանկի մյուս կարևոր խնդրի՝ **ֆինանսական կայունության** ամրապնդման տեսանկյունից: Բանկերը կարողացան սահուն կերպով բավարարել կապիտալի նոր սահմանաչափի պահանջը, ինչը նպատակաուղղված է երկարաժամկետ հատվածում բանկային համակարգի ֆինանսական կայունության ամրապնդմանը, բանկերի մրցունակության և տնտեսությունում բանկային ոլորտի դերի բարձրացմանը:

Բանկային համակարգում համախմբման գործընթացներով պայմանավորված՝ տեղի ունեցավ բանկերի միավորման 4 գործարք, որի արդյունքում ընդլայնվել են բանկերի կողմից մեծածավալ բիզնես նախագծերի ֆինանսավորման հնարավորությունները, ստեղծվել են ֆինանսական ծառայությունների հասանելիության և մատչելիության բարելավման նոր հիմքեր, ավելացել սեփական միջոցների հաշվին ֆինանսական ռիսկերը կլանելու բանկերի ունակությունը:

Ֆինանսական համակարգն ունի ավելի քան բավարար իրացվելի միջոցներ և անհրաժեշտ կապիտալ, որպեսզի ֆինանսավորի տնտեսության ամենատարբեր հեռանկարային նախագծեր՝ միաժամանակ չվտանգելով ֆինանսական կայունությունը: Կենտրոնական բանկն իր քաղաքականությամբ նպաստում է երկարաժամկետ դրամային ռեսուրսների ձևավորմանը: Հիփոթեքային, վերականգնվող էներգիայի և տնտեսության կարևոր ճյուղերի փոքր և միջին ձեռնարկություններին նպատակաուղղված մատչելի վարկավորման ծրագրերի հաջող ընթացքը հիմքեր ստեղծեց դրանց շարունակականության և նոր ծրագրեր սկսելու համար: 2016 թվականին Կենտրոնական բանկը կնքեց երեք նոր պայմանագիր Եվրոպական ներդրումային բանկի և KfW բանկի հետ, որոնցից երկուսը՝ փոքր և միջին ձեռնարկությունների, իսկ մեկը՝ բնակարանային ֆինանսավորման զարգացման նպատակով:

2016 թվականին շարունակվել են գյուղացիական տնտեսություններին սուբսիդավորվող վարկային ծրագրերը: Ակտիվորեն իրականացվել են նաև սոցիալական տարբեր խմբերին պետական սուբսիդավորմամբ վարկերի տրամադրման ծրագրերը. մասնավորապես՝ «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան», «Ուսանողներին տրամադրվող ուսումնական վարկեր», «Ջինվորական և ոստիկանության ծառայողներին կենցաղային տեխնիկա ձեռք բերելու համար տրամադրվող սպառողական վարկեր»:

Ֆինանսական համակարգի բոլոր մասնակիցներն ապահովել են հիմնական ֆինանսական ցուցանիշների աճ:

Ապահովագրական ընկերությունները ցուցաբերել են բավարար ակտիվություն և ապահովել են ակտիվների 13.5% աճ: 2016 թվականին ԱՊՊԱ ոլորտում կատարվել են մի շարք փոփոխություններ, որոնցից հատկանշական են պատահարների ինքնուրույն կարգավորման համակարգի ներդրումը և ԱՊՊԱ «Բոնուս-մալուս» համակարգում փոփոխությունները:


Կենսաթոշակային ֆոնդերը տարվա ընթացքում կրկնապատկվել են, ինչն արդեն իսկ կայացած համակարգի նկատմամբ վստահության աճի և միջոցների արդյունավետ կառավարման արդյունք է:

Հաշվետու տարում իրականացված օրենսդրական փոփոխությունները նաև հաջորդ տարիներին կնպաստեն կապիտալի շուկայում միջազգային համագործակցության ընդլայնմանը և ածանցյալ ֆինանսական գործիքների զարգացմանն ու խթանմանը:

2016 թվականին Կենտրոնական բանկը շարունակել է ֆինանսական համակարգում սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, ինչպես նաև իր մեկ այլ առաջնահերթության՝ **ֆինանսական կրթման ազգային ռազմավարության շրջանակում** կատարվող աշխատանքները:

Առանձնակի կցանկանայի նշել, որ ձեռք բերված արդյունքներն արձանագրվել են նաև Կենտրոնական բանկի անձնակազմի՝ կորպորատիվ կառավարման և մասնագիտական բարձր չափանիշներին համապատասխանող միասնական ու արդյունավետ աշխատանքի շնորհիվ:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի **Կառուցվածքը**


ԽՈՐՀՈՒՐԴ
ՆԱԽԱԳԱՀ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ
ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ԽՈՒՄԲ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ
ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ԴԻԼԻՋԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՐԹՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կենտրոնական բանկի
խորհուրդ





Արթուր
ՋԱՎԱԴՅԱՆ
ՀՀ կենտրոնական բանկի նախագահ



Ներսես
ԵՐԻՑՅԱՆ
Նախագահի տեղակալ



Վախթանգ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Նախագահի տեղակալ



Օլեգ
ԱՂԱՍՅԱՆ



Աշոտ
ՄԿՐՏՉՅԱՆ



Արմենակ
ԴԱՐԲԻՆՅԱՆ



Արթուր
ՍՏԵՓԱՆՅԱՆ



Արկադի
ԽԱՉԱՏՐՅԱՆ

Բովանդակություն

01
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

12

Կենտրոնական բանկի մասին
13

Կենտրոնական բանկի ռազմավարական ուղղությունների ամփոփում
16

02
ԳՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

20

Դրամավարկային քաղաքականություն
21

03
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

28

Ֆինանսական համակարգի կայունություն, կարգավորում և վերահսկողություն
29

Վճարահաշվարկային համակարգ
35

Արժեթղթերի շուկա
39

2016
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

04
ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՅԼ ԽՆԴԻՐՆԵՐ
40

Աrժույթի թողարկում, դրամաշրջանառության կազմակերպում
41

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպում և կարգավորում
44

Ֆինանսական համակարգում սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն
48

Միջազգային պահուստների կառավարում
52

05
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄ
56

Կենտրոնական բանկի ինստիտուցիոնալ զարգացում
57

Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոն
72

06
ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
80

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ կենտրոնական բանկի հիմնական խնդիրը Հայաստանի Հանրապետությունում գների կայունության ապահովումն է: Իր հիմնական խնդիրն իրագործելու նպատակով Կենտրոնական բանկը գների կայունության ապահովմանն ուղղված միջոցներ է ձեռնարկում, մշակում, հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագրերը:

Կենտրոնական բանկի առաքելությունն է՝

- լինել միջազգայնորեն ճանաչված՝ որպես անկախ, դինամիկ զարգացող, հեղինակավոր, թափանցիկ, գիտելիքին միտված, միջազգային ֆինանսական համակարգի զարգացման միտումները գնահատող արդյունավետ կառույց,

- մշտապես ունենալ տնտեսական միջավայրի փոփոխություններին արագ արձագանքելու և տնտեսական գործընթացների վրա արդյունավետորեն ազդելու ինստիտուցիոնալ կարողություններ,

- աջակցել երկրի մակրոտնտեսական կայուն զարգացմանը՝ լինելով տնտեսական մարտահրավերներին դիմակայելու գործում ՀՀ Կառավարության կարևոր գործընկերը:

Կենտրոնական բանկի խնդիրներն են՝


- Հայաստանի Հանրապետության ֆինանսա կան համակարգի կայունության և բնականոն գործունեության ապահովումը, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայման ների ապահովումը,
- գործուն վճարահաշվարկային համակարգի ստեղծումն ու զարգացումը,
- Հայաստանի Հանրապետության արժույթի թողարկումը, դրամաշրջանառության կազմակերպումը և կարգավորումը,
- փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպումն ու կարգավորումը,
- արժեթղթերում ներդրողների պաշտ պանության, շուկայում արժեթղթերի արդար գնագոյացման համակարգի ձևավորման ու պահպանման, արժեթղթերի արդար, թափանցիկ և վստահելի շուկայի կանոնակարգված և բնականոն գործունեության և զարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը,
- ֆինանսական համակարգում սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար անհրաժեշտ պայմանների ապահովումը:

Ռազմավարական ուղղություններ



Իր խնդիրներն իրագործելու նպատակով Կենտրոնական բանկը՝

- իրականացնում է Կառավարության բանկային սպասարկումը,
- հանդիսանում է Կառավարության ֆինանսական գործակալն ու խորհրդատուն,
- լիցենզավորում է բանկերը, օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև այլ անձանց, կազմակերպություններին ճանաչում է որպես ֆինանսական խումբ, կարգավորում և վերահսկում է դրանց գործունեությունը,
- որպես վերջին ատյանի վարկատու՝ վարկեր է տրամադրում բանկերին,
- կարգավորում և վերահսկում է վճարահաշվարկային համակարգի, այդ թվում՝ վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպությունների, որոնք բանկ չեն, գործունեությունը,
- տիրապետում, օգտագործում և տնօրինում է Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստները,
- իրականացնում է դրամավարկային և ֆինանսական համակարգի վիճակագրության հավաքագրումը, ամփոփումը և հրապարակումը,
- իրականացնում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ տեղեկությունների հավաքագրումը, համակարգումն ու վերլուծությունը, տեղեկությունների փոխանակումը և տրամադրումը ներպետական իրավասու մարմիններին և միջազգային կազմակերպություններին, իսկ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում՝ նաև այլ պետությունների իրավասու մարմիններին:



ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՌԱՋՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Ինչպես ամրագրված է Կենտրոնական բանկի 2015-2017 թվականների ռազմավարությամբ՝ Կենտրոնական բանկն իր հիմնական նպատակն իրականացնելիս ձգտում է բարձր պահել իր՝ որպես անկախ կառույցի և Հայաստանի Հանրապետությունում միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում գների և ֆինանսական կայունության երաշխավորի հեղինակությունը՝ առաջնորդվելով տնտեսության կայուն զարգացման ապահովման և միջազգային շուկաներին ինտեգրվելու հեռանկարով, ձգտելով ունենալ ֆինանսական ծառայությունների ոլորտում տարածաշրջանային կարևոր դերակատարում:

2016 թվականին Կենտրոնական բանկի ջանքերն ուղղվել են իր առջև դրված խնդիրների լուծման ապահովման համար միջազգային լավագույն փորձի ներդրմանն ու կիրառմանը ֆինանսական հատվածում՝ ապահովելով վերջինիս բազմազանեցումը (դիվերսիֆիկացում) և համաչափ զարգացումը:

Կենտրոնական բանկի համար 2016 թվականին առաջնային են համարվել որոշակի խնդիրներ:

Գների կայունության ապահովում

2016 թվականին ՀՀ կենտրոնական բանկը, առաջնորդվելով գնաճի նպատակադրման ռազմավարության սկզբունքներով, իրականացրել է գների կայունության ապահովմանն ու գնաճի նպատակային թիրախի շրջանակներում հասարակության գնաճային սպասումների խարսխմանն ուղղված դրամավարկային քաղաքականություն: 2016 թվականին գնաճային զարգացումները հիմնականում կրել են հետևյալ գործոնների ազդեցությունը. 2015-2016 թթ. արտաքին հատվածում ձևավորված գնանկումային միջավայրի՝ ներքին գների վրա ազդեցության փոխանցումը, ՀՀ գյուղատնտեսության ճյուղի բարձր աճի արդյունքում գյուղմթերքների՝ համեմատաբար ցածր գների արձանագրումը, արտերկրից դրամական փոխանցումների ծավալների նվազմամբ պայմանավորված թույլ ներքին պահանջարկը, ինչպես նաև 2016 թվականի հուլիսին գազի սակագնի իջեցումը: Հաշվի առնելով նշված ազդեցությունները և այն, որ 2016 թվականի երկրորդ կեսից գերակշռում էին գնանկումային ռիսկերը, տարվա ընթացքում

Կենտրոնական բանկը իրականացրել է ընդլայնողական դրամավարկային քաղաքականություն՝ նվազեցնելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը ութ անգամ՝ ընդհանուր հաշվով 2.5 տոկոսային կետով: Ընդ որում, Կենտրոնական բանկը նախապատվությունը տվել է **դրամավարկային պայմանների աստիճանական թուլացմանը**՝ հիմնավորելով գնաճային սպասումների նվազման, եկամուտների գնողունակության պահպանման և կազմակերպությունների ծախսերի կրճատման վրա ցածր գնաճի դրական ազդեցությամբ: Կենտրոնական բանկի վարած հետևողական քաղաքականության ազդեցությամբ տարվա ընթացքում զգալիորեն մեղմվել են նաև տարեսկզբին առկա բարձր գնաճային սպասումները, նվազել են երկարաժամկետ շուկայական տոկոսադրույքները և տնտեսության դոլարայնացման աստիճանը: 2016 թվականին իրականացված դրամավարկային քաղաքականությունը կնպաստի միջնաժամկետում գնանկումային միջավայրի աստիճանաբար չեզոքացմանը, և կանխատեսվող հորիզոնում 12-ամսյա գնաճը կվերադառնա նպատակային ցուցանիշին:

Ֆինանսական կայունության ապահովում

Ֆինանսական կայունության ապահովման ռազմավարության ներքո Կենտրոնական բանկը 2016 թվականին շարունակել է ֆինանսական կայունության ամրապնդմանն ուղղված աշխատանքները, իրականացրել է կարգավորման դաշտի կատարելագործման և վերահսկողության արդյունավետության բարձրացման միջոցառումներ:

Ֆինանսական համակարգի ակտիվների ու ՀՆԱ-ի հարաբերակցության և տնտեսությանը տրամադրված վարկերի ու ՀՆԱ-ի հարաբերակցության ցուցանիշները նախորդ տարվա համեմատ ավելացել են համապատասխանաբար 12.3 և 6.6 տոկոսային կետով՝ կազմելով 89.1% և 50.0%:

Տարածաշրջանի այլ երկրների համեմատությամբ գրանցվել է ֆինանսական համակարգի միջնորդության ավելի արագ խորացում: 2016 թվականին ՀՀ ֆինանսական համակարգում դրսևորվել են կայուն զարգացման միտումներ՝ հիմնական հաշվեկշռային ցուցանիշների զգալի աճ և ֆինանսական կայունությունը բնութագրող ցուցանիշների բարելավում:

Ֆինանսական համակարգի խոշորագույն մասնակից բանկային համակարգն ապահովել է ակտիվների 15.6%, վարկերի 15.4% և կապիտալի 27.1% աճ: Ընդ որում, վարկերի աճը զուգորդվել է չաշխատող վարկերի («հսկվող», «ոչ ստանդարտ», «կասկածելի» ռիսկային դասեր) տեսակարար կշռի 1.1 տոկոսային կետով նվազմամբ, որը կազմել է 6.7%:

Ֆինանսական համակարգի այլ մասնակիցներ (վարկային կազմակերպություններ, ապահովագրական ընկերություններ, ներդրումային ընկերություններ) ևս աշխատել են շահույթով և ապահովել հիմնական ցուցանիշների աճ: Ակտիվների կառավարիչների կողմից կառավարվող պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվները կրկնապատկվել են:

ՀՀ կենտրոնական բանկի այլ խնդիրներ

Արժույթի թողարկում, դրամաշրջանառության կազմակերպում: 2016 թվականին շրջանառությունում գտնվող դրամանիշերի որակի բարելավման նպատակով փոփոխություններ են կատարվել բանկերում դրամանիշերի տեսակավորման գործընթացը կարգավորող կանոնակարգերում:

Տարվա ընթացքում շարունակվել են «Կենտրոնական բանկում փորձաքննություն անցած դրամանիշերի» նոր տեղեկատվական համակարգի մշակման աշխատանքները: Կենտրոնական բանկը վերազինվել է դրամանիշերի փորձաքննության համար անհրաժեշտ նորագույն տեխնիկայով:

2016 թվականին Կենտրոնական բանկը թողարկել է թանկարժեք մետաղներից պատրաստված հուշադրամներ՝ նվիրված հայ անվանի անհատների և նշանավոր իրադարձությունների հոբելյաններին:

«Դրամների համաստեղություն - 2016» միջազգային մրցույթում «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելից» հուշադրամը «Տարվա հուշադրամ» անվանակարգում արժանացել է 1-ին մրցանակի:

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպում և կարգավորում: 2016 թվականը նշանավորվել է միջազգային կառույցների հետ համագործակցության շրջանակներում գրանցված առաջընթացով: Մասնավորապես՝ 2016 թվականի դեկտեմբերին կայացած ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի լիագումար նիստում ներկայացվել և հաստատվել է ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի 5-րդ փուլի փոխադարձ գնահատման առաջընթացի միջանկյալ հաշվետվությունը, իսկ Եվրոպայի խորհրդի «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» 2005 թվականի CETs No. 198 կոնվենցիայի (այսուհետ՝ Վարշավայի կոնվենցիա) կողմերի համաժողովի՝ 2016 թվականի հոկտեմբերին կայացած 8-րդ հերթական լիագումար նիստում՝ Հայաստանի Հանրապետության՝ Վարշավայի կոնվենցիային համապատասխանության հաշվետվությունը:

Ֆինանսական համակարգում սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն: 2016 թվականին Կենտրոնական բանկը իրականացրել է ոլորտի կարգավորման դաշտի կատարելագործմանն ու զարգացմանը, ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի վերահսկմանը և ՀՀ-ում հանրության ֆինանսական իրազեկման և կրթվածության մակարդակի բարձրացմանը նպատակաուղղված բազմաթիվ միջոցառումներ ինչպես Երևանում, այնպես էլ ՀՀ մարզերում՝ նախապես ընտրված տարբեր թիրախային խմբերի համար: Ոլորտում գրանցած հաջողությունների համար ՀՀ-ն ճանաչվել է տարածաշրջանային հաղթող «Երեխաների և երիտասարդների ֆինանսների» միջազգային կազմակերպության (Child & Youth Finance International) «Global inclusion» (Համընդգրկուն ներգրավվածություն) մրցանակաբաշխությունում:

Միջազգային պահուստների կառավարում: 2016 թվականին ՀՀ միջազգային պահուստների մակարդակը շարունակել է համապատասխանել միջազգային պրակտիկայում արտարժութային պահուստներին ներկայացվող պահանջներին, մասնավորապես՝ հնարավոր արտաքին շոկերը կլանելու ՀՀ տնտեսության կարողությունը հավաստելու տեսանկյունից: 2016 թվականին ՀՀ միջազգային պահուստներն ապահովել են ներմուծման շուրջ վեց ամսվա և կարճաժամկետ պարտավորությունների (մինչև մեկ տարի) սպասարկման ավելի քան յոթ տարվա ծածկույթ: ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է միջազգային լավագույն փորձի վրա հիմնված և նվազագույն ռիսկերով պահուստների կառավարման իր որդեգրած ռազմավարությունը:

Ինստիտուցիոնալ զարգացում

2016 թվականին կատարվել են Կենտրոնական բանկի և ողջ ֆինանսաբանկային համակարգի գործառույթների անընդհատության ապահովման ու ենթակառուցվածքների վերականգնման պլանավորման, ղեկավարության և անձնակազմի պատրաստվածության բարձրացման աշխատանքներ:

Խորացվել են երկկողմ և բազմակողմ համագործակցությունները Կենտրոնական բանկի գործընկեր կառույցների, ինչպես նաև միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ:

Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնը (այսուհետ՝ Դիլիջանի կենտրոն) 2016 թվականին ունեցել է զգալի ձեռքբերումներ և հաջողություններ երեք հիմնական զարգացման ուղղություններով՝ **հետազոտությունների իրականացում, միջազգային համագործակցություն** և **սոցիալական պատասխանատվություն**:

Տարեվերջի դրությամբ Կենտրոնական բանկի աշխատակիցների մոտ 22.8%-ը (178 աշխատակից) աշխատում է Դիլիջանի կենտրոնում:

02

ԳՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կենտրոնական բանկի հիմնական խնդիրը

Համաձայն «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի՝ **Կենտրոնական բանկի հիմնական խնդիրը գների կայունության ապահովումն է**, որով Կենտրոնական բանկը նպաստում է երկարատև ժամանակահատվածում կայուն և բարձր տնտեսական աճի ձեռքբերմանն ուղղված տնտեսական քաղաքականության իրականացմանը: Գների կայունությունը ենթադրում է գնաճի որոշակի մակարդակ, որը Կենտրոնական բանկի կողմից ընդունվում է որպես գնաճի նպատակային մակարդակ կամ գնաճի թիրախ: Հայաստանի Հանրապետությունում գնաճի թիրախը ամրագրվում է Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության ծրագրերում, ՀՀ Կառավարության պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերում, պետական բյուջեի մասին ՀՀ օրենքներում և կայուն զարգացման ծրագրերում: Կենտրոնական բանկը ինքնուրույն է ընտրում իր կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության ռազմավարությունը, միջանկյալ և գործառնական նպատակները և դրամավարկային գործիքները:

Կենտրոնական բանկը, գնաճի նպատակադրման ռազմավարության համատեքստում, որպես միջանկյալ նպատակ դիտարկում է գնաճի կանխատեսված մակարդակը, իսկ որպես գործառնական նպատակ՝ կարճաժամկետ տոկոսադրույքը: Դրամավարկային քաղաքականության հիմնական գործիքը 7-օրյա ռեպո համաձայնագիրն է, որի տոկոսադրույքը (վերաֆինանսավորման տոկոսադրույք) սահմանվում է Կենտրոնական բանկի խորհրդի կողմից՝ համաձայն ժամանակացույցի: Դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքները ուժի մեջ են մտնում սահմանմանը հաջորդող օրվանից:

Գնաճի նպատակադրման ռազմավարության ներքո էապես կարևորվում է Կենտրոնական բանկի հաղորդակցությունը հասարակության հետ, որի հիմնական ուղիներից մեկը գնաճի եռամսյակային հաշվետվությունների հրապարակումն է[1]: Գնաճի հաշվետվության առաջին բաժինը ներառում է ընթացիկ եռամսյակի դրամավարկային քաղաքականության ծրագիրը, իսկ երկրորդ բաժինը՝ նախորդ եռամսյակի գնաճի իրագործմանն ուղղված դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվությունը:


1 Մանրամասն տե՛ս Կենտրոնական բանկի «Գնաճի հաշվետվություն» պարբերականում (www.cba.am):

Դրամավարկային քաղաքականության իրագործումը

Համաձայն դրամավարկային քաղաքականության 2016 թվականի առաջին եռամսյակի ծրագրի՝ **նախորդ տարեվերջից ձևավորված թույլ գնանկումային միջավայրը 2016 թ. առաջին կեսին հիմնականում պահպանվելու էր**, քանի որ թե՛ ներքին տնտեսությունից և թե՛ արտաքին հատվածից էական գնաճային ճնշումներ չէին ակնկալվում: Այնուհետև **12-ամսյա գնաճն աստիճանաբար ընդլայնվելու էր**՝ կանխատեսվող հորիզոնում մոտենալով և կայունանալով նպատակային ցուցանիշի շուրջ:


2015-2016 թթ. միջազգային ապրանքային շուկաներում դրսևորվող գնանկումային երևույթների՝ ներքին գների վրա ազդեցության փոխանցմամբ, գյուղատնտեսության ճյուղի բարձր աճի պարագայում գյուղմթերքների գների համեմատաբար ցածր մակարդակների ձևավորմամբ, դրամական փոխանցումների ծավալների անկման պայմաններում պահպանվող թույլ ներքին պահանջարկով և 2016 թվականի հուլիսին գազի սակագնի իջեցմամբ պայմանավորված՝ 2016 թվականին պահպանվել է գնանկումային միջավայր: Հաշվի առնելով ներքին գների վրա վերոնշյալ գործոնների ազդեցությունը, իսկ տարվա երկրորդ կեսից՝ նաև գերակշռող գնանկումային ռիսկերի առկայությունը՝ **Կենտրոնական բանկը 2016 թվականի ամբողջ ընթացքում իրականացրել է ընդլայնողական դրամավարկային քաղաքականություն՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքը տարեսկզբի 8.75%-ից աստիճանաբար իջեցնելով 6.25%-ի** *(տես գծապատկեր 1)*:

Գծապատկեր 1. 2016 թվականին կարճաժամկետ տոկոսադրույքների վարքագիծը հիմնականում համահունչ է եղել Կենտրոնական բանկի հիմնական գործիքի տոկոսադրույքի փոփոխություններին



Նշված գործոնների և Կենտրոնական բանկի իրականացրած ընդլայնողական դրամավարկային քաղաքականության ազդեցությամբ **12-ամսյա գնաճը մինչև հոկտեմբեր պահպանել է նվազման միտումները՝ 2015 թ. վերջի –0.1%-ից 2016 թ. սեպտեմբերին իջնելով –1.9%-ի, իսկ այնուհետև գնանկումային միջավայրը մեղմվել է, և տարին ավարտվել գնաճի –1.1% ցուցանիշով** *(տե՛ս գծապատկեր 2)*: Նմանատիպ վարքագիծ է դրսևորել նաև 12-ամսյա բնականոն գնաճը, որը նախորդ տարվա վերջի 0.7%-ից սեպտեմբերին իջել է մինչև –2.2%, իսկ տարեվերջին փոքր-ինչ բարձրացել է՝ կազմելով –1.8%:

Գծապատկեր 2. 2016 թվականին պահպանվել է գնանկումային միջավայրը, որը չորրորդ եռամսյակում զգալիորեն մեղմվել է



Նման հետևողական քաղաքականության արդյունքում ԿԲ-ին հաջողվել է որոշ չափով մեղմել գնանկումային դրսևորումները, զգալիորեն նվազեցնել տարեսկզբին առկա բարձր գնաճային սպասումները և երկարաժամկետ շուկայական տոկոսադրույքները՝ միաժամանակ նպաստելով ներքին պահանջարկի որոշ չափով վերականգնմանը և տնտեսության դոլարայնացման մակարդակի նվազեցմանը:


Միևնույն ժամանակ, Կենտրոնական բանկը գնահատում է, որ դրամավարկային պայմանների իրականացված թուլացումը բավարար խթաններ է ստեղծել 2017 թվականին գնանկումային միջավայրի հաղթահարման և կանխատեսվող հորիզոնում գնաճի նպատակի իրագործման համար:

Ֆինանսական շուկայում տոկոսադրույքները 2016 թվականին հիմնականում դրսևորել են Կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքի փոփոխություններին համահունչ վարքագիծ: Միայն տարեվերջին միջբանկային ռեպո տոկոսադրույքը մի որոշ ժամանակ ցածր է եղել քաղաքականության տոկոսադրույքից, ինչը հիմնականում պայմանավորվել է այդ ընթացքում պարտադիր պահուստավորման նվազեցման և բանկերի կապիտալի համալրման արդյունքում ձևավորված իրացվելիու-

թյան ժամանակավոր ավելցուկով *(տե՛ս գծապատկեր 1)*:

2016 թվականին տոկոսադրույքի փոխանցման լծակն առավել արդյունավետ է գործել պետպարտատոմսերի շուկայում, որտեղ, տարվա ընթացքում վերաֆինանսավորման տոկոսադրույքի 2.5 տոկոսային կետով իջեցման և գնաճային սպասումների շարունակական նվազման պարագայում, արձանագրվել է եկամտաբերության միջին հաշվով 4.0 տոկոսային կետով նվազում *(տե՛ս գծապատկեր 3)*:

Գծապատկեր 3. ՊՊ եկամտաբերության կորը ցույց է տալիս, որ տարվա ընթացքում կորի ողջ երկայնքով տոկոսադրույքները զգալի նվազել են



ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

Կենտրոնական բանկի կանխատեսման և հաղաֆականության վերլուծության համակարգի (ԿՔՎՀ) զարգացման ու կատարելագործման արդյունքը կանխատեսումների և քաղաքականության վերլուծության քանակական և որակական հատկանիշների բարելավումն է: Այն օգնում է Կենտրոնական բանկի խորհրդին ճիշտ պատկերացում կազմելու առկա մակրոտնտեսական իրավիճակի մասին և կայացնելու հիմնավոր որոշումներ դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ:

Կանխատեսման և քաղաքականության վերլուծության համակարգի բարելավման աշխատանքները երկարաժամկետ կտրվածքով բաժանվում են երկու շարունակական ուղղությունների.

- ՀՀ տնտեսության առանձնահատկությունների ներառում գործող համակարգում,
- գործող համակարգի կատարելագործում՝ Դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության (ԴՍԸՀ կամ DSGE) մոդելային համակարգին անցում կատարելու միջոցով:

Առաջին ուղղության շրջանակներում 2016 թվականին իրականացվել են հետևյալ հետազոտությունները.

1. Գնաճային սպասումների պատճառահետևանքային կապերի բացահայտում և ԿՔՎ համակարգում ճշգրիտ արտացոլում:
2. Ֆինանսական ճեղքվածքի գնահատում և ԿՔՎ համակարգում ներառում:
3. Պարտքի մակարդակի և ինտերվենցիաների ազդեցությունների ուսումնասիրություն, ռիսկի հավելավճարի ու սպասումների վրա դրանց ազդեցության գնահատում և մոդելային համակարգում ներառում:

Երկրորդ ուղղությունը ներառում է հետևյալ աշխատանքները.

1. Աշխատուժի շուկայի ԴՍԸՀ 2 մոդելի կառուցում ՀՀ տնտեսության առանձնահատկություններով՝ առաջինում ներառելով ոչ ֆորմալ զբաղվածությունը, իսկ երկրորդում՝ արտագաղթը և ՌԴ տնտեսության վրա ազդող բնութագրիչները: ՌԴ տնտեսության բնութագրման օգտագործումը, ըստ էության, կիրառվող արտաքին աշխարհի մոդելի ընդլայնում է՝ ՌԴ տնտեսության ազդեցության ուղիների և չափերի բացահայտման ու գնահատման համար:[2]
2. Արտաքին հատվածի ԴՍԸՀ մոդելի կառուցման ուղղությամբ նախնական աշխատանքներ՝ արտաքին պարտքի և ռիսկի հավելավճարի ներծին մոդելավորմամբ:
3. Նախնական աշխատանքներ՝ իրական հատվածի վարքագծի ԴՍԸՀ 2 մոդելների կառուցման համար. առաջինը՝ հետերոգեն ֆիրմաների պարագայում օպտիմալ դրամավարկային քաղաքականության ընտրության, երկրորդը՝ ներդրումների և կապիտալի կուտակման խնդիրների ուսումնասիրության ու հավասարակշիռ տնտեսական աճի մակարդակի բացահայտման նպատակով:

Այս երկու ուղղություններից բացի, կատարվել են նաև առկա **մոդելային համակարգի ծրագրային կատարելագործման** զգալի աշխատանքներ՝ **տվյալների բազայի** համակարգման և տվյալների հավաքագրման ավտոմատացման, ամբողջ մոդելային համակարգի՝ նոր, ավելի ժամանակակից ծրագրային լուծման անցնելու և հաշվետվությունների համակարգի կատարելագործման համար: Այս վերջին աշխատանքների գործնական ներդրումն ակնկալվում է ավարտել 2017 թվականին:

Վիճակագրություն

«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով ամրագրված խնդիրներն իրագործելու նպատակով Կենտրոնական բանկը հավաքագրում, ամփոփում և հրապարակում է դրամավարկային, ֆինանսական հատվածի և արտաքին հաշիվների վիճակագրությունը, որն օգտագործվում է Կենտրոնական բանկի կողմից դրամավարկային քաղաքականության մշակման, ֆինանսական կայունության ապահովման, վճարահաշվարկային համակարգի զարգացման, ֆինանսական վերահսկողության և այլ գործառույթների իրականացման ընթացքում: Կենտրոնական բանկի կողմից հավաքագրվող և հրապարակվող վիճակագրությունն օգտագործվում է նաև պետական գերատեսչությունների, ֆինանսական շուկայի մասնակիցների, միջազգային կազմակերպությունների, զանգվածային լրատվության միջոցների և հանրության կողմից:

2 «Labor market frictions in the estimated DSGE model for Armenia»՝ https://www.cba.am/EN/panalyticalmaterialsresearches/Labor_market_model_DSGE.pdf, «Migration in the estimated new Keynsian DSGE model for Armenia and Russia»՝ https://www.cba.am/EN/panalyticalmaterialsresearches/Migration_DSGE_CBA.pdf

2016 թվականին Կենտրոնական բանկը հանրությանը տրամադրել է ժամանակին ու արժանահավատ վիճակագրական տվյալներ, իրականացրել է հրապարակվող վիճակագրական տվյալների շրջանակների ընդլայնման և հասանելիության ապահովման, հավաքագրվող վիճակագրության մեթոդաբանության կատարելագործման ու միջազգային չափորոշիչներին դրանց համապատասխանեցման աշխատանքներ[3]:

Նոր տվյալների հավաքագրում և հաշվարկ

2016 թվականին ներդրվել և թեստավորման փուլում է բանկերից մանրամասն տվյալների ստացման և մշակման նոր համակարգը: Համակարգի ներդրման արդյունքում Կենտրոնական բանկի տվյալների բազան կհարստանա ավելի քան 100 նոր ցուցանիշներով:

Կենտրոնական բանկին հաշվետու սուբյեկտների կողմից ներկայացվող տեղեկատվության ընդունման գործընթացի կատարելագործման և ստացվող տվյալների որակի բարելավման նպատակով 2016 թվականին սկսվել և թեստավորման փուլում է ADICS (Automated Data Input and Crosscheck System) տվյալների ավտոմատ ընդունման և խաչաձև ստուգումների իրականացման փորձնական ծրագիրը:

Վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշվի և միջազգային ներդրումային դիրքի վիճակագրության բարելավման նպատակով սկսվել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունից ոչ ֆինանսական կազմակերպությունների օտարերկրյա ներդրումների վերաբերյալ լրացուցիչ տվյալների ստացումը:

Սպառողական գների ինդեքսի որակի բարձրացման նպատակով ԱՎԾ հետ ձեռք է բերվել համաձայնություն սպառողական զամբյուղի կազմում ներառված ֆինանսական ծառայությունների տեսակարար կշիռները Կենտրոնական բանկի կողմից հաշվարկելու և ԱՎԾ փոխանցելու շուրջ:

Կենտրոնական բանկի խնդիրների լուծման, մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսման արդյունավետության և օպերատիվության բարձրացման նպատակով նախաձեռնվել են տնտեսության իրական հատվածին առնչվող, այսպես կոչված, «մեծ տվյալների» (Big Data) հավաքագրման և մշակման աշխատանքներ:

Կատարվել են Վարկային ռեգիստրի նոր տեղեկատվական համակարգի մշակման և ներդրման աշխատանքներ՝ 2016 թվականի վերջին արդեն իսկ ներդրվել է համակարգի թեստային միջավայրը:

3 ՀՀ կենտրոնական բանկը վիճակագրական տվյալները հրապարակում է ԿԲ տնային էջի «Վիճակագրություն» բաժնում (www.cba.am):


03 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

2016 թվականին ՀՀ ֆինանսական համակարգում արձանագրվել են կայուն զարգացման միտումներ՝ ապահովվել է հիմնական հաբվեկշռային ցուցանիշների զգալի աճ: Ֆինանսական համակարգի ակտիվների ու ՀՆԱ-ի հարաբերակցության և տնտեսությանը տրամադրված վարկերի ու ՀՆԱ-ի հարաբերակցության ցուցանիշները նախորդ տարվա համեմատ ավելացել են համապատասխանաբար 12.3 և 6.6 տոկոսային կետով՝ կազմելով 89.1% և 50.0%:

Ֆինանսական համակարգի խոշորագույն մասնակիցը բանկային համակարգն է, որին բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների 88.4%-ը *(տե՛ս գծապատկեր 4):*


Գծապատկեր 4. Ֆինանսական համակարգի ակտիվների կառուցվածքը




2016 թ. բանկային համակարգի ակտիվներն ավելացել են 15.6%-ով, ընդհանուր կապիտալը՝ 27.1%-ով, իսկ պարտավորությունները՝ 13.5%-ով՝ տարեվերջին կազմելով համապատասխանաբար 3 տրլն 994.5 մլրդ դրամ, 653.6 մլրդ դրամ և 3 տրլն 341.0 մլրդ դրամ: Տնտեսությանը տրամադրված վարկերն ավելացել են 15.4%-ով և տարեվերջին կազմել 2 տրլն 319.5 մլրդ դրամ: ՀՀ ԿԲ ներկայացվող վերահսկողական հաշվետվությունների համաձայն՝ բանկային համակարգն աշխատել է շահույթով. ըստ ակտիվների (RoA) և ըստ կապիտալի (RoE) շահութաբերության ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 0.9% և 5.7%:

Բանկային համակարգի կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքները տարվա ընթացքում ցուցաբերել են նվազման միտում:

Գծապատկեր 5. Իրավաբանական անձանց տրամադրված վարկերի տոկոսադրույքը




Գծապատկեր 6. Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի տոկոսադրույքը



Բանկային համակարգի կայունությունը բնութագրող կապիտալի համարժեքության և իրացվելիության ցուցանիշները բարելավվել են, մասնավորապես՝ կապիտալի համարժեքությունն ավելացել է 3.8 տոկոսային կետով և կազմել 20.0% (նվազագույն սահմանաչափը՝ 12.0%), ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվային ցուցանիշներն ավելացել են 4.4 և 28.4 տոկոսային կետով և կազմել համապատասխանաբար 32.5% և 170.8% (նվազագույն սահմանաչա-փերը՝ 15.0% և 60.0%): Բանկային համակարգի ակտիվների ու ՀՆԱ-ի հարաբերակցության և տնտեսությանը տրամադրված վարկերի ու ՀՆԱ-ի հարաբերակցության ցուցանիշները նախորդ տարվա համեմատ ավելացել են համապատասխանաբար 10.3 և 6.0 տոկոսային կետով՝ կազմելով 78.8% և 45.8% *(տե՛ս գծապատկեր 7):*

Չաշխատող վարկերի («հսկվող», «ոչ ստանդարտ», «կասկածելի» ռիսկային դասեր) տեսակարար կշիռն ընդհանուր վարկերում տարվա ընթացքում նվազել է 1.1 տոկոսային կետով և կազմել 6.7%:


Գծապատկեր 7. Բանկային համակարգի ֆինանսական միջնորդության մակարդակը



Աճել են նաև ֆինանսական համակարգի այլ մասնակիցների հիմնական ցուցանիշները: Մասնավորապես՝ **վարկային կազմակերպությունների** ընդհանուր կապիտալը տարվա ընթացքում ավելացել է 37.7%-ով, պարտավորությունները՝ 19.0%-ով, ակտիվները՝ 27.0%-ով: **Ապահովագրական համակարգի** ընդհանուր կապիտալն ավելացել է 16.0%-ով, պարտավորությունները՝ 11.8%-ով, ակտիվները՝ 13.5%-ով: **Ներդրումային ընկերությունների** ընդհանուր կապիտալն ավելացել է 56.7%-ով, պարտավորությունները՝ 43.1%-ով, ակտիվները՝ 45.1%-ով: Ակտիվների կառավարիչների կողմից կառավարվող պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվները կրկնապատկվել են և կազմել 63 մլրդ դրամ:

Տարեվերջի դրությամբ կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվներ/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 1.2%:

Գծապատկեր 8. Կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքի շարժը



Ֆինանսական համակարգի կայունության ապահովման, ֆինանսական հաստատությունների գործունեության ռիսկայնության մակարդակի գնահատման, գործունեության իրավական դաշտի համապատասխանության, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի, ֆինանսական համակարգի սպառողների պաշտպանության և այլ նպատակներով 2016 թվականին Կենտրոնական բանկը շարունակել է վերջիններիս նկատմամբ իրականացնել վերահսկողություն (փաստաթղթային և տեղերում):

Փաստաթղթային վերահսկողության միջոցով ֆինանսական ինստիտուտներից ստացված հաշվետվությունների հիման վրա Կենտրոնական բանկն իրականացնում է վերջիններիս ֆինանսական գործունեության մշտադիտարկում, ֆինանսական վիճակի վերաբերյալ վերլուծություններ, բացահայտում է անթույլատրելի ռիսկերը, գնահատում գործունեության համապատասխանությունն իրավական դաշտին և անհրաժեշտության դեպքում՝ արագ արձագանքում:

Տեղերում իրականացվում են բոլոր ուղղություններով (համալիր ստուգումներ) և նպատակային ստուգումներ (կոնկրետ գործունեության ստուգում): 2016 թվականին շարունակվել են ֆինանսական կազմակերպությունների ռիսկերի բացահայտման, գործարար վարվելակերպի, հրապարակվող տեղեկատվության արժանահավատության և այլ վերահսկողական ստուգումները: 2016 թվականին Կենտրոնական բանկն իրականացրել է 190 «տեղերում ստուգումներ», մասնավորապես՝

- բանկերում բոլոր ուղղություններով՝ 1, նպատակային՝ 10 ստուգում,
- վարկային կազմակերպություններում բոլոր ուղղություններով՝ 4 ստուգում,

- ապահովագրական ընկերություններում բոլոր ուղղություններով՝ 2, նպատակային՝ 6, ապահովագրական գործակալների՝ 400 ստուգում,
- ներդրումային ընկերություններում բոլոր ուղղություններով՝ 4 ստուգում,
- ֆինանսական շուկայի այլ մասնակիցների՝ 163 ստուգում (արտարժույթի փոխանակման կետեր, գրավատներ, վճարահաշվարկային կազմակերպություններ և այլն):

Վերահսկողության արդյունքում բացահայտված խախտումները վերացվել են, և ձեռնարկվել են միջոցներ՝ ապագայում նույնանման խախտումները կանխելու նպատակով:

Ֆինանսական համակարգի վերահսկողության կատարելագործման շրջանակում իրականացվել են մի շարք գործողություններ, մասնավորապես.

- Ֆինանսական շուկաների զարգացումները հանգեցրել են կանոնների վրա հիմնված վերահսկողական մոդելից ռիսկերի վրա հիմնված և ապագային միտված վերահսկողության մոտեցմանը: 2016 թվականին ՀՀ-ում կատարվել են ռիսկերի վրա հիմնված մոտեցման հետագա խորացման և վերջնական ներդրման աշխատանքներ: Իրականացվող բարեփոխումներն ուղղված են վերահսկողական ռեսուրսների օպտիմալ բաշխմանը և վերահսկողական գործընթացների արդյունավետության բարձրացմանը:
- Ֆինանսական կայունության ապահովման և զարգացման համատեքստում 2016 թ. ՀՀ կենտրոնական բանկը Համաշխարհային բանկի՝ Վիեննայի ֆինանսական ոլորտի խորհրդատվական կենտրոնի (FinSac) հետ համատեղ իրականացրել է **ճգնաժամային իրավիճակի սիմուլյացիայի վարժություն**, որում ներգրավվել են ՀՀ կենտրոնական բանկի ղեկավար անձնակազմը, ինչպես նաև մի շարք ստորաբաժանումների աշխատակիցներ: Վարժության նպատակն է եղել բացահայտել ֆինանսական ճգնաժամերի կառավարման գործընթացներում հնարավոր հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, ինչպես նաև բարձրացնել մասնակիցների պատրաստվածության մակարդակը:

Ֆինանսական համակարգի կարգավորման դաշտում իրականացվել են մի շարք փոփոխություններ, մասնավորապես.

2016 թվականին փոփոխություններ ու լրացումներ են կատարվել «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», ««Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին»,

««Սնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», ««Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին», ««Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքներում:

Նշված օրենքներում փոփոխությունները նպատակ ունեն.

1. Վերացնելու գրավի հետ կապված այն խնդիրները, որոնք խոչընդոտ են ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների համար:
2. Խթանելու Հայաստանում ածանցյալ և այլ ֆինանսական գործիքների շուկայի զարգացումը:
3. Բարեփոխելու Արժեթղթերի շուկայի չարաշահումների վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը՝ նպատակ ունենալով շուկան դարձնել առավել թափանցիկ և պաշտպանված, համապատասխանեցնել Ëĉć-երկրßներդրողների ակնկալիքներին, չարաշահումների համար սահմանել համարժեք պատասխանատվության միջոցներ, ապահովել արդյունավետ միջազգային համագործակցություն:
4. Կանխարգելելու ֆինանսական բուրգերի կազմակերպումը, դրա ղեկավարումը և դրանում անձանց ներգրավումը:

Փոփոխություններ են կատարվել նաև մի շարք ենթաօրենսդրական ակտերում, որոնցից հատկանշական են.

Բազել 3-ով առաջարկվող մի շարք պահանջների ներդրման նպատակով ՀՀ կենտրոնական բանկը հանդես է եկել օրենսդրական նախաձեռնությամբ, որով «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների նախագծով նախատեսվել է Բազել 3-ով սահմանված բուֆերների, լևերիջի նորմատիվի, Կենտրոնական բանկի կողմից մակրոպրուդենցիալ քաղաքականության որոշակի գործիքների, մասնավորապես՝ հաճախակի պարտավորության և եկամտի (DTI), պահանջի և գրավի (LTV) հարաբերակցությունների սահմանման հնարավորություն:

Բանկերում ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով շարունակվել են Բազել 3-ի ներդրման հետ կապված աշխատանքները, մասնավորապես՝ իրացվելիության ռիսկի կառավարման բազելյան նոր մոտեցումների՝ իրացվելիության ծածկույթի գործակցի (LCR) և զուտ կայուն ֆինանսավորման գործակցի (NSFR) ներդրման ուղղությամբ: Այդ նպատակով, սկսած 2015 թվականի օգոստոսից, բանկերն ամսական պարբերականությամբ հաշվետվություններ են ներկայացնում Կենտրոնական բանկ: Դրանք հնարավորություն են տալիս Կենտրոնական բանկին գնահատելու նորմատիվների ներդրման նպատակահարմարությունը, ինչպես նաև բացահայտելու ՀՀ բանկային համակարգին բնորոշ խնդիրները և տալու համապատասխան լուծումներ:

2016 թվականին Կենտրոնական բանկի կողմից մշակվել և ընդունվել են համախմբված վերահսկողության իրականացման համար անհրաժեշտ

ենթաօրենսդրական ակտեր, որոնցով սահմանվում են ֆինանսական խմբերի ճանաչման և ապաճանաչման ընթացակարգերը, վերջիններիս նկատմամբ կիրառվող նորմատիվային պահանջները, ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները, ինչպես նաև վերջիններիս կողմից ներկայացվող հաշվետվությունները:

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2016 թվականին Կենտրոնական բանկը շարունակել է վճարահաշվարկային համակարգերի զարգացմանն ու հուսալիության ապահովմանը, անկանխիկ վճարումների զարգացմանը և վճարահաշվարկային համակարգերի կարգավորման դաշտի կատարելագործմանը ուղղված աշխատանքները:

Էլեկտրոնային վճարումների համակարգ

2016 թվականին Կենտրոնական բանկը հաստատել է «Էլեկտրոնային վճարումների» համակարգի կանոնները՝ համակարգի մասնակիցների համար հստակեցնելով վճարումների իրականացմանը ներկայացվող պահանջները և գործընթացները, համակարգի մասնակիցների և օպերատորի իրավունքները և պարտականությունները: Միևնույն ժամանակ, վերանայվել են համակարգում օգտագործվող էլեկտրոնային հաղորդագրությունների ձևաչափերը՝ հստակեցնելով վճարումների կատարման համար անհրաժեշտ տեղեկատվությունը, որի արդյունքում բարձրացել է վճարումների իրականացման արդյունավետությունը:

Կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական ծավալը հաշվետու տարում, նախորդ տարվա համեմատ, նվազել է 4%-ով՝ կազմելով 60.4 մլրդ ՀՀ դրամ, մինչդեռ քանակն ավելացել է 10%-ով՝ կազմելով 15352 փոխանցում: Արդյունքում՝ մեկ էլեկտրոնային փոխանցման միջին ծավալը կազմել է մոտ 4 մլն ՀՀ դրամ:

Արժեթղթերի հաշվարկային համակարգեր

2016 թվականին Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգում ներդրվել է ISO 6166 ստանդարտը, որի արդյունքում ՀՀ պետական գանձապետական պարտատոմսերին շնորհվել է արժեթղթերի ISIN միջազգային ծածկագիրը: Պետական գանձապետական պարտատոմսերին ISIN ծածկագրի շնորհումը հնարավորություն է տալիս պետական պարտատոմսերը շրջանառելու միջազգային դեպո-

զիտար համակարգերում և բարձրացնում է դրանց գրավչությունը արտասահմանյան ներդրողների համար:

Հայաստանի Հանրապետությունում արժեթղթերով գործառնությունների իրականացումը օտարերկրյա ներդրողների համար ավելի հարմարավետ ու արագ դարձնելու նպատակով (Քլիրսթրիմ) բանկային խմբի հետ կնքվել են համապատասխան պայմանագրեր, որոնց միջոցով կարգավորում են դրամական միջոցներով և արժեթղթերով հաշվարկների իրականացման ընթացակարգերը:

Դրամական փոխանցումների իրականացման համակարգեր

2016 թ. վերջի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում վճարահաշվարկային համակարգի ստեղծման և գործունեության իրականացման թույլտվություն է ունեցել դրամական փոխանցումներ իրականացնող երկու հայաստանյան համակարգ: 2016 թվականին ակտիվացել է նաև արտասահմանյան վճարային համակարգերի գործունեությունը միջազգային դրամական փոխանցումների ոլորտում: Մասնավորապես՝ 2016 թվականի վերջի դրությամբ ՀՀ բանկերն ու վճարահաշվարկային կազմակերպությունները անդամակցել են 14 արտասահմանյան դրամական փոխանցումների համակարգերի:


Կենտրոնական բանկը, կարևորելով դրամական փոխանցումների դերը ՀՀ ֆինանսական շուկայում, 2016 թվականին շարունակել է դրամական փոխանցումների հայաստանյան միասնական համակարգի՝ ԱՐՈՒՍ-ի նախագծմանն ու ներդրմանն ուղղված աշխատանքները, մասնավորապես՝ մրցույթով ընտրվել է այն կազմակերպությունը, որը մշակելու է համակարգի ծրագրային ապահովումը: ԱՐՈՒՍ համակարգի ներդրմամբ հնարավորություն կստեղծվի առավել արդյունավետ կառավարելու Հայաստանի Հանրապետությունում գործող արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերի հետ կապված ռիսկերը, ինչն էլ կնպաստի ՀՀ ֆինանսական կայունության ամրապնդմանը:

Վճարային գործիքներ

2016 թ. վերջի դրությամբ հաճախորդներին վճարային քարտեր են տրամադրել և սպասարկել ՀՀ տարածքում գործող 15 առևտրային բանկեր: Ընդ որում՝ բոլոր բանկերն էլ անդամակցում են «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգին:


Շրջանառության մեջ գտնվող քարտերի ընդհանուր քանակը կազմել է 1.5 մլն *(տե՛ս գծապատկեր 9):*

Գծապատկեր 9. Շրջանառության մեջ գտնվող վճարային քարտերի քանակը 2007-2016 թթ.



2016 թվականին ՀՀ տարածքում վճարային քարտերով իրականացվել է 1 տրլն 381.8 մլրդ դրամի գործառնություն: Քարտերով անկանխիկ վճարումների ծավալն ավելացել է 29.6%-ով և կազմել 208.1 մլրդ դրամ: Նշված անկանխիկ գործառնությունների ծավալում ինտերնետ միջավայրում իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 84.6 մլրդ դրամ (այդ թվում՝ էլեկտրոնային առևտուր՝ 23.0 մլրդ դրամ, քարտից քարտ փոխանցումներ՝ 59.4 մլրդ դրամ): Ընդ որում՝ քարտերով իրականացված անկանխիկ վճարումների (այդ թվում՝ ինտերնետ գործառնությունները) տեսակարար կշիռն ընդհանուր քարտային գործառնություններում 2015 թվականի համեմատ աճել է 3.3 տոկոսային կետով և կազմել 15.1% *(տե՛ս գծապատկեր 10)*:

Գծապատկեր 10. Հայաստանում վճարային ֆարեերով իրականացված գործառնություններ



2016 թվականին կատարելագործվել է վճարային գործիքների և վճարահաշվարկային ծառայությունների իրավական դաշտը: Մասնավորապես՝ վերանայվել են վճարահաշվարկային գործառնությունների (այդ թվում՝ քարտերի և էլեկտրոնային փողերի կիրառմամբ իրականացվող գործառնությունների) կատարման ժամանակ օգտագործվող վճարահաշվարկային փաստաթղթերի բովանդակությանը ներկայացվող պահանջները: Իրականացված փոփոխությունները բանկերի և վճարահաշվարկային կազմակերպությունների հաճախորդներին հնարավորություն են տալիս վճարում, փոխանցում, կանխիկի մուտքագրում կամ ելքագրում իրականացնելիս տվյալ գործարքների դիմաց ստանալու այնպիսի փաստաթուղթ, որը կլինի ամբողջական, պարզ և կպարունակի բոլոր այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են կատարված գործարքը հավաստելու համար:

Միջազգային համագործակցություն

ՀՀ վճարահաշվարկային բնագավառի զարգացման և հուսալիության ապահովման գործում կարևորելով միջազգային համագործակցության դերը՝ Կենտրոնական բանկը 2016 թվականին միացել է Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կենտրոնական բանկերի միջև կնքված՝ Ազգային վճարային համակարգերի զարգացման համակարգման գծով աշխատանքային խմբի ստեղծման մասին համաձայնագրին: Աշխատանքային խմբի ստեղծման և գործունեության նպատակն է ձևավորել ազգային վճարային համակարգերի զարգացման համաձայնեցված մոտեցումներ՝ հաշվի առնելով միջազգային չափորոշիչները:

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱ

Կենտրոնական բանկը 2016 թվականին ակտիվ աշխատանքներ է իրականացրել նոր ֆինանսական գործիքների զարգացման ուղղությամբ: Մասնավորապես՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հետ համագործակցությամբ կատարված բարեփոխումները կխթանեն արժութային և այլ ռիսկերի զսպման գործիքների՝ ածանցյալ ֆինանսական գործիքների զարգացումը: Նշենք, որ 2016 թվականի հոկտեմբերի 27-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել են ածանցյալների շուկայի բարեփոխմանը նպատակաուղղված օրենքների նախագծերը: Ի լրումն, ներկա փուլում աշխատանքներ են իրականացվում նաև ռեպո գործիքների և դրամական շուկայի զարգացման շրջանակներում, որոնք առանցքային նախապայմաններ են ածանցյալ ֆինանսական գործիքների արդյունավետ ներդրման համար:

Համագործակցության միջոցառումների ցանկում առանձնանում են նաև արժեթղթավորման մեխանիզմի գործարկման, ակտիվներով ապահովված արժեթղթերի և հիփոթեքային պարտատոմսերի թողարկման խթանման աշխատանքները: Այս միջոցառումները կարևորվում են ՀՀ-ում գործարարության զարգացման և ներդրումների խրախուսման առումով:

04

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՅԼ ԽՆԴԻՐՆԵՐ


ԱՐԺՈՒՅԹԻ ԹՈՂԱՐԿՈՒՄ, ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Ազգային արժույթի շրջանառության կարգավորման ոլորտում Կենտրոնական բանկի գործունեությունն ուղղված է եղել տնտեսության մեջ կանխիկ դրամի նկատմամբ ձևավորվող պահանջարկի բավարարմանը՝ ըստ անհրաժեշտ ծավալների, կառուցվածքի, որակի և ժամկետների: Կանխիկ դրամի շրջանառության կազմակերպումն ու կարգավորումը իրականացվել է՝ ապահովելով հուսալիության, հարմարավետության, օպերատիվության և անընդհատության սկզբունքները:

Հանրապետության մարզերում և ԼՂՀ-ում իր հաճախորդների դրամարկղային սպասարկումը Կենտրոնական բանկն իրականացրել է Երևանում գտնվող գլխավոր գրասենյակի դրամարկղի և Դիլիջանի, Գորիսի ու Սյունիքի տարածքային դրամարկղային կենտրոնների (ՏԴԿ) միջոցով:


Կենտրոնական բանկի դրամարկղային շրջանառության ծավալը նախորդ տարվա համեմատ աճել է 1.1%-ով: ՏԴԿ-ների միջոցով ապահովվել է Կենտրոնական բանկի դրամարկղային շրջանառության 20.3%-ը: Ինչպես և նախորդ տարիներին, ՏԴԿ-ների միջոցով առավելապես իրականացվել են դրամի ելքագրման գործառնություններ և դրամարկղային ելքերը կազմել են ՏԴԿ-ների շրջանառության 79.2%-ը *(տե՛ս գծապատկեր 11):*

Գծապատկեր 11. Կենտրոնական բանկի դրամարկղային շրջանառությունը 2016 թվականին



Կենտրոնական բանկից դուրս կանխիկ դրամի ծավալը տարվա ընթացքում ավելացել է 10.1%-ով, իսկ տեսակային կառուցվածքում էական փոփոխություններ չեն եղել: Շրջանառության մեջ առավել մեծ չափով ավելացել է 20 000 և 100 000 դրամ անվանական արժեքներով թղթադրամների ծավալը:

Գծապատկեր 12. Կենտրոնական բանկից դուրս գտնվող կանխիկ դրամի տեսակային կառուցվածքը 31.12.2016 թ. դրությամբ



Դրամանենգության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման ռազմավարական խնդրի շրջանակում շարունակվել են «Կենտրոնական բանկում փորձաքննություն անցած դրամանիշերի» նոր տեղեկատվական համակարգի մշակման աշխատանքները: Համակարգը հնարավորություն կտա իրականացնելու տվյալների լիարժեք գրանցում, ստանալու առավելագույն և ճշգրիտ տեղեկատվություն փորձաքննության ենթարկված դրամանիշերի վերաբերյալ, ինչպես նաև կատարելու վերլուծական աշխատանքներ: Շարունակվել է համագործակցությունը ՀՀ իրավապահ մարմինների հետ, որի շրջանակում իրականացվել են վերլուծական աշխատանքներ Կենտրոնական բանկի կողմից հայտնաբերված կեղծ դրամանիշերի պատրաստման եղանակների, կատարման ձևերի և խմբավորման վերաբերյալ: Կենտրոնական բանկը վերազինվել է դրամանիշերի փորձաքննության համար անհրաժեշտ նորագույն տեխնիկայով:

Իրականացվել են Հայաստանի դրամաշրջանառության և ազգային դրամների պատմության լուսաբանման աշխատանքներ, պատրաստվել և հրապարակվել են դրամագիտության վերաբերյալ նյութեր:

Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում կազմակերպվել է մշտական դրամագիտական ցուցահանդես՝ նվիրված Հայաստանի դրամաշրջանառության պատմությանը:

Հասարակության շրջանում Հայաստանի ազգային, պատմական, մշակութային, հոգևոր արժեքների տարածման, ինչպես նաև հավաքորդների դրամագիտական պահանջարկի բավարարման նպատակով Կենտրոնական բանկը թողարկել է թանկարժեք մետաղներից պատրաստված հուշադրամներ՝ նվիրված հայ անվանի անհատների և նշանավոր իրադարձությունների՝ 2016 թվականին նշվող հոբելյաններին:

Իր դրամագիտական թողարկումներով Կենտրոնական բանկը մասնակցել է նաև միջազգային մրցույթների: Ռուսաստանում կայացած «Դրամների համաստեղություն - 2016» միջազգային մրցույթում «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելից» հուշադրամը «Տարվա հուշադրամ» անվանակարգում արժանացել է 1-ին մրցանակի:

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

2016 թվականին շարունակվել են միջազգային լավագույն փորձին համապատասխանող օրենսդրության ներդրմանը, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (այսուհետ՝ ՓԼ/ԱՖ) հնարավոր կասկածներ պարունակող ազդակների վերլուծությունների իրականացմանը, միջազգային և ներպետական համագործակցության ամրապնդմանն ուղղված աշխատանքները: Մեծ ուշադրություն է դարձվել նաև ինչպես հաշվետվություն տրամադրող անձանց, այնպես էլ Կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի (այսուհետ՝ ՖԴԿ) և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգում ներառված այլ մարմինների աշխատակիցների՝ ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում գիտելիքների զարգացմանը:

Դեկտեմբեր ամսին Եվրոպայի խորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի լիագումար նիստում ներկայացվել է ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի 5-րդ փուլի փոխադարձ գնահատման առաջընթացի միջանկյալ հաշվետվությունը, որտեղ, մասնավորապես, նշվել է զանգվածային ոչնչացման զենքի (այսուհետ՝ ԶՈՋ) տարածման ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ֆինանսական պատժամիջոցների կիրառման հետ կապված պարտականությունները «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով նախատեսելու մասին: Եվրոպայի խորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախումբը բարձր է գնահատել բացահայտված խնդիրների վերացման նպատակով օրենսդրական փոփոխությունների կատարման ուղղությամբ ձեռնարկված քայլերը:

Միջազգային համագործակցության շրջանակներում կատարված աշխատանքներից անհրաժեշտ է նշել նաև Վարշավայի կոնվենցիայի կողմերի համաժողովի 2016 թվականի հոկտեմբեր ամսին կայացած 8-րդ հերթական լիագումար նիստում Հայաստանի Հանրապետության՝ վերոհիշյալ կոնվենցիային համապատասխանության հաշվետվության քննարկումը և հաստատումը:

2016 թվականին ՀՀ Նախագահի 2002 թվականի մարտի 21-ի թիվ ՆԿ-1075 կարգադրությամբ ստեղծված «Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման, ինչպես նաև զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ Միջգերատեսչական հանձնաժողով) կողմից հաստատվել են «ՀՀ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման, ինչպես նաև զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի 2016-2018 թվականների ռազմավարությունը»՝ դրա սկզբունքների և նպատակների իրագործմանն ուղղված միջոցառումների հետ մեկտեղ, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համակարգի 5-րդ փուլի գնահատման հաշվետվությամբ վեր հանված խնդիրների լուծման» միջոցառումների

ծրագիրը: Վերջինը ներառում է «ՖԱԹՖ-ի հանձնարարականներին տեխնիկական համապատասխանության և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգերի արդյունավետության գնահատման» մեթոդաբանությամբ նախատեսված 11 անմիջական արդյունքների առնչությամբ այդ խնդիրների վերացմանն ուղղված հանձնարարականները, ՀՀ գերատեսչությունների կողմից իրականացվելիք միջոցառումները, կատարման ժամկետները և պատասխանատու գերատեսչությունները:

Օրենսդրական զարգացումները

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակում, որոնք կապված են Միացյալ ազգերի կազմակերպությանն ու Եվրոպայի խորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբին անդամակցության, ինչպես նաև վերջինի կողմից ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի 5-րդ փուլի գնահատման հաշվետվությամբ (այսուհետ՝ Գնահատման հաշվետվություն) տրված հանձնարարականների հետ, մշակվել և շրջանառվել է ««Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», և մի շարք այլ օրենքներում փոփոխություններ և լրացում նախատեսող Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը, որով առաջարկվում է նախատեսել զանգվածային ոչնչացման զենքի (այսուհետ՝ ՋՈՋ) տարածման հետ կապված անձանց պատկանող գույքի սառեցման պահանջ, սահմանափակել անշարժ գույքի առուվաճառքի գործարքներով նախատեսված շեմից բարձր գործարքների դեպքում այդ (ավել) չափով կանխիկ եղանակով վճարումը, ԱՖ և ՋՈՋ տարածման հասկացությունները համապատասխանեցնել միջազգային առկա պահանջներին և այլն:

2016 թվականի դեկտեմբերի 16-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել են ՖԴԿ նախաձեռնությամբ մշակված՝ ՓԼ նախորդող հանցագործություն հանդիսացող ֆինանսական բուրգ կազմակերպելը, ղեկավարելը, ստեղծելը քրեականացնող «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքը (ՀՕ-216-Ն) և նշված հանցագործության քննչական ենթակայության հարցը կարգավորող «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքը (ՀՕ-217-Ն):

Կենտրոնական բանկի նախագահի 2016 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 1/711-Ա որոշմամբ հաստատվել է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման բարձր ռիսկի և կասկածելիության չափանիշների վերաբերյալ ուղեցույցը»:

Կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 143-Ն որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունվարի 27-ի թիվ 23-Ն որոշումը, և հաստատվել են ՀՀ գլխավոր դատախազության, Արդարադատության նախարարության, Ֆինանսների նախարարության, Քննչական կոմիտեի, Հատուկ քննչական ծառայության, Կառավարությանն առընթեր ոստիկանության, ազգային անվտանգության ծառայության, պետական եկամուտների

կոմիտեի, Արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության, դատական դեպարտամենտի կողմից Կենտրոնական բանկին տրամադրվող վիճակագրության բովանդակությունը, ձևը, տրամադրման կարգը և ժամկետները:

Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ փոփոխություններ են կատարվել, որոնցով հստակեցվել են իրավաբանական անձի՝ իրական շահառուի վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու դեպքերը, ինչպես նաև հայտարարության օրինակելի ձևը: Մասնավորապես՝ հիմք ընդունելով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի և ՖԱԹՖ հանձնարարականների պահանջները, իրական շահառուի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու պարտականությունը տարածվել է բոլոր իրավաբանական անձանց վրա՝ անկախ կազմակերպաիրավական ձևից:

Կատարված վերլուծությունները և դրանց արդյունքները

2016 թվականին ՖԴԿ-ն շարունակել է իրականացնել ՓԼ/ԱՖ հնարավոր տարրեր պարունակող բազմաբնույթ ազդակների վերլուծություններ: Կատարված վերլուծությունների արդյունքներով ՓԼ/ԱՖ վարկածների առաջադրմամբ համապատասխան տեղեկացումներ են ուղարկվել ինչպես իրավապահ մարմիններին, այնպես էլ օտարերկրյա ֆինանսական հետախուզության մարմիններին (այսուհետ՝ ՖՀՄ): Վերլուծություններում հաճախակի հանդիպող սխեմաներից կարելի է առանձնացնել հետևյալները.

- Խարդախության տարատեսակ սխեմաներ, այդ թվում՝
  - Կեղծ քարտերի, արտասահմանյան բանկերի կողմից թողարկված քարտերի գողացված տվյալների ապօրինի օգտագործումներ,
  - Զանգվածային մարքեթինգի տարբեր մոդելների կիրառմամբ հանցավոր ճանապարհով ստացված միջոցների օրինականացման սխեմաներ,
  - Ֆինանսական բուրգին բնորոշ հատկանիշներ պարունակող գործառնություններ,
- Չլիցենզավորված ֆինանսական միջնորդային ծառայությունների մատուցման փորձեր,
- Հնարավոր հարկային պարտավորություններից խուսափելու, ապօրինի ձեռնարկատիրություն իրականացնելու, տնտեսական գործունեության ծավալները թաքցնելու միտում պարունակող ֆինանսական գործարքներ,
- ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված տիպաբանություններով նկարագրված սխեմաներին համապատասխանող այլ դեպքեր:

ՖԴԿ կողմից ՓԼ/ԱՖ ռիսկերի զսպման նպատակով շարունակվել են միջոցառումներ իրականացվել ՀՀ բանկային համակարգի հնարավոր օգտագործման միջոցով անհայտ ծագում ունեցող գումարների՝ մի երկրից մյուսը տեղաշարժման փորձերը կանխելու ուղղությամբ:

Իրականացված վերլուծությունների արդյունքում, փողերի լվացման վարկածով 2016 թվականին իրավապահ մարմիններին տրամադրված տեղեկացումների, ՖԴԿ կողմից իրավապահ մարմիններից խնդրարկված և իրավապահ մարմինների կողմից ՖԴԿ-ից խնդրարկված տեղեկատվության, ինչպես նաև ՓԼ հանցագործությամբ հարուցված քրեական գործերի վերաբերյալ կազմված վիճակագրությունը ներկայացվել է աղյուսակում:

	2012 թ.	2013 թ.	2014 թ.	2015 թ.	2016 թ.	Ընդամենը
ՖԴԿ կողմից տեղեկացումներ իրավապահ մարմիններին	11	25	28	31	34	129
ՖԴԿ կողմից իրավապահ մարմիններից խնդրարկված տեղեկատվություն	11	17	17	9	11	65
Իրավապահ մարմինների կողմից ՖԴԿ-ից խնդրարկված տեղեկատվություն	61	36	66	36	36	235
Հարուցված քրեական գործեր	9	10	9	4	5	37
Կայացված մեղադրական դատավճիռներ	2	2	1	0	0	5

ՖԴԿ-ն շարունակել է օտարերկրյա ՖՀՄ-ների հետ համագործակցությունը, որի շրջանակներում 2016 թվականի ընթացքում ստացել է 26 և ուղարկել 20 հարցում:

Ուսուցում և խորհրդատվություն

2016 թ. ՖԴԿ կողմից կազմակերպվել և անցկացվել են մի շարք սեմինար-քննարկումներ ֆինանսական և ոչ ֆինանսական ոլորտներում գործունեություն իրականացնող՝ հաշվետվություն տրամադրող անձանց և վերջիններիս նկատմամբ վերահսկողություն իրականացնող գերատեսչությունների, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի և ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի շուրջ 200 ներկայացուցիչների համար: Սեմինար-քննարկումների ժամանակ ներկայացվել են ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի 5-րդ փուլի գնահատման արդյունքները, մասնավորապես՝ հաշվետվություն տրամադրող անձանց կողմից ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրությամբ սահմանված պարտականությունների կատարման մասով արձանագրված առաջխաղացումը և առկա խնդիրները, ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության զարգացումները՝ կապված ՁՈՉ տարածման ֆինանսավորման դեմ պայքարի հետ, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրությամբ սահմանված կանխարգելիչ միջոցառումները, կասկածելիության նոր ազդակները և չափանիշները:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական ոլորտում սպառողների շահերի պաշտպանություն

Կենտրոնական բանկի կողմից ֆինանսական համակարգում սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումն իրականացվել է ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպությունների արդար վարվելակերպի, համապատասխան ինստիտուցիոնալ միջավայրի ապահովման և ֆինանսական կրթման միջոցով:

Կարգավորման դաշտի զարգացումներ

Սպառողների բողոքների ներկայացման ընթացակարգերի բարելավման նպատակով 2016 թվականին Վարկային բյուրոյի նկատմամբ սահմանվել են նոր պահանջներ: Այսուհետ Վարկային բյուրոն առավել հստակ, համակարգված և փաստաթղթավորված ընթացակարգերով կընդունի, կքննի և կպատասխանի սպառողների բողոքներին:

Իրենց իրավունքների պաշտպանության վերաբերյալ առավել մատչելի տեղեկատվություն ստանալու նպատակով բարելավվել և պարզեցվել է պայմանագրերի կնքման և բողոքների ներկայացման ժամանակ սպառողներին տրամադրվող բացատրական թերթիկը:

2016 թ. սկսած՝ ֆինանսական կազմակերպությունները պարտավոր են սպառողներին պատշաճ տեղեկացնել.

- սպառողական վարկերի և ավանդների հաշիվների փակման փաստի, դրա հետ կապված ընթացակարգերի վերաբերյալ, ինչպես նաև դադարեցումը մերժելու պատճառների մասին,
- պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում սպառողի վերաբերյալ տեղեկությունները Վարկային բյուրո փոխանցելու մասին:

Գործարար վարվելակերպի վերահսկողություն

2016 թվականին շարունակվել են ֆինանսական կազմակերպությունների՝ տեղերում և հեռակա ստուգումները:

ՍԾՊՖԿ կենտրոնը ստուգիչ գործարքների միջոցով իրականացրել է նաև շուկայի ուսումնասիրություն՝ բանկերի կողմից վարկավորման գործընթացը և տրամադրվող վարկերի վերաբերյալ սպառողներին ներկայացվող տեղեկատվությունը գնահատելու նպատակով:

Հեռակա ստուգումների շրջանակներում, ֆինանսական կազմակերպությունների հեռարձակվող **հեռուստագովազդներին զուգընթաց**, ամսական պարբերականությամբ ստուգվել են նաև հեռարձակվող ռադիոգովազդները: Եռամսյակային պարբերականությամբ մշտադիտարկվել է ֆինանսական կազմակերպությունների և նրանց կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ համացանցում և **«Ֆինանսական օգնական»** համակարգում հրապարակվող տեղեկատվությունը:

2016 թվականին ևս ՍԾՊՖԿ կենտրոնն արձագանքել է սպառողներից **գրավոր** և **թեժ գծի** միջոցով ստացված դիմումներին:

Տարվա ընթացքում թեժ գծով ստացվել են 2160 զանգեր: Նախորդ տարվա համեմատ զանգերի թիվն աճել է ավելի քան 1000-ով կամ 98%-ով:

2016 թվականին ընդհանուր առմամբ ստացվել են 270 դիմումներ. նախորդ տարվա համեմատ դիմումների թիվն աճել է 57-ով կամ 26.7%-ով:

Թեժ գծի միջոցով ստացված զանգեր

	Բողոքներ	Կրթական բնույթի զանգեր	Այլ բնույթի զանգեր	Տեղեկատվության հարցում	Ընդամենը
Բանկեր	174	62	5	391	632
Վարկային կազմակերպություններ	17	2	2	56	77
Ապահովագրական ընկերություններ	9	3	1	29	42
Այլ	181	182	25	1021	1409
Ընդամենը	381	249	33	1497	2160

Քաղաքացիների կողմից Կենտրոնական բանկ ներկայացված գրավոր դիմումներ

	Բողոքներ	Կրթական բնույթի զանգեր	Այլ բնույթի զանգեր	Տեղեկատվության հարցում	Ընդամենը
Բանկեր	89	62	4	3	158
Վարկային կազմակերպություններ	14	14	0	0	28
Ապահովագրական ընկերություններ	13	2	0	1	16
Գրավատներ	1	0	0	0	1
Այլ կազմակերպություններ	20	35	3	9	67
Ընդամենը	137	113	7	13	270

ՀՀ-ում հաշտության ֆինանսական կրթվածության բարձրացմանն ուղղված միջոցառումներ

ՀՀ կենտրոնական բանկի ղեկավարությամբ գործող ֆինանսական կրթման ազգային ռազմավարության (այսուհետ՝ ՖԿԱՌ[4]) հանձնաժողովը[5] 2016 թվականի ընթացքում անցկացրել է 3 հանդիպումներ, որոնց ժամանակ քննարկվել և ամփոփվել են ՖԿԱՌ-ով նախատեսված աշխատանքները, ինչպես նաև հաստատվել և որոշումներ են կայացվել ընթացիկ և ծրագրված միջոցառումների վերաբերյալ:

Դպրոցներում ֆինանսական կրթումը, համաձայն նախորդ տարիների ընթացքում Կրթության և գիտության նախարարության հետ ձեռք բերված պայմանավորվածության, իրականացվելու է ինտեգրման սկզբունքով՝ ֆինանսական գրագիտության բաղադրիչը ինտեգրելով 1-12-րդ դասարաններում արդեն գործող առարկաների ծրագրերում: Այդ նպատակով 2016 թվականին ՖԿԱՌ-ի շրջանակում ձևավորվել են աշխատանքային են-թախմբեր, որոնք պետք է մշակեն հետևյալ 4 առարկաների կրթական չափորոշիչները և ծրագրերը՝ «Ես և շրջակա աշխարհը», «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ», «Հասարակագիտություն»:


2016 թվականին ևս շարունակվել է ֆինանսական կրթման հատուկ ծրագիրը, որի նպատակը ՀՀ մարզերում ֆինանսական կրթման շարունակական ծրագիրը ներդնելն է և 2-օրյա դասընթացի միջոցով գյուղական բնակչության գիտելիքները և հմտությունները անձնական ֆինանսների կառավարման ոլորտում զարգացնելն է: Տարվա ընթացքում վերապատրաստվել և որակավորման հավաստագիր են ստացել 9 սեմինարավարներ 6 մարզերից, ովքեր սեմինարներ են անցկացրել 53 գյուղական համայնքներում:

Ապրիլի 1–30-ը Հայաստանում ֆինանսական կրթման ազգային ռազմավարության շրջանակում արդեն 3-րդ անգամ իրականացվեց «Իմ ֆինանսների ամիս» ծրագիրը (ԻՖԱ 2016): Ծրագրի նպատակը անձնական ֆինանսների արդյունավետ կառավարումը կարևորելն է: Ծրագիրը իրականացվում է ավելի քան 35 պետական և մասնավոր կառույցների համագործակցությամբ:

4 2012 թվականին ՀՀ-ում ֆինանսական կրթման ազգային ռազմավարությունը (ՖԿԱՌ) և «ՖԿԱՌ 2014-2019 թվականների գործողությունների ծրագիրը» հաստատվել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի և ՀՀ-ում ֆինանսական կրթման ազգային ռազմավարության մշակման և հետագա իրագործման հանձնաժողովի կողմից: 2014 թ. նոյեմբերի 13-ի նիստի N 47 արձանագրային որոշմամբ այն հավանության է արժանացել ՀՀ Կառավարության կողմից:

5 ՀՀ-ում ֆինանսական կրթման ազգային ռազմավարության մշակման և հետագա իրագործման հանձնաժողովը միջգերատեսչական խորհրդատվական մարմին է, որի անդամները համաՏործակցում են ՀՀ-ում ՖԿԱՌ-ի մշակման և իրագործման գործընթացը առավել արդյունավետ իրականացնելու համար: Անդամակցում են ավելի քան 18 կառույցներ՝ պետական և մասնավոր հատվածից, իսկ ՖԿԱՌ-ի աշխատանքները համակարգում է ՀՀ կենտրոնական բանկը:

Իմ ֆինանսների ամիս 2016



Համագործակցում ավելի քան
35
պետական և մասնավոր կառույցների հետ

15
խումբ միջոցառումներին մասնակցել է շուրջ
5000
հոգի

Abcfinance.am կայքի ֆեյսբուքյան էջին
4000
նոր հետևորդներ

24
բաց սեմինարներ, որին մասնակցել է
500
մարդ

8
ֆինանսական շրջագայություն, որին մասնակցել է շուրջ
500
մասնակից

Իրականացվել է միջհամալսարանական
Ի՞նչ, Որտե՞ղ, Ե՞րբ
ինտելեկտուալ առաջնությունը, որին մասնակցել են շուրջ
150
ուսանողներ

11
մարզերից շուրջ
60
դպրոցականներ մասնակցել են
Բանավեճեր «Ֆինանսատնտեսագիտական (Brain Ring) խաղ մրցույթ»-ին

Երևանի և մարզերի
163
բնակիչ մասնակցել է
«Խնայողությունների խաղ»-ին

Շուրջ
70
ուսանողներ մասնակցել են ֆինանսական տարբեր թեմաներով
Բանավեճերի
միջհամալսարանական մրցաշարի

Հայտարարված մրցույթներին ներկայացրել են
267
աշխատանքներ

Ծրագրի լուսաբանում ավելի քան
20
ԶԼՄ-ների կողմից

2016 թվականին իրականացվել են 15 միջոցառումներ, որոնց մասնակցել է շուրջ 5000 մարդ:

Տարվա ընթացքում հրապարակվել և սոցիալական կայքերում տեղադրվել է ֆինանսական թեմաներով 44 իրազեկող հոդվածների շարք՝ ներառելով բյուջեի կառավարում, վճարահաշվարկային համակարգ, վարկեր, ավանդներ, ապահովագրություն, արժեթղթեր և այլ թեմաներ: Ծրագրի նպատակը հասարակությանը պարզ, հասկանալի գիտելիքներ տրամադրելն է ֆինանսների, մասնավորապես՝ ֆինանսական ծառայությունների մասին:

2016 թ. նույնպես իրականացվել է «Քաղաքացի նախագիծը»: Ծրագրի նպատակը մասնակից մանկավարժներին և սովորողներին համայնքային հիմնախնդիրները բացահայտելու և ուսումնասիրելու արդի գործիքակազմին ծանոթացնելն է, ինչը կօգնի նրանց բացահայտել իրենց համայնքներում առկա ֆինանսական հիմնախնդիրները և ներկայացնել դրանց այլընտրանքային լուծումներ: 2016 թվականին ծրագիրը իրականացվել է Շիրակի մարզի Գյումրի քաղաքում և հարակից գյուղերի ավելի քան 33 դպրոցներում: Վերապատրաստվել են հասարակագիտության 35 ուսուցիչներ, ովքեր դասընթացներ են անցկացրել միջին և ավագ դպրոցի ավելի քան 600 աշակերտների հետ: Աշակերտական խմբերի կողմից բացահայտվել են իրենց համայնքներում առկա 6 ֆինանսական հիմնախնդիրներ, և ներկայացվել են դրանց այլընտրանքային լուծումներ:

2016 թվականին Գերմանական խնայբանկերի միության հետ համատեղ արդեն 5-րդ անգամ անցկացվեց «Խնայողությունների միջազգային օր» միջոցառումը:

Իրականացվել են նաև Կուտակային կենսաթոշակային համակարգի լուսաբանման աշխատանքներ:


Ներդրվել է ֆինանսական կրթման կամավորների ինստիտուտ, որը ունի ավելի քան 300 հոգանոց 16-25 տարեկան ակտիվ երիտասարդ կամավորների թիմ:

Ֆինանսական կրթման նկատմամբ ուշադրությունն ու հետաքրքրությունը ապահովելու նպատակով սոցիալական մեդիայի միջոցով իրականացվել են ֆինանսական իրազեկմանն ուղղված տարբեր առցանց միջոցառումներ, մասնավորապես՝ սոցիալական հարթակների միջոցով (abcfinance.am կայքի համանուն Facebook, youtube, twitter էջեր): Շարունակվել է **«Ֆինանսներ բոլորի համար» ինտերնետային կայքի[6] զարգացումը**:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

2016 թվականին ՀՀ համախառն միջազգային պահուստները[7] աճել են շուրջ **428.8** մլն ԱՄՆ դոլարով և տարեվերջին կազմել շուրջ **2204.1** մլն ԱՄՆ դոլար *(տե՛ս գծապատկեր 13):*

Գծապատկեր 13. ՀՀ համախառն միջազգային պահուստների մակարդակը (մլն ԱՄՆ դոլար)



6 https://www.abcfinance.am

7 Համախառն արտաքին ակտիվներ՝ ազատ փոխարկելի արժույթներով:

Պահուստների աճը հիմնականում պայմանավորվել է շուրջ 503 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ներհոսքով, առևտրային բանկերի թղթակցային հաշիվների մնացորդների շուրջ 151 մլն ԱՄՆ դոլարին համարժեք աճով և ներքին շուկայում արտարժույթի շուրջ 29 մլն ԱՄՆ դոլարին համարժեք առքով: Միևնույն ժամանակ, տարվա ընթացքում իրականացվել են շուրջ 230 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ծավալով արտաքին պետական պարտքի մայր գումարների և տոկոսագումարների մարումներ:

2016 թվականի ընթացքում ՀՀ միջազգային պահուստների մակարդակը շարունակել է համապատասխանել միջազգային պրակտիկայում արտարժութային պահուստներին ներկայացվող բոլոր պահանջներին, մասնավորապես՝ հնարավոր արտաքին ցնցումները կլանելու ՀՀ տնտեսության կարողությունը հավաստելու առումով: 2016 թվականին ՀՀ միջազգային պահուստներն ապահովել են ներմուծման շուրջ վեց ամսվա ծածկույթ և կարճաժամկետ պարտավորությունների (մինչև մեկ տարի) սպասարկման ավելի քան յոթ տարվա ծածկույթ:

Տարվա ընթացքում ՀՀ համախառն միջազգային պահուստները կառավարվել են միջազգային ֆինանսական շուկայի մի շարք տնտեսական և քաղաքական զարգացումների ներքո:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի ԱՄՆ-ում հանրապետականների հաղթանակը, ովքեր տնտեսական ակտիվության աճին ուղղված մեծածավալ հարկաբյուջետային խթանման փաթեթ են պատրաստվում իրագործել: Ծրագրի հիմնական դրույթների իրագործումը արագացնելու է տնտեսական աճի տեմպը ԱՄՆ-ում, ինչն էլ իր հերթին դրական ազդեցություն կունենա միջազգային տնտեսության վրա:

Երկիր մոլորակի առաջատար տնտեսության ՀՆԱ-ի և տների գների աճի համեմատաբար արագ տեմպի, գործազրկության մակարդակի նշանակալի անկման և արագացող գնաճի համատեքստում ԱՄՆ դաշնային պահուստային համակարգը խստացրել է դրամավարկային քաղաքականությունը՝ բարձրացնելով կարճաժամկետ տոկոսադրույքը 25 բազիսային կետով: Ընդհանուր առմամբ, 2015 – 2016 թթ. ԱՄՆ դաշնային պահուստային համակարգը բարձրացրել է «հիմնական» տոկոսադրույքը 50 բազիսային կետով: Այնուամենայնիվ, ԱՄՆ կենտրոնական բանկի վարքագիծը զգուշավոր է, և ակնկալվում է կարճաժամկետ տոկոսադրույքների հետագա չափավոր բարձրացում: 2016 թ. ԱՄՆ դոլարով երեք ամիս ժամկետայնությամբ Libor տոկոսադրույքը աճել է մոտ 0.4 տոկոսային կետով մինչև 1%, իսկ երկու տարի ժամկետայնությամբ ԱՄՆ պետական պարտատոմսի եկամտաբերությունը՝ մոտ 0.15 տոկոսային կետով:

Միևնույն ժամանակ, առաջատար երկրների կենտրոնական բանկերից մյուսը՝ Մեծ Բրիտանիայի կենտրոնական բանկը, որը, 2016 թ. տարեսկզբի կանխատեսումների համաձայն, պետք է որդեգրեր զսպող դրամավարկային քաղաքականություն, նվազեցրեց հիմնական դրամավարկային տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով: Որոշումը պայմանավորված էր Մեծ Բրիտանիայում իրականացված հանրաքվեի արդյունքում Եվրոպական Միությունից դուրս գալու վերաբերյալ քաղաքացիների արտահայտած դրական դիրքորոշմամբ:


2016 թվականին Եվրոպական կենտրոնական բանկը շարունակեց կիրառել խթանող դրամավարկային քաղաքականություն, որի ներքո նախաձեռնվեցին մի շարք նոր միջոցառումներ: Մասնավորապես՝ 2016 թ. Եվրո-

պական կենտրոնական բանկը նվազեցրեց մշտական հնարավորության ավանդային, հիմնական վերաֆինանսավորման և մեկօրյա ժամկետայնությամբ մշտական հնարավորության վարկավորման տոկոսադրույքները: Ակտիվների գնման ծրագիրը ընդլայնվեց 20 մլրդ եվրոյով՝ հասնելով ամսական 80 մլրդ եվրոյի:

Ճապոնիայի կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականությունը շարունակեց մնալ ագրեսիվ խթանող, իսկ տոկոսադրույքների մակարդակը՝ աննախադեպ ցածր:

Վերոնշյալ զարգացումների ներքո 2016 թվականին աշխարհի զարգացող երկրների պետական պարտատոմսերի եկամտաբերության մակարդակները շարունակեցին մնալ պատմականորեն ցածր, իսկ Գերմանիայում և Ճապոնիայում՝ աննախադեպ ցածր բացասական մակարդակի վրա *(տե՛ս գծապատկեր 14):*

Գծապատկեր 14. ԱՄՆ, Գերմանիայի և Ճապոնիայի 2 տարի մարման ժամկետով պետական պարտատոմսերի եկամտաբերությունները (%)



Միջազգային ֆինանսական շուկայի վերը շարադրված անորոշությունների պարագայում ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է նվազագույն ռիսկերով պահուստների կառավարման իր որդեգրած ռազմավարությունը, որի ուղղվածությունը միջազգային պահուստների ապահովությունն է, իրացվելիությունն ու արդյունավետ կառավարումը:

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՀՀ կենtsրոնական բանկի կառավարումը

«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով[8] սահմանված է, որ Կենտրոնական բանկի կառավարման բարձրագույն մարմինը Կենտրոնական բանկի խորհուրդն է:

Խորհուրդը կազմված է Կենտրոնական բանկի նախագահից, նրա երկու տեղակալներից և հինգ անդամներից: Կենտրոնական բանկի նախագահը և նրա տեղակալները Կենտրոնական բանկի խորհրդի կազմում ընդգրկվում են ի պաշտոնե:

Կենտրոնական բանկի բարձրագույն պաշտոնատար անձը **Կենտրոնական բանկի նախագահն է**: Կենտրոնական բանկի նախագահը նշանակվում է ՀՀ նախագահի առաջարկությամբ, ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ վեց տարի ժամկետով և պատասխանատու է Կենտրոնական բանկի խնդիրների իրագործման համար: Կենտրոնական բանկի նախագահը համակարգում է Կենտրոնական բանկի բնականոն աշխատանքը, ներկայացնում է Կենտրոնական բանկը Հայաստանի Հանրապետությունում, այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում, իրականացնում է օրենքով Կենտրոնական բանկի խորհրդի իրավասությանը չվերապահված այլ լիազորություններ: Կենտրոնական բանկի նախագահի բացակայության կամ պարտականությունների կատարման անհնարինության դեպքում նրան փոխարինում է **Կենտրոնական բանկի նախագահի տեղակալներից մեկը**, իսկ տեղակալների բացակայության կամ նրանց պարտականությունների կատարման անհնարինության դեպքում՝ **Կենտրոնական բանկի խորհրդի**՝ տարիքով ավագ անդամը: Կենտրոնական բանկի նախագահի տեղակալներին նշանակում է ՀՀ նախագահը՝ վեց տարի ժամկետով: Կենտրոնական բանկի նախագահը և նրա երկու տեղակալները, ինչպես նաև Խորհրդի անդամները չեն կարող լինել որևէ կուսակցության ղեկավար մարմնի անդամ, կատարել այլ աշխատանք, բացառությամբ գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքի:

Կենտրոնական բանկի խորհրդի մյուս հինգ անդամներին նշանակում է Հայաստանի Հանրապետության նախագահը՝ հինգ տարի ժամկետով: Կենտրոնական բանկի խորհրդի անդամները չեն կարող Կենտրոնական բանկում այլ պաշտոններ զբաղեցնել:

8 Մանրամասն տե՛ս «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքը:

Կենտրոնական բանկի խորհուրդ

Խորհրդի հերթական նիստերը, որպես կանոն, գումարվում են յուրաքանչյուր երկու շաբաթը մեկ՝ ուրբաթ օրերին՝ համաձայն յուրաքանչյուր տարվա առաջին Խորհրդի նիստի ժամանակ տվյալ տարվա համար հաստատված ժամանակացույցի: Խորհրդի արտահերթ նիստ կարող է գումարվել նախագահի, նրա տեղակալներից մեկի կամ Խորհրդի առնվազն երեք անդամի նախաձեռնությամբ: Խորհուրդը հաստատում է Կենտրոնական բանկի կանոնադրությունը, Հայաստանի Հանրապետության դրամավարկային քաղաքականության ծրագիրը, Կենտրոնական բանկի կողմից իրականացվող բաց շուկայական գործառնությունների, տրամադրվող վարկերի և ներգրավվող ավանդների սահմանաքանակներն ու տոկոսադրույքները, Կենտրոնական բանկում պարտադիր պահուստավորում իրականացնելու կարգը և պայմանները, ընդունում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերը, օրենքով սահմանված կարգով տալիս է բանկային գործունեության և այլ լիցենզիաներ, ուժը կորցրած կամ անվավեր է ճանաչում դրանք, սահմանում է բանկերի և այլ անձանց լիցենզավորման կարգը, հաստատում է բանկերի ֆինանսական խմբերի գործունեությունը կարգավորող նորմատիվները և դրանց հաշվարկման կարգը, իրականացնում է օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ:

2016 թվականին գումարվել է Խորհրդի 74 նիստ, որից 9-ը՝ Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում: Արդյունքում Կենտրոնական բանկի խորհուրդը ընդունել է **52 նորմատիվային** և **198 անհատական** որոշումներ: 2016 թվականին Կենտրոնական բանկի խորհրդի կողմից տրվել է 6 պաշտոնական պարզաբանում ոչ հրապարակային պայմանագրային ֆոնդերի հետ կապված մի շարք հարցերի վերաբերյալ, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21^{2}-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության կիրառման մասին, հրապարակային սակարկություններով գրավի իրացման հետ կապված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 251-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառման մասին, բանկի կողմից արգելադրման ենթակա արժեքների վերաբերյալ, որոշ շարժական գույքի գրավի առարկայից բավարարում ստանալու գրավառուի նախապատվության իրավունքի հարցի վերաբերյալ և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 149-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի վերաբերյալ:

Կենտրոնական բանկի վարչություն

Կենտրոնական բանկի վարչությունը Կենտրոնական բանկի նախագահին առընթեր խորհրդակցական մարմին է, որն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք, որպես կանոն, գումարվում են երկու շաբաթը մեկ անգամ՝ Խորհրդի հերթական նիստերի գումարման օրվան հաջորդող երեքշաբթի օրը:

Վարչության նիստերը վարում է Կենտրոնական բանկի նախագահը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ Կենտրոնական բանկի նախագահի տեղակալներից մեկը:

2016 թվականին գումարվել է Կենտրոնական բանկի վարչության 12 նիստ:

Կենտրոնական բանկի հանձնաժողովներ և կոմիտեներ

Կենտրոնական բանկի կառավարման կարևորագույն տարրերից են նաև բանկում գործող հանձնաժողովները, կոմիտեները և այլ խորհրդակցական մարմինները, որոնց կազմը և լիազորությունները սահմանվում են ըստ քննարկվելիք հարցերի շրջանակի և գործունեության ոլորտների: Կենտրոնական բանկի հանձնաժողովների և կոմիտեների նիստերի արձանագրությունները հաստատվում են Կենտրոնական բանկի նախագահի կողմից, իսկ որոշ դեպքերում դրանց արդյունքում Կենտրոնական բանկի նախագահը կայացնում է որոշումներ և տալիս կարգադրություններ: Ստորև ներկայացվում են Կենտրոնական բանկում գործող կոմիտեներն ու հանձնաժողովները, ինչպես նաև դրանց աշխատանքի արդյունքներին վերաբերող տեղեկությունները:

Մշտապես գործող կոմիտեներից և հանձնաժողովներից բացի, Կենտրոնական բանկի նախագահի հրահանգով և Խորհրդի որոշմամբ ձևավորվում են նաև ժամանակավոր հանձնաժողովներ՝ ելնելով որոշակի խնդիրների և նպատակների կատարման անհրաժեշտությունից:

Դրամավարկային քաղաքականության կոմիտե

Դրամավարկային քաղաքականության կոմիտեի գործառույթներն են նախորդ շաբաթվա ընթացքում դրամավարկային քաղաքականության ընթացքի, բանկային համակարգում, ֆինանսական շուկայում ձևավորված իրավիճակի, Կենտրոնական բանկի կողմից իրականացված գործառնությունների, ինչպես նաև դրամավարկային և պետական բյուջեի հետ փոխհարաբերություններին առնչվող ցուցանիշների քննարկումը:

Դրամավարկային քաղաքականության կոմիտեն քննարկում է նաև Կենտրոնական բանկի վիճակագրության վարչության և Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության՝ նախորդ տասնօրյակում գնաճի գնահատումների վերաբերյալ դիտարկումների արդյունքները:

Դրամավարկային քաղաքականության կոմիտեի նիստերը գումարվում են Կենտրոնական բանկում՝ յուրաքանչյուր ուրբաթ:

2016 թվականին գումարվել է Դրամավարկային քաղաքականության կոմիտեի 50 նիստ:

Ֆինանսական կայունության հանձնաժողով

Ֆինանսական կայունության հանձնաժողովը Կենտրոնական բանկի նախագահին կից խորհրդակցական մարմին է, որը գնահատում է ֆինանսական համակարգի կայունությունը, քննարկում, նախապատրաստում է դրա ապահովմանը նպատակաուղղված միջոցառումները, ներկայացնում իրականացման ուղղությունների կարգի և պայմանների վերաբերյալ առաջարկություններ և այլ անհրաժեշտ գործողություններ, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, կատարում իրավիճակի բազմակողմանի վերլուծություն:

Հանձնաժողովի հերթական նիստերում քննարկվում են եռամսյակի ընթացքում համաշխարհային տնտեսությունում, ՀՀ մակրոմիջավայրում և ֆինանսական շուկայում, ֆինանսական հաստատություններում և ենթակառուցվածքներում ռիսկերի զարգացման ուղղությունները և դրանց հնարավոր ազդեցությունը ֆինանսական կայունության վրա: Հանձնաժողովը քննարկում է նաև բանկային համակարգի կայունության ինդեքսի և դրա բաղադրատարրերի շարժը, ֆինանսական կայունությունը գնահատող սթրես-թեստերի արդյունքները և այլն: Հանձնաժողովի նիստերը գումարվում են եռամսյակը մեկ անգամ, յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա երկրորդ կեսի ընթացքում: Արտահերթ նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության՝ հանձնաժողովի նախագահի բանավոր որոշման հիման վրա: Հանձնաժողովի նիստերը գումարվել են համաձայն սահմանված ժամանակացույցի:

Ներդրումային հանձնաժողով

Ներդրումային հանձնաժողովն իր լիազորությունների սահմաններում որոշումներ կայացնելու իրավասություններ ունեցող մարմին է, որը, Կենտրոնական բանկի միջազգային պահուստների կառավարման վերաբերյալ Խորհրդի որոշումներին համապատասխան, իրականացնում է միջազգային պահուստների կառավարման որոշումների ընդունման և դրանց կատարման վերահսկողության գործառույթներ, ինչպես նաև քննարկում է ներդրումային գործունեության ընթացիկ համակարգմանն առնչվող խնդիրներն ու ֆինանսական վերլուծության արդյունքները:

Նշված գործառույթներն իրականացնելու նպատակով հանձնաժողովը քննարկում է միջազգային պահուստների կառավարման ռազմավարական և մարտավարական, ինչպես նաև կառավարման ընթացիկ վերահսկողության խնդիրներ: Հանձնաժողովի նիստերը, որպես կանոն, գումարվում են չորս շաբաթը մեկ՝ երկուշաբթի օրը:

2016 թվականին գումարվել է Ներդրումային հանձնաժողովի 9 նիստ, ընդունվել է 5 որոշում:

Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողով

Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը քննարկում է բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ստեղծմանը նախնական հավանություն տալու, գրանցման և լիցենզավորման, բանկերի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների, ինչպես նաև օտարերկրյա բանկերի ներկայացուցչությունների գրանցման, կարգավորվող շուկայի օպերատորի և Կենտրոնական դեպոզիտարիայի, դրանց կանոնների գրանցման և այլ անձանց լիցենզավորման հետ կապված հարցեր:

Հանձնաժողովը քննարկում է նաև Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող և վերահսկվող ֆինանսական կազմակերպությունների կամ այլ կերպ կարգավորվող անձանց վերահսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների, նրանց նկատմամբ պատժամիջոց կիրառելու կամ չկիրառելու նպատակահարմարության, արտարժույթի առուվաճառքի և

դրա սակարկությունների ընթացքում գնային չարաշահումների փաստեր հայտնաբերելու դեպքում դրանք որպես գնային չարաշահում որակելու, ինչպես նաև պատժատեսակի որոշման հարցերը: Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան շաբաթը մեկ անգամ:

2016 թվականին գումարվել է Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի 65 նիստ:

Կենտրոնական բանկում երիտասարդ մասնագետների մասնագիտական գիտելիքները գնահատող կոմիտե

Կենտրոնական բանկում երիտասարդ մասնագետների մասնագիտական գիտելիքները գնահատող կոմիտեի նիստերը գումարվում են Կենտրոնական բանկում երիտասարդ մասնագետի կարգավիճակով աշխատող աշխատակիցների մասնագիտական կարողություններն ու գիտելիքները ստուգելու և գնահատելու նպատակով: Կոմիտեն ընդունում է խորհրդակցական բնույթի որոշումներ, որոնց հիման վրա կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները երիտասարդ մասնագետների հետագա կարգավիճակի վերաբերյալ առաջարկություններ են ներկայացնում Կենտրոնական բանկի նախագահին:

2016 թվականին գումարվել է կոմիտեի 3 նիստ, գնահատվել են 23 երիտասարդ մասնագետի գիտելիքներ:

Կենտրոնական բանկի աշխատատեղերի գնահատման հանձնաժողով

Կենտրոնական բանկի աշխատատեղերի գնահատման հանձնաժողովի նպատակն է Կենտրոնական բանկի նոր կամ փոփոխվող աշխատատեղերի գնահատումը և դասակարգումը: Հանձնաժողովը քննարկում է Կենտրոնական բանկում նոր ստեղծվող կամ փոփոխվող աշխատատեղերի գնահատման և դասակարգման հետ կապված խնդիրները և ներկայացնում առաջարկություններ Կենտրոնական բանկի նախագահին: Հանձնաժողովը քննարկում է նաև Կենտրոնական բանկի աշխատակիցների անհատական աշխատանքային ծրագրերի կատարողականների վերաբերյալ վիճահարույց հարցերը: Հանձնաժողովի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, մինչև ընթացիկ տարվա հոկտեմբերի 15-ը:

2016 թվականին գումարվել է հանձնաժողովի 3 նիստ:

Կենտրոնական բանկի աշխատակիցների ատեստացիոն հանձնաժողով

Կենտրոնական բանկի աշխատակիցների ատեստացիոն հանձնաժողովի նիստերը գումարվում են ստուգելու համար Կենտրոնական բանկի աշխատակիցների կամ Կենտրոնական բանկում աշխատելու ցանկություն ունեցող անձանց (դիմորդների) մասնագիտական և գործնական կարողություններն ու գիտելիքները:

Հանձնաժողովն աշխատակիցների և դիմորդների մասնագիտական կարողություններն ու գիտելիքները կարող է ստուգել ինչպես հարցազրույցի, այնպես էլ գրավոր աշխատանքների միջոցով: Կենտրոնական բանկի նախագահը, ով միաժամանակ հանձնաժողովի նախագահն է, հանձնաժողովի կողմից տրված՝ աշխատակցի մասնագիտական և գործնական կարողությունների և գիտելիքների համապատասխանության կամ անհամապատասխանության մասին եզրակացության հիման վրա կայացնում է որոշում աշխատակցի հետագա գործունեության մասին:

2016 թվականին տեղի է ունեցել հանձնաժողովի 18 նիստ:

Աուդիտ կոմիտե

Կենտրոնական բանկի աուդիտ կոմիտեն մասնագիտացված մարմին է: Կոմիտեի լիազորությունները ներառում են բանկի ֆինանսական հաշվետվության, կառավարման, ռիսկերի կառավարման, ներքին հսկողության, արտաքին և ներքին աուդիտի հետ կապված հարցերն ու խնդիրները: Աուդիտ կոմիտեն բաղկացած է երեք անդամներից՝ ներառյալ Աուդիտ կոմիտեի նախագահը: Կոմիտեի անդամները Կենտրոնական բանկի խորհրդի անդամներ են: Կենտրոնական բանկի նախագահն ու նախագահի տեղակալները չեն կարող լինել կոմիտեի անդամ:

Տարվա ընթացքում քննարկված հարցերի շրջանակն ընդգրկել է Վերստուգիչ խմբի հանձնառությունների արդյունքները, արտաքին աուդիտի աշխատանքներին, Կենտրոնական բանկի կառավարման գործընթացներին, ռիսկերի կառավարմանն ու ներքին հսկողությանը, Վերստուգիչ խմբի ընթացիկ գործունեությանը, մեթոդաբանությանն ու ոլորտին վերաբերող մասնագիտական խնդիրները:

2016 թվականին գումարվել է կոմիտեի 5 նիստ:

Բացի թվարկված հանձնաժողովներից և կոմիտեներից, Կենտրոնական բանկի կորպորատիվ կառավարման գործում կարևոր նշանակություն ունեն Կենտրոնական բանկի բյուջետային հանձնաժողովը, տեղեկատվական անվտանգության կոմիտեն, տեղեկատվական տեխնոլոգիաների հարցերով զբաղվող կոմիտեն, մրցույթների անցկացման հանձնաժողովը, Կենտրոնական բանկի «Տնային էջի» զարգացման, տեղեկատվական քաղաքականության մշակման ու իրականացման խմբագրական խորհուրդը, ինչպես նաև հետազոտական և վերլուծական աշխատանքները գնահատող խումբը:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կենտրոնական բանկն իր խնդիրներն իրագործելիս անկախ է Հայաստանի Հանրապետության պետական մարմիններից: Կենտրոնական բանկը իր կողմից իրականացվող գործունեության հաշվետվողականությունը ապահովում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Կենտրոնական բանկի ռազմավարությամբ, ինչպես նաև ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում:

Կենտրոնական բանկը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին է ներկայացնում «Դրամավարկային քաղաքականության ծրագիրը» և «Դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվությունը (Գնաճի հաշվետվությունը)», ինչպես նաև Կենտրոնական բանկի վարչական ծախսերի նախահաշիվն ու կապիտալ ներդրումների ծրագիրը՝ համապատասխան կատարողականներով: Բացի վերոնշվածից, Կենտրոնական բանկը հանրությանն է ներկայացնում նաև «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տարեկան հաշվետվությունը»: Վերջինիս բաղկացուցիչ տարրերից է բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունը, որի համապատասխանությունը հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին յուրաքանչյուր տարի հավաստվում է միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպությունների կողմից:

Կենտրոնական բանկի հաշվետվողականության կարևոր տարրերից են նաև «Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգը. զարգացումը, կարգավորումը, վերահսկողությունը», «Ֆինանսական կայունության հաշվետվություն», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տեղեկագիր», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վիճակագրական տեղեկագիր», «Հայաստանի Հանրապետության հուշադրամներ» պարբերականները: Կենտրոնական բանկն իր հաշվետվողականությունն իրագործում է նաև պաշտոնական կայքէջի (www.cba.am) միջոցով, որտեղ տեղադրվում են Կենտրոնական բանկի զարգացման ռազմավարությունը, պարբերականների հերթական թողարկումները, Կենտրոնական բանկի խորհրդի կողմից ընդունված վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ արձանագրություններն ու մամլո հաղորդագրությունները, Կենտրոնական բանկի կառավարմանը, գործունեությանը, ինչպես նաև ֆինանսական համակարգին վերաբերող այլ տեղեկատվություն:

Կառավարման համակարգեր և կազմակերպչական զարգացում

2016 թվականին Կենտրոնական բանկը շարունակել է Անվտանգության համակարգի արդյունավետության բարձրացմանը և կատարելագործմանը ուղղված աշխատանքները: Մասնավորապես, հաշվի առնելով ՀՀ աշխարհաքաղաքական դիրքը, մեծ ուշադրություն է դարձվել արտակարգ իրավիճակներում Կենտրոնական բանկի և ողջ ֆինանսաբանկային համակարգի գործառույթների անընդհատության ապահովման ու ենթակառուցվածքների վերականգնման պլանավորմանը, ղեկավարության և անձնակազմի պատրաստվածության բարձրացմանը:

Կատարված աշխատանքներն են՝

- Բիզնես – գործընթացների անընդհատության ապահովման ոլորտում.
  - Վերակառուցվել և բոլոր անհրաժեշտ պարագաներով ապահովվել են պահուստային տարածքները,
  - Ստեղծվել են տեղեկատվական համակարգերի բարձր պատրաստվածության պահուստային հնարավորություններ,
  - Առանցքային անձնակազմը ապահովվել է անհրաժեշտ պահուստային աշխատատեղերով, անհատական պաշտպանության միջոցներով:
- Քաղպաշտպանության համակարգի զարգացման նպատակով.
  - Ստեղծվել է առաջին բուժօգնության խումբ, որում ընդգրկված աշխատակիցների համար վերապատրաստման դասընթացներ են անցկացրել հրավիրված մասնագետները,
  - Անձնակազմը ապահովվել է անհրաժեշտ ապաստարաններով, անհատական պաշտպանության միջոցներով,
  - Անցկացվել են ուսուցողական տարհանումներ:
- Համատեղ գործունեության համակարգում.
  - Իրականացվել են Կենտրոնական բանկի և ֆինանսաբանկային համակարգի մասնակիցների համատեղ վարժանքներ՝ արտակարգ իրավիճակներում փոխկապված գործառույթների վերականգնումը ապահովելու նպատակով,
  - Կենտրոնական բանկը մասնակցել է հանրապետության համապատասխան մարմինների կողմից կազմակերպված վարժանքների և արժանացել բարձր գնահատականի:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2016 թվականին ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է բազմակողմ և երկկողմ համագործակցությունը միջազգային և օտարերկրյա ֆինանսական կազմակերպությունների հետ:

2016 թվականին Կենտրոնական բանկ են այցելել Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի, միջազգային այլ ֆինանսական կազմակերպությունների, ինչպես նաև գործընկեր բանկերի պատվիրակություններ: Նշված այցերի շրջանակներում ստորագրվել են մի շարք համաձայնագրեր, որոնցից հիշատակման են արժանի.

- Մարտի 15-ին Երևանում Կենտրոնական բանկի, ՀՀ ֆինանսների նախարարության և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև ստորագրվել է «Վաղ անցումային երկրներում ազգային արժույթով վարկավորման ծրագրի» Փոխըմբռնման հուշագիր (Memorandum of Understanding under the EBRD ETC Local Currency Lending Programme):
- Մարտի 31-ին Երևանում Կենտրոնական բանկի և Գերմանիայի Դաշնային Հանրապետության KfW զարգացման բանկի միջև ստորագրվել է «Հայաստանի բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացում. 4-րդ փուլ» վարկային պայմանագիր՝ 20 մլն եվրո ընդհանուր արժողությամբ:
- Նոյեմբերի 18-ին Երևանում Կենտրոնական բանկի և Եվրոպական ներդրումային բանկի միջև ստորագրվել է «Փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման մասին» վարկային պայմանագիր՝ 50 մլն եվրո ընդհանուր արժողությամբ:

Տարվա ընթացքում Կենտրոնական բանկը կազմակերպել է մի շարք գործնական հանդիպումներ, կոնֆերանսներ, նիստեր, կլոր սեղաններ և համաժողովներ, որոնք անց են կացվել ինչպես Երևանում, այնպես էլ Կենտրոնական բանկի այլ տարածաշրջանային կրթական համալիրներում:

Կենտրոնական բանկի աշխատակիցները մասնակցել են տարեկան հանդիպումների, ֆորումների, բանկային և ֆինանսական միջազգային համաժողովների, սիմպոզիումների, կլոր սեղանի նիստերի, խորհրդակցությունների, ցուցահանդեսների և աշխատանքային սեմինարների, ինչ-

պես գործընկեր կառույցների միջև գործող տեխնիկական օժանդակության, այնպես էլ երկկողմ և բազմակողմ համագործակցության շրջանակներում, որոնց թիվը հասնում է մոտ 250-ի:

2016 թվականի ընթացքում խորացվել և ամրապնդվել է սպառողների շահերի պաշտպանության և ֆինանսական կրթման ոլորտում միջազգային կառույցների՝ Եվրոպայի տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) ֆինանսական կրթման միջազգային ցանցի (INFE), Ֆինանսական ներգրավման միության (AFI), Եվրասիական տնտեսական ընկերակցության և Երեխաների ու երիտասարդների ֆինանսների միջազգային կազմակերպության (Child & Youth Finance International) հետ համագործակցությունը:

Անձնակազմի կառավարում

Շարունակելով անձնակազմի կառավարման ոլորտում որդեգրած քաղաքականությունը՝ ՀՀ կենտրոնական բանկն իրականացրել է անձնակազմի մասնագիտական զարգացման և մասնագիտական խոր գիտելիքներ ունեցող, աշխատանքն արդյունավետ կատարելու համար անհրաժեշտ հմտություններով օժտված աշխատակիցների ներգրավման աշխատանքներ: Տարեվերջի դրությամբ Կենտրոնական բանկի աշխատակիցների (անորոշ և որոշակի ժամկետով աշխատողներ) թիվը կազմել է 788՝ 445 կին և 343 տղամարդ, միջին տարիքը՝ 39: Տարվա ընթացքում աշխատանքից ազատվել է 32 աշխատակից (նախորդ տարի՝ 50):

Ներքին և արտաքին մրցույթների արդյունքներով ՀՀ կենտրոնական բանկում համալրվել է 19 թափուր աշխատատեղ: Տարվա ընթացքում, ստանձնելով ավելի բարդ գործառույթներ, 52 աշխատակիցներ ունեցել են առաջխաղացում, որոնցից 6-ը ստանձնել են ղեկավար պաշտոն:

Կենտրոնական բանկը շարունակել է իր քաղաքականությունը երիտասարդ մասնագետների (առանց մասնագիտական աշխատանքային փորձի) ներգրավման, նրանց մասնագիտական գիտելիքների զարգացման և ապագայում վերջիններիս կողմից թափուր աշխատատեղերի համալրման ուղղությամբ: 2016 թվականին «ՀՀ կենտրոնական բանկ. ներածական դասընթաց» երկամսյա ծրագրի արդյունքներով Կենտրոնական բանկում աշխատանքի են անցել 9 երիտասարդ մասնագետներ:

2016 թ. Կենտրոնական բանկում գիտահետազոտական պրակտիկա է անցել Հայաստանի Հանրապետության բուհերի 135 ուսանող:

2016 թ. ՀՀ կենտրոնական բանկի կողմից հայտարարված Իսահակ Իսահակյանի անվան կրթաթոշակի նշանակման մրցույթին մասնակցել է 50 դիմորդ: Մրցույթի արդյունքներով Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի 3, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2, Արցախի պետական համալսարանի 1, Հայաստանի ամերիկյան համալսարանի 1 լավագույն ուսանողների հատկացվել է կրթաթոշակ:

Կենտրոնական բանկի 45 աշխատակից 2016 թ. դասավանդել է Հայաստանի տարբեր ուսումնական հաստատություններում՝ փոխանցելով փորձն ու գիտելիքները ապագա մասնագետներին:

Աշխատակիցների քանակ

788*

Տղամարդ **343**

Կին **445**

* ՀՀ ԿԲ աշխատակիցների միջին թիվը՝ 791, մանրամասն տես ֆինանսական հաշվետվություն:

Աշխատակիցների միջին տարիք

39

Աշխատանքից ազատվածներ **32**

Համալրված աշխատատեղեր **28**

19 արտաքին եւ ներքին մրցույթներ

9 ԲՈՒԿ երիտասարդ մասնագետներ

52 մասնագիտական առաջխաղացում ունեցած աշխատակիցներ

6 դարձել են ղեկավար

Գիտահետազոտական պրակտիկա անցել է **135**

Դասավանդող աշխատակիցներ **45**

Իսահակ Իսահակյանի կրթաթոշակ ստացած ուսանողներ **6**

Վերապատրաստումներ

15 Ներքին ռեսուրսների օգտագործմամբ կազմակերպած դասընթացների քանակ

Ռոտացիաներ

14 2016 թվականին իրականացված աշխատակիցների ռոտացիաների քանակը

Միջոցառումներ

250 երկկողմ և բազմակողմ համագործակցության շրջանակներում գործընկեր կառույցների հետ կազմակերպված միջոցառումները

128 2016 թվականին ընթացքում Կենտրոնական բանկի կողմից և գործընկեր կառույցների հետ համատեղ ՀՀ տարածքում կազմակերպված միջոցառումներն ու ծրագրերը

Սերտիֆիկացիա

44 միջազգային սերտիֆիկատների քանակը

24 Քննությունների հանձնման ընթացքում գտնվող սերտիֆիկացիաները

8 ACCA

5 CFA

Անձնակազմի ուսուցում և մասնագիտական որակավորման բարձրացում

Կենտրոնական բանկում աշխատակիցների մասնագիտական շարունակական զարգացմանն ուղղված վերապատրաստման և զարգացման քաղաքականության ներքո 2016 թվականին ևս կազմակերպվել է աշխատակիցների մասնագիտական որակավորման բարձրացմանն ուղղված գործընթաց:

2016 թ. Կենտրոնական բանկի աշխատակիցները վերապատրաստվել են արտասահմանյան բանկերում, այլ ֆինանսական կազմակերպություններում և մասնագիտական ուսումնական կենտրոններում, ՀՀ ուսումնական կենտրոններում, ինչպես նաև ներգրավելով միջազգային հայտնի համալսարանների դասավանդողների՝ Կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում:

Կենտրոնական բանկի վերահսկողական ոլորտի աշխատակիցների համար Նիդեռլանդների բանկի փորձագետի կողմից «Բանկային վերահսկողություն» թեմայով կազմակերպվել են արդեն իսկ շարունակական բնույթ կրող փուլային դասընթացներ, ինչպես նաև տվյալ ոլորտի հաղորդակցման որակները բարձրացնելու նպատակով Նիդեռլանդների բանկի և «Գուիկոնսալտ» (Gooiconsult) կազմակերպության հետ համատեղ՝ «Հարցազրույցի և հաղորդակցման հմտությունների զարգացում» թեմայով շարունակական փուլային դասընթացներ: Նշենք նաև, որ երկկողմ հարաբերությունների խորացման արդյունքում վերահսկողական ոլորտի աշխատակիցների համար էր նախատեսված նաև Բելգիայի բանկի փորձագետների կողմից կազմակերպված «Տեղերում ստուգումների փորձը եվրոպական միասնական վերահսկողական մեխանիզմի ներքո» թեմայով դասընթացը:

Ֆինանսական ոլորտում տարածաշրջանային համագործակցությունը խորացնելու նպատակով կարևորվում են Կանադայի Տորոնտո կենտրոնի, ԱՄՆ դաշնային պահուստային համակարգի հետ համատեղ Կենտրոնական բանկի կազմակերպած տարածաշրջանային դասընթացները, որոնց մասնակցել են Կենտրոնական բանկի և օտարերկրյա բանկերի ներկայացուցիչներ:

2016 թվականի ընթացքում Կենտրոնական բանկը գործընկեր կառույցների հետ համատեղ ՀՀ տարածքում կազմակերպել է 128 միջոցառում/ծրագիր, որին մասնակցել են ինչպես Կենտրոնական բանկի, այնպես էլ ՀՀ առևտրային բանկերի, այլ գերատեսչությունների, մասնավոր հատվածի և օտարերկրյա կենտրոնական/ազգային բանկերի ներկայացուցիչներ:

Պահպանելով Կենտրոնական բանկում տարիների ընթացքում կուտակած գիտելիքներն ու փորձը փոխանցելու ավանդույթը՝ Կենտրոնական բանկի արդի խնդիրների, գործառույթների մասին տեղեկանալու, ինչպես նաև մասնագիտական գործունեության համար կարևոր հմտությունները զարգացնելու նպատակով ներքին ռեսուրսների օգտագործմամբ կազմակերպվել է 15 դասընթաց:

Կենտրոնական բանկը նաև մեծ տեղ է հատկացրել իրական ժամանակի ռեժիմով անցկացվող դասընթացներին: Բազմաթիվ աշխատակիցներ մասնակցել են ինչպես Ֆինանսական կայունության ինստիտուտի (FSI), այնպես էլ միջազգային հեղինակավոր այլ կրթական և ֆինանսական

հաստատությունների կողմից կազմակերպված ուսուցողական դասընթացներին և վեբինարներին (webinar):

2016 թ. շարունակել է կիրառվել աշխատակիցների մասնագիտական զարգացմանն ուղղված մեկ այլ գործիք՝ աշխատանքի շրջափոխում (ռոտացիա): Կենտրոնական բանկում ղեկավար կադրերի ռեզերվն ապահովելու, փորձառու մասնագետների գիտելիքներն ընդլայնելու, երիտասարդ մասնագետների գիտելիքները զարգացնելու նպատակով 2016 թ. իրականացվել է 14 աշխատակցի շրջափոխում (ռոտացիա):

Կենտրոնական բանկի աշխատակիցները շարունակել են հանձնել ֆինանսական, հաշվապահական, աուդիտորական, ապահովագրական, տեղեկատվական տեխնոլոգիաների, զեղծարարության, մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտների միջազգային մասնագիտական որակավորման քննություններ: 2016 թ. դրությամբ միջազգային մասնագիտական որակավորում ստացել է 44 աշխատակից և շարունակում է քննություններ հանձնել 24 աշխատակից: ՀՀ կենտրոնական բանկի 8 աշխատակից ՍիէՖէյ-ի (CFA) և 5 աշխատակից՝ էյՍիՍիէյ-ի (ACCA) լիիրավ անդամ են:

Հասարակայնության հետ կապեր

2016 թվականին Կենտրոնական բանկն իրականացրել է ֆինանսական ոլորտի, ֆինանսական կազմակերպությունների գործունեությանն առնչվող իրադարձությունների, Կենտրոնական բանկի նախաձեռնությունների և բարեփոխումների վերաբերյալ հանրության իրազեկման աշխատանքներ:

Ֆինանսական շուկայի մասնակիցները և հանրությունն իրազեկվել են դրամավարկային քաղաքականության, ֆինանսական վերահսկողության և ֆինանսական կայունության ապահովման ոլորտում Կենտրոնական բանկի գործողությունների, ծրագրերի, նախաձեռնությունների մասին, տեղի են ունեցել քննարկումներ տարբեր հարցերի շուրջ:

Կենտրոնական բանկը տարվա ընթացքում հրապարակել է ռեպո (վերաֆինանսավորման) գործառնությունների տոկոսադրույքների մասին Խորհրդի 8 որոշումներ: Համառոտ հաղորդագրությունը հրապարակվել է որոշման կայացումից անմիջապես հետո, իսկ 10 օրվա ընթացքում հրապարակվել է Խորհրդի նիստի արձանագրությունը: 4 արձանագրություններ հրապարակվել են «Գնաճի հաշվետվություն» եռամսյա պարբերականում:

Զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների համար կազմակերպվել են կրթական սեմինարներ՝ ֆինանսական կայունության, վճարահաշվարկային համակարգի և Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի գործունեության թեմաներով: Կազմակերպվել են հանդիպում-քննարկումներ լրատվամիջոցների ղեկավարների և Կենտրոնական բանկի ղեկավար կազմի ներկայացուցիչների մասնակցությամբ:

Հանդիպում-քննարկումներ են անցկացվել տնտեսագետների և տնտեսական ոլորտի փորձագետների հետ **«ՀՀ ֆինանսական համակարգը և կայունությունը», «Դրամավարկային քաղաքականություն»,**

«Փոխարժեքի տնտեսական դերը», «Բանկային համակարգի միջնորդություն», «Սպառողների շահերի պաշտպանություն և վարկային պատմություն» թեմաներով:

2016 թվականից Կենտրոնական բանկը հասանելի է նաև սոցիալական մեդիայում, որտեղ հրապարակվում են նորություններ, հաղորդագրություններ, բանկի գործունեության մասին այլ նյութեր:

Տարվա ընթացքում կազմակերպվել է 4 միջոցառում՝ զանգվածային լրատվամիջոցների մասնակցությամբ և 32 հարցազրույց: 2016 թվականի ընթացքում Կենտրոնական բանկը ստացել է 29 գրավոր հարցում, որոնց օրենքով սահմանված կարգով տրվել են պատշաճ արձագանքներ: Քաղաքացիներից և կազմակերպություններից ստացված առցանց հարցումներին տրվել են 77 պատասխաններ: Կենտրոնական բանկի գործունեության լուսաբանման նպատակով թողարկվել է 208 մամլո հաղորդագրություն: Բացի այդ, Խորհրդի նիստերի մասին հրապարակվել են 30, իսկ ռեպո գործառնությունների տոկոսադրույքի մասին՝ 11 հաղորդագրություններ:

Այցելուների կենտրոն

2016 թվականին Կենտրոնական բանկի այցելուների կենտրոնը[9] սպասարկել է շուրջ 10 513 այցելու՝ նախորդ տարվա համեմատ (9000) 17%-ով ավելի:

Երևանում Կենտրոնական բանկի այցելուների կենտրոնը ունեցել է 7 513 այցելու:

2016 թվականին Այցելուների կենտրոնի կրթական ծրագրերի շրջանակում շարունակվել են «Մեկ օր Կենտրոնական բանկում» խորագրով ՀՀ պաշտպանության նախարարության ուսումնական հաստատությունների զինծառայողների և սաների համար կազմակերպված կրթական միջոցառումները: Տարվա ընթացքում, ընդհանուր առմամբ, Այցելուների կենտրոնում հյուրընկալվել են 185 զինծառայողներ/սաներ և դասախոսներ: 2016 թվականի մայիսին ՀՀ մշակույթի նախարարության առաջարկով Կենտրոնական բանկի Այցելուների կենտրոնը մասնակցել է «Թանգարանների գիշեր» միջազգային ծրագրին, որի շրջանակներում ունեցել է 438 այցելու:

2016 թվականի սեպտեմբերի 2-13-ը Ստեփանակերտ քաղաքում կազմակերպվել է «Հայաստանի դրամաշրջանառության պատմությունը. Ֆինանսներ բոլորի համար» արտագնա ցուցահանդես – կրթական ծրագիրը: Այն բաղկացած էր երկու մասից՝ դրամի պատմության ցուցադրությունից և անձնական ֆինանսների վերաբերյալ սեմինարների շարքից: Ծրագրի նպատակն էր բնակչությանը, դպրոցականներին ծանոթացնել ազգային դրամի պատմությանը, դրամի պաշտպանական հատկանիշներին, ֆինանսաբանկային համակարգի հիմնական գործառույթներին, ներկայացնել ֆինանսական համակարգի ծառայություններից օգտվողների իրավունքները: Ցուցահանդեսը Ստեփանակերտում ունեցել է 3000 այցելու (աշակերտ/ուսանող, ուսուցիչ/դասախոս, քաղաքացի)՝ նախորդ տարի Վանաձորում կայացած արտագնա ցուցահանդեսի համեմատ 1400-ով կամ 90 %-ով ավելի:

9 Մանրամասն տե՛ս visitorcentre.cba.am, museum.cba.am, www.cba.am կայքէջերում:

2016 թվականին Այցելուների կենտրոնը համագործակցել է Հայաստանի մանուկներ հիմնադրամի (COAF), UOU մանկական գյուղեր ՀԲՀ, Ջինիշյան հիշատակի հիմնադրամ (JMF), ՀԲԸՄ Վաչե և Թամար Մանուկյան վարժարանի (Կալիֆորնիա) «IAB» և «Smash Studio» ամառային դպրոցների, ինչպես նաև Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի հետ՝ հյուրընկալելով Հայաստանի գրեթե բոլոր մարզերի դպրոցների աշակերտների:

Կենտրոնական բանկի Այցելուների կենտրոնի 5-ամյակի կապակցությամբ սեպտեմբերի 27-ից 30-ը Երևանում կազմակերպվել է «Այցելուների կենտրոնների/թանգարանների դերը ժամանակակից Կենտրոնական բանկերի իմիջի ձևավորման գործընթացում» թեմայով միջազգային կլոր սեղան, որին մասնակցել են 11 երկրների կենտրոնական բանկերի գործընկեր այցելուների կենտրոնների/թանգարանների 16 ղեկավարներ/առաջատար մասնագետներ:

2016 թվականի տարեվերջին Կենտրոնական բանկի Այցելուների կենտրոնում կազմակերպվել է ՀՀ ֆինանսների նախարարության «Պետական գանձարանի» պատմամշակութային դրամագիտական արժեքների ցուցադրությունը, որը կգործի 1 տարի:

Ներքին աուդիտ

Կենտրոնական բանկում ներքին աուդիտի գործառույթն իրականացնում է Վերստուգիչ խումբը, որը ձևավորվել է Կենտրոնական բանկի խորհրդի կողմից՝ համաձայն «ՀՀ կենտրոնական բանկի մասին» օրենքի: Վերստուգիչ խումբն առաջնորդվում է ՀՀ օրենսդրությամբ, Ներքին աուդիտորների ինստիտուտի (IIA) Մասնագիտական գործունեության միջազգային հայեցակարգով (IPPF), ինչպես նաև Ներքին հսկողության “COSO Internal Control - Integrated Framework” և Տեղեկատվական տեխնոլոգիաների «CobIT» փաստաթղթերով:

Կենտրոնական բանկում ներքին աուդիտի գործառույթն իրականացվում է Ներքին աուդիտի սահմանմանը և Ստանդարտներին, ինչպես նաև էթիկայի կանոններին համապատասխան՝ համաձայն Նիդեռլանդների բանկի փորձագետների արտաքին գնահատման եզրակացության: Այդ նպատակով Վերստուգիչ խումբն անցնում է որակի ներքին և, հինգ տարին մեկ՝ արտաքին գնահատում: 2016 թ. իրականացվել է ինքնագնահատում, որին 2017 թ. կհաջորդի արտաքին գնահատումը:

Վերստուգիչ խումբն իրականացնում է ռիսկերի վրա հիմնված ներքին աուդիտ՝ հավաստիացման և խորհրդատվական հանձնառությունների միջոցով նպաստելով ռիսկերի կառավարման, հսկողության և կառավարչական գործընթացների արդյունավետության բարձրացմանը:


Վերստուգիչ խմբի աշխատակիցներն անդամակցում են Ներքին աուդիտորների ինստիտուտին (IIA), Տեղեկատվական համակարգերի աուդիտի և հսկողության ասոցիացիային (ISACA), Որակավորված երդվյալ հաշվապահների ասոցիացիային (ACCA) և ունեն այդ կազմակերպությունների կողմից տրվող միջազգային որակավորումներ (CIA, CRMA, CISA, CRISC, ACCA):

ԴԻԼԻՋԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնը 2016 թվականին զգալի ձեռքբերումներ և հաջողություններ է ունեցել իր երեք հիմնական զարգացման ուղղություններով՝ հետազոտությունների իրականացում, միջազգային համագործակցություն և սոցիալական պատասխանատվություն: Կենտրոնի առաքելությունն է ստեղծել գիտական այնպիսի միջավայր, որը կնպաստի գիտահետազոտական աշխատանքների իրականացմանը արդի տնտեսագիտական խնդիրների և դրանց գործնական կիրառման միջազգային փորձի ուսումնասիրության առումով (հետազոտությունների վրա հիմնված որոշումների կայացման մշակույթի արմատավորմանը), որակյալ հետազոտական աշխատանքներ կտրամադրի զարգացող տնտեսությունների վերաբերյալ և կնպաստի Կենտրոնական բանկի նպատակների արդյունավետ իրականացմանը. նշված խնդրի իրագործման պատասխանատուն ԿԲ տնտեսական հետազոտությունների վարչությունն է:

Կենտրոնն իր գործունեության ընթացքում արդեն որոշակի ճանաչում է ձեռք բերել որպես Հայաստանի, տարածաշրջանի, Արևելյան Եվրոպայի կենտրոնական բանկերի, ֆինանսական այլ կազմակերպությունների, միջազգային կառույցների և գործարար ոլորտի ներկայացուցիչների հանդիպումների կազմակերպման ու հետազոտությունների իրականացման հարթակ: Տարվա ընթացքում շարունակվել է Կենտրոնական բանկի աշխատակիցների տեղափոխման գործընթացը Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոն. աշխատակիցների թիվը տարեվերջին կազմել է 178 մարդ:

ՀՀ ԿԲ ԴԻԼԻՋԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԽԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ



Կենտրոնական բանկի ԴՈՒՀԿ հետազոտական խմբի տեսլականն է լինել զարգացող տնտեսությունների դրամավարկային և ֆինանսական կայունության քաղաքականություններին առնչվող հարցերում առաջատար հեղինակություն: Հետազոտության խնդիրներից է զարգացող տնտեսությունների վերաբերյալ բարձր որակի հետազոտություններ իրականացնել ԿԲ քաղաքականություն մշակողներին և իրականացնողներին աջակցելու և ԿԲ հեղինակության բարձրացման նպատակով, տրամադրել արդյունավետ խորհրդատվություն՝ դրամավարկային և ֆինանսական կայունության քաղաքականությունների մշակման գործընթացներում, համագործակցել միջազգային կազմակերպությունների, հեղինակավոր հետազոտական կենտրոնների, ակադեմիական հաստատությունների և այլ կենտրոնական բանկերի հետազոտական վարչությունների հետ, նպաստել ԿԲ-ում որակյալ և համակարգված վերլուծությունների իրականացմանը:

Կենտրոնական բանկը իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում համագործակցում է միջազգային կազմակերպությունների, ՀՀ ֆինանսների նախարարության, տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության, այլ պետական մարմինների, ՀՀ տարածքում գործող բանկերի, ուսումնական հաստատությունների և Կենտրոնական բանկի կառուցվածքային այլ ստորաբաժանումների հետ: 2016 թվականի ընթացքում համատեղ ծրագրեր են իրականացվել Ասիական զարգացման բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի հետ:

2016 թվականին Կենտրոնական բանկի աշխատակիցները շարունակել են իրականացնել 2015 թվականին սկսած գիտահետազոտական աշխատանքները՝ համագործակցելով աշխարհի լավագույն բուհերից

հրավիրված հեղինակավոր մասնագետների հետ (Ցյուրիխի ճարտարագիտական համալսարան, Բարսելոնայի համալսարան, Նոտր Դամի համալսարան, Ստենֆորդի համալսարան և այլն), ինչի արդյունքում որոշակի հաջողություններ են արձանագրել: ԿԲ աշխատակիցները դասախոսների հետ համագործակցության արդյունքում ունեցել են ավարտուն աշխատանքներ հետևյալ թեմաներով. «Տնտեսական աճի վրա կապիտալ ապրանքների ներմուծման ազդեցության գնահատումը բազմասեկտոր մոդելի կառուցման միջոցով», «Հայաստանում բիզնես ցիկլերի վրա արտադրողականության շոկերի ազդեցության ուսումնասիրում», «Բարոյական ռիսկի մոդելը առողջության ապահովագրության մեջ», «Եվրասիական տնտեսական միությանը անդամակցման հնարավոր ազդեցությունները Հայաստանի տնտեսության վրա», «Ընտրությունների կազմակերպման ձևերի և ծախսերի վերլուծություն և մոդելավորում», «Հայաստանի բանկային համակարգում բանկերի միավորման վերլուծություն», «Քաղաքային զարգացվածության գործակցի և ֆինանսական ծառայությունների տարածական բաշխման արդյունավետության գնահատում», «Զարգացող տնտեսություններում գիտահետազոտական ներդրումների վրա օտարերկրյա ֆիրմաների ազդեցության ուսումնասիրում», «Կապիտալի նվազագույն սահմանաչափի պայմաններում ֆիրմաների վարքագծի ուսումնասիրում», «Ֆինանսական միջնորդության և տնտեսական աճի միջև կապի հետազոտում», «Պետական ծախսերի բաշխումը և տնտեսության կառուցվածքային տեղաշարժերը», «Գյուղական համայնքներում ֆինանսական կրթման ծրագրի գնահատում», «Երկրների միջև առևտրային հոսքերի մոդելավորում», «Միգրացիայի և տրանսֆերտային հոսքերի մոդելավորում», «Միկրո- և մակրոտնտեսական տվյալների բազաների շարունակական ընդլայնում և ավտոմատացում», «Տնտեսական աճի բազմասեկտոր մոդելների լուծման ալգորիթմների և ծրագրային փաթեթների ուսումնասիրություն և դրանց կիրառում», «Միկրոտվյալների շտեմարանների կառուցում, որոնք ներառում են սպառողական ապրանքների առցանց գների, անշարժ գույքի վաճառքի, հայտարարությունների միջոցով աշխատանքի նկատմամբ պահանջարկի, ինչպես նաև ֆինանսական գրագիտության հետազոտության վերաբերյալ տվյալները, միկրոտվյալների շտեմարանների հիման վրա պարբերաբար վերլուծությունների և հետազոտությունների իրականացում, զեկույցի պատրաստում և ներկայացում», «Արժույթի ընտրությունից կախված ֆինանսական ծառայությունների պահանջարկի և արդյունավետության գնահատում», «Չինաստանի տնտեսական աճի դանդաղումը և դրա ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա»: Աշխատանքները ներկայացվել են ինչպես Կենտրոնական բանկի խորհրդի անդամներին, այնպես էլ գիտաժողովների ընթացքում: Կատարված գիտահետազոտական աշխատանքները արժանացել են մրցանակների և Կենտրոնական բանկի խորհրդի անդամների բարձր գնահատականին:

Աշխատանքներից մի քանիսը ներկայացվել են Հայկական տնտեսագիտական միության տարեկան գիտաժողովի ժամանակ և մրցանակների արժանացել «Armen Alchian awards – general interest» և «Grigor Artzruni awards-young scholars» անվանակարգերում: Աշխատակիցները մասնակցել են նաև արտաքին վերապատրաստման դասընթացների, որոնց արդյունքում ստացել են գերազանց ուսումնառությունը հաստատող

գովասանագրեր: 2016 թվականի ընթացքում Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում տեղի են ունեցել մի շարք տնտեսագիտական համաժողովներ և դասընթացներ, որոնց ակտիվ մասնակցել են ԿԲ տնտեսագետները. որոշ աշխատակիցներ կազմակերպել են նաև ներքին դասընթացներ Կենտրոնական բանկի այլ ստորաբաժանումների աշխատակիցների համար:

2016 թվականին սկսվել է համագործակցության ծրագիր Համաշխարհային բանկի հետ՝ ֆինանսական գրագիտության ուղիների արդյունավետության զարգացման վերաբերյալ: Մի շարք գյուղական համայնքներում իրականացվել է նախապես մշակված ծրագիր. վարքագծային հետազոտությունների մեթոդների կիրառմամբ հարցազրույցներ են իրականացվել Տավուշի, Լոռու և Գեղարքունիքի մարզերի մոտ 15 գյուղերում: Հետազոտությունը իրականացվել է Համաշխարհային բանկի և Կենտրոնական բանկի աշխատակիցների համատեղ ջանքերով: Արդյունքում բացահայտվել են վարքագծային վարկածներ, որոնք ընկած են լինելու ֆինանսական գրագիտության ավելի արդյունավետ քաղաքականության մշակման հիմքում:

Կենտրոնի և Հայաստանի ամերիկյան համալսարանի փոխգործակցության արդյունքում Կենտրոնի 3 մասնագետներ դասավանդել են Ամերիկյան համալսարանի Տնտեսագիտության մագիստրոսական ծրագրում, որի ամառային փուլը տեղակայված է Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում: 2013 թ-ից «Տնտեսագիտության մագիստրոս» ծրագրին մասնակցել է Կենտրոնական բանկի 12 աշխատակից: Ծրագրի 3 շրջանավարտ ԿԲ-ում ընդունվել է աշխատանքի: Ընդ որում, ծրագրի շրջանավարտ ԿԲ 15 աշխատակիցներից 9-ը աշխատում են Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում:

Բացի այդ, Հայաստանի ամերիկյան համալսարանի մի շարք ուսանողներ իրենց ամառային նախադիպլոմային պրակտիկան անցել են Կենտրոնում:

Վերջին երկու տարիներին «Տնտեսագիտության մագիստրոս» ուսումնական ծրագրի շրջանակներում ՀՀ կենտրոնական բանկում աշխատանքային պրակտիկա է անցել 9 ուսանող:

Ինչպես նախորդ երեք տարիներին, 2016 թվականին ևս շարունակվել է Կենտրոնական բանկի և Հարվարդի համալսարանի համագործակցությունը: 2016 թ. հուլիսի 15-ին ՀՀ կենտրոնական բանկը Հարվարդի համալսարանի Ռուսական և եվրասիական ուսումնասիրությունների «Դեվիս» կենտրոնի հետ կնքել է Փոխըմբռնման հուշագիր, որով ամրապնդում և շարունակական է դարձնում արդեն իսկ գոյություն ունեցող համագործակցության կապերը: Նույն հուշագրով համաձայնություն է ձեռք բերվել նաև, որ Հարվարդի համալսարանը տարեկան կհյուրընկալի ՀՀ կենտրոնական բանկի 2 աշխատակցի՝ ֆինանսների, մակրոտնտեսագիտության, հանրային կառավարման բնագավառներում ակադեմիական հետազոտություններ իրականացնելու նպատակով:

2016 թվականին Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում ամառային պրակտիկա են անցել Հարվարդի համալսարանի 3, Չինաստանի HUNAN ազգային համալսարանի 1 և Ստենֆորդի համալսարանի 2 (դոկտորանտուրայի) ուսանող:

Միջազգային համագործակցության շրջանակներում 2016 թվականին Դիլիջանի կենտրոնում կազմակերպվել և անցկացվել են տարածաշրջանային և միջազգային նշանակության տասնյակ գիտաժողովներ, կոնֆերանսներ, սեմինար-քննարկումներ, դասընթացներ, տեխնիկական զարգացմանն ուղղված հաքաթոն, ֆորումներ և այլն:

2016 թ. մայիսի 15 - 21-ը Դիլիջանի կենտրոնում տեղի է ունեցել կենտրոնական/ազգային բանկերի, ԱՄՀ, Վիեննայի միացյալ ինստիտուտի և Կարողությունների զարգացման ինստիտուտի տեխնիկական համագործակցության գծով համակարգողների աշխատանքային հանդիպում: Հանդիպման հիմնական նպատակն էր քննարկել վերոնշյալ կազմակերպությունների ու բանկերի միջև առկա փոխգործակցության հետագա հնարավորություններն ու նոր մոտեցումները:

2016 թ. մայիսի 30 - հունիսի 4-ը Կենտրոնում անցկացվել է «Միջազգային ստանդարտների ներդրումը Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) ֆինանսական վիճակագրությունում» թեմայով միջազգային սեմինար:

2016 թ. հուլիսի 5 - 10-ը Դիլիջանի կենտրոնում կայացել է «Չինական յուանի շուկաներում ներդրումներ կատարելու հնարավորությունները» թեմայով կենտրոնական բանկերի տարածաշրջանային կոնֆերանս, որին մասնակցել են 26 հյուրեր 11 երկրներից՝ Ալբանիա, Ավստրիա, Բելառուս, Չինաստան, Չեխիա, Հնդկաստան, Ինդոնեզիա, Լիբանան, Լեհաստան, Ռուսաստան, Սլովակիա:

2016 թ. սեպտեմբերի 13-ից 19-ը Դիլիջանի կենտրոնում կենտրոնական բանկերի 19-րդ Մակրոմոդելավորման համաժողովի շրջանակներում կազմակերպվեց «Մակրոտնտեսագիտության արդի խնդիրները» թեմայով աշխատաժողով: Միջոցառումը եզակի էր իր բնույթով, մասնակիցների թվով և ինչպես Հայաստանում, այնպես էլ տարածաշրջանում անցկացվում էր առաջին անգամ: Համաժողովը մի հարկի տակ էր հավաքել աշխարհի տարբեր հայտնի տնտեսագիտական համալսարանների, կենտրոնական բանկերի և միջազգային կազմակերպությունների ավելի քան 130 տնտեսագետների: Համաժողովի դասախոսներն էին ոլորտի անվանի մասնագետներ, այդ թվում՝ Չիկագոյի «Նորթվեստեռն» համալսարանի պրոֆեսոր Լոուրենս Քրիստիանոն (որպես համաժողովի հիմնական դասախոս), ԱՄՆ «Ջոն Հոփկինս» համալսարանի դասախոս Քրիստոֆեր Դիքսոն Քերոլը, Ֆրանսիայի բանկի խորհրդատու, «Dynare» ծրագրային փաթեթի հեղինակներից Մայքլ Ժույաղը և Արժույթի միջազգային հիմնադրամի հետազոտական վարչության տնտեսական մոդելավորման բաժնի պետ Դուգլաս Լաքստոնը: Միջոցառումն առաջին անգամ բաց հեռարձակվել է Youtube ինտերնետային կայքի Կենտրոնական բանկի ալիքով: Կենտրոնական բանկի աշխատակիցները հանդես են եկել զեկույցներով՝ որպես ներկայացվող հետազոտական աշխատանքների բանավիճողներ: Համաժողովը մեծ հնարավորություն էր ընձեռում մասնակիցներին, այդ թվում՝ ՀՀ ԿԲ աշխատակիցներին, ուսումնասիրելու ոլորտի միջազգային փորձը, որը մեծապես նպաստել է հետագա վերլուծությունների և հետազոտությունների, ինչպես նաև առաջադրանքների կատարման արդյունավետության բարձրացմանը: Բացի խորհրդատվությունից, համաժողովի նպատակներից էր նաև հետազոտողների շրջանում ՀՀ ԿԲ Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնը միջազգային մակարդակով ճանաչելի դարձնելը:


2016 թվականի ընթացքում Կենտրոնական բանկը հյուրընկալել և համագործակցության նոր շրջանակներ է հաստատել «Global Public Speaking» ՍՊԸ հիմնադիր էլսոն Շապիրայի հետ, որի արդյունքում կազմակերպվել է «Հռետորական արվեստ» թեմայով դասընթաց Կենտրոնական բանկի 30 աշխատակիցների համար:

Ֆինանսական ներգրավվածության արդի միտումներն ու զարգացման ուղիները, ֆինանսական ոլորտում վարքագծային հետազոտության նոր մոտեցումների կիրառման հնարավորություններն առավել մատչելի և հասանելի ներկայացնելու նպատակով, Ֆինանսական ներգրավվածության միության հետ համատեղ, Կենտրոնական բանկի Դիլիջանի կենտրոնում կազմակերպվել է «Վարքագծային հմտություններ սպառողների պաշտպանության քաղաքականության համար» տարածաշրջանային դասընթացը, որին մասնակցել են Կենտրոնական բանկի և օտարերկրյա բանկերի 15-ական աշխատակիցներ:

Հաշվի առնելով ՖՀՄ-ների՝ կորպորատիվ գործիքների և ֆինանսական ծառայությունների վերաբերյալ վերլուծություններ կատարելու կարողությունների զարգացման անհրաժեշտությունը և ապագա դասավանդողներ պատրաստելու խնդիրները, էգմոնտ խմբի տեխնիկական աջակցության և վերապատրաստման աշխատանքային խմբի կողմից Կենտրոնական բանկի Դիլիջանի կենտրոնում կազմակերպվել է «Կորպորատիվ գործիքներ և ֆինանսական ծառայություններ, ինչպես նաև դասավանդողների նախապատրաստում» թեմայով դասընթաց, որին մասնակցել է էգմոնտ խմբի անդամ ՖՀՄ-ների շուրջ 20 ներկայացուցիչ:


Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների կենտրոնական և ազգային բանկերի միջև համագործակցության շրջանակներում Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում անցկացվել է 7 դասընթաց, որին մասնակցել են ինչպես ԵՏՄ երկրների, այնպես էլ օտարերկրյա այլ բանկերի մոտ 121 ներկայացուցիչներ: Կենտրոնական բանկը կազմակերպել է հատուկ թեմաներով գործնական դասընթացներ, կատարվել է փորձի փոխանակում, միջոցառման ընթացքում ԿԲ 34 աշխատակիցներ ներկայացրել են Կենտրոնական բանկի լավագույն փորձը:

2016 թվականին Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում կազմակերպվել է հաքաթոն, որի նպատակն է եղել միավորել ֆինանսական ծառայությունները և թվային տեխնոլոգիաները: Միջոցառումը համատեղ կազմակերպել են «Մայքրոսոֆթ Հայաստան», «Դոմ-Դանիել», «ՆԱՍ-ԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ընկերությունները և ՀՀ կենտրոնական բանկը: Այն հնարավորություն է ընձեռել տեղեկատվական տեխնոլոգիաների սկսնակ և գործող 100 մասնագետների (21 խումբ) 18 ժամվա ընթացքում ստեղծել նորարարական նախագծեր՝ օգտագործելով Microsoft-ի BlockChain, Cognitive Services, Cortana Analytics և Bot Framework տեխնոլոգիական հարթակները: Արդյունքում, այս միջոցառումը տնտեսության մասնավոր հատվածի համար հնարավորություն է ստեղծել հաքաթոնի մասնակիցների գաղափարները ֆինանսական համակարգում ներդնելու համար:



60+
դասընթացներ

1000+
Մասնակից



ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԵՏ




Կորպորատիվ-սոցիալական պատասխանատվության շրջանակներում Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնը, լինելով Դիլիջան քաղաքի համայնքի մաս, տարվա ընթացքում շարունակել է քաղաքի զարգացմանն ուղղված իր առաքելությունը: Կենտրոնը քաղաքի զարգացումը դիտարկում է որպես իր կորպորատիվ սոցիալական պատասխանատվության մանդատի գլխավոր բաղադրիչ:

Կենտրոնական բանկի օժանդակությամբ շարունակել են գործել Դիլիջանի կենտրոնական դպրոցը, «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը, «Գիտելիք հանուն զարգացման» կենտրոնում գործող գրադարանը և քաղաքի կյանքի համար կարևոր այլ ենթակառուցվածքներ: Կենտրոնը շարունակում է նախաձեռնել մի շարք կրթական ծրագրեր, որոնք հնարավորություն կտան ապահովելու երեխաների բազմակողմանի զարգացումը: Այդպիսի նախագծերից է Դիլիջանի կենտրոնական դպրոցը, որը կառավարվում է «Այբ» հիմնադրամի կողմից: Դպրոցում աշակերտների 80%-ը դիլիջանցիներ են, իսկ ուսուցիչների մի մասը տարածաշրջանի բնակիչներ են, որոնք վերապատրաստվել են «Այբ» կրթական համալիրի ծրագրով:

«Գիտելիք հանուն զարգացման» կենտրոնը հնարավորություն է տալիս Դիլիջան քաղաքի և հարակից շրջանների երեխաներին օգտվել հարուստ գրականություն ունեցող գրադարանից, ունենալ ընդհանուր շփման և քննարկումների հարթակ, մասնակցել կենտրոնի կողմից կազմակերպվող բաց դասերին և միջոցառումներին: 2016 թվականի ընթացքում «Գիտելիք հանուն զարգացման» կենտրոնն ունեցել է 1426 ընթերցող, որոնցից 298-ը գրանցվել են ընթացիկ տարում: Գրադարանը տարվա ընթացքում տրամադրել է 5041 գիրք, ինչը գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը 325-ով: Կենտրոնը ակտիվ գործունեություն է ծավալել նաև երեխաների զարգացման և ստեղծարար որակների կերտման ուղղությամբ՝ կազմակերպելով 212 տարաբնույթ միջոցառումներ:

Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի մեկ այլ նախաձեռնություն է «ԹՈՒՄՈ» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի հետ համագործակցությունը, որը հնարավորություն է տալիս 410 երեխայի, այդ թվում՝ սահմանամերձ գյուղերի 15 երեխաների, օգտվելու կենտրոնի առաջարկած ծրագրերից: Ծրագիրը մեծ հետաքրքրություն է ներկայացնում 12-18 տարեկան երեխաների շրջանում, ինչի արդյունքում 2016 թվականի ընթացքում կենտրոն հաճախող գրանցված աշակերտների թիվը ավելացել է 100-ով: Հավելենք նաև, որ «ԹՈՒՄՈ» ստեղծարար տեխնոլոգիաների ծրագրերի շրջանակը ժամանակի ընթացքում ընդլայնվել է:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անկախ աուդիտորական եզրակացություն	83
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն	87
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	88
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	90
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	91
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	
1. Գործունեության նկարագրություն	93
2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում	94
3. Հաշվապահական հաշվառման նոր հրապարակումներ	111
4. Տոկոսային եկամուտ	114
5. Տոկոսային ծախս	114
6. Զուտ (վնաս)/օգուտ փոխարժեքային տարբերություններից	115
7. Զուտ օգուտ/(վնաս) ածանցյալ գործիքներից	115
8. Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից	116
9. Այլ եկամուտ	116
10. Թղթադրամների, դրամագիտական արժեքների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր	117
11. Այլ ծախսեր	117
12. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ	118
13. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	122
14. Ածանցյալ ֆինանսական գործիքներ	123
15. Ներդրումային արժեթղթեր	124
16. Գործարքներ Արժույթի միջազգային հիմնադրամի հետ	125
17. Հիմնական միջոցներ	129
18. Ոչ նյութական ակտիվներ	130
19. Այլ ակտիվներ տեղական արժույթով	130
20. Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	131
21. Այլ փոխառություններ	131
22. Այլ պարտավորություններ տեղական արժույթով	132
23. Պարտավորություններ Հայաստանի Հանրապետության Կառավարության հանդեպ	133
24. Թողարկված պարտատոմսեր	133
25. Կապիտալի կառավարում	134
26. Պայմանական պարտավորություններ	135
27. Գործարքներ կապակցված կողմերի հետ	135
28. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	139
29. Ֆինանսական գործիքների իրական արժեք	139
30. Ռիսկերի կառավարում	145
31. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն	159

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին

ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (Բանկ) և իր դուստր կազմակերպությունների (միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը և 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի ֆինանսական վիճակը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ների):

Կարծիքի արտահայտման հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պարտականությունները նկարագրված են ստորև *«Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների Վարքագծի Միջազգային Ստանդարտների Խորհրդի *Պրոֆեսիոնալ Հաշվապահների Վարքագրքի* (ՀՎՄՄԽ Վարքագիրք), և մենք կատարել ենք վարքագծի հետ կապված մեր այլ պարտականությունները համաձայն ՀՎՄՄԽ Վարքագրքի: Մենք գտնում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանքներ

Խմբի 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական ընկերության կողմից, որի 2016 թվականի ապրիլի 22-ի եզրակացությունում արտահայտվել է չձևափոխված կարծիք նշված համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Խմբի 2016թ. Տարեկան հաշվետվության մեջ ներառված այլ տեղեկատվություն

Այլ տեղեկատվությունը ներառում է 2016թ. Տարեկան հաշվետվության մեջ ներառված տեղեկատվությունը, բացի համախմբված ֆինանսական հաշվետվություններից և դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացությունից: Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք այդ տեղեկատվության վերաբերյալ չենք տրամադրում կարծիք, որը որևէ ձևով կարտահայտի հավաստիացում տվյալ տեղեկատվության վերաբերյալ:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի հետ կապված, մեր պարտավորությունն է ծանոթանալ այլ տեղեկատվությանը և դրանով դիտարկել, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և համախմբված ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր գիտելիքների միջև, և թե արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ: Եթե մեր կատարած աշխատանքը հիմք է հանդիսանում եզրակացնելու, որ այլ տեղեկատվությունը պարունակում է էական խեղաթյուրումներ, մենք պարտավոր ենք տեղեկացնել այդ փաստի մասին: Մենք այդպիսի փաստերի մասին տեղեկություն չունենք:

Ղեկավարության և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է համախմբված ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ներին համապատասխան պատրաստելու և ճշմարիտ ներկայացնելու, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, համապատասխան դեպքերում անընդհատ գործելու հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Խումբը, ընդհատել դրա գործունեությունը կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը պատասխանատու է Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկա-

յացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտների համաձայն իրականացրած աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Աուդիտի միջազգային ստանդարտների համաձայն իրականացրած աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն աուդիտի ողջ ընթացքում: Մենք նաև իրականացնում ենք հետևյալը.

- Հայտնաբերում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության վերաբերյալ՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, սակայն ոչ Խմբի ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով:
- Գնահատում ենք կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան տեղեկատվության բացահայտման խելամտությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Խմբի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզանից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն դարձնել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Խմբի գործունեության անընդհատության դադարեցմանը:

- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ընկերությունների ֆինանսական տեղեկատվության և ձեռնարկատիրական գործունեությունների վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք խմբի աուդիտի հանձնարարման, վերահսկման և իրականացման համար: Մենք միանձնյա պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Ի թիվս այլ հարցերի, մենք Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդին տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող կարևոր թերությունների մասին:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ

Աուդիտի բաժնի հիմնադիր գործընկեր՝ Էրիկ Հայրապետյան

Գլխավոր տնօրեն Հ. Սարգսյան՝
ի դեմս լիազորված անձ Է. Հայրապետյանի
(գործող 01.08.2016թ. տրված լիազորագրի հիման վրա)

31 մարտի, 2017թ.
ՀՀ, ք. Երևան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն
2016 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

հազար ՀՀ դրամ

	Ծնթգ.	2016 թ.	2015 թ.
Տոկոսային եկամուտ	4	24,696,468	37,900,805
Տոկոսային ծախս	5	(10,229,329)	(13,194,070)
Զուտ տոկոսային եկամուտ		**14,467,139**	**24,706,735**
Միջնորդավճարների գծով եկամուտ		57,810	74,272
Միջնորդավճարների գծով ծախս		(858,255)	(598,098)
Զուտ (վնաս)/օգուտ փոխարժեքային տարբերություններից	6	(2,647,523)	3,622,430
Զուտ օգուտ/(վնաս) ածանցյալ գործիքներից	7	637,643	(2,326,440)
Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից	8	4,321,214	1,729,051
Այլ եկամուտ	9	3,576,016	4,298,004
Թղթադրամների, դրամագիտական արժեքների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր	10	(466,448)	(2,261,951)
Այլ ծախսեր	11	(21,004,558)	(18,697,378)
(Վնաս)/շահույթ մինչև հարկումը		**(1,916,962)**	**10,546,625**
Շահութահարկի գծով ծախս		(1,468,087)	(1,201,644)
Հաշվետու տարվա (վնաս)/շահույթ		**(3,385,049)**	**9,344,981**
(Վնասը)/շահույթը վերագրելի է՝			
Բանկի սեփականատիրոջը		(3,400,332)	9,330,663
Չվերահսկող բաժնեմասին		15,283	14,318
Այլ համապարփակ եկամուտ/(վնաս)			
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող հոդվածներ			
Վաճառքի համար մատչելի ակտիվների իրական արժեքի փոփոխություններից զուտ չիրացված օգուտ/(վնաս)		**2,216,153**	**(1,351,040)**
Հաշվետու տարվա այլ համապարփակ եկամուտ/(վնաս)		**2,216,153**	**(1,351,040)**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ (վնաս)/եկամուտ		**(1,168,896)**	**7,993,941**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ (վնասը)/եկամուտը վերագրելի է՝			
Բանկի սեփականատիրոջը		(1,185,675)	7,976,405
Չվերահսկող բաժնեմասին		16,779	17,536

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2017թ. մարտի 31-ին ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից և ստորագրվել՝

ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահ

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի գլխավոր հաշվապահ

1-31 ծանոթագրությունները հանդիսանում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն
2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

հազար ՀՀ դրամ

	Մեկն.	31 դեկտեմբերի 2016 թ.	31 դեկտեմբերի 2015 թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ակտիվներ արտարժույթով			
Կանխիկ դրամ		24,771,453	12,117,804
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	12	423,000,092	270,495,708
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	13	591,641,527	512,762,352
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	14	-	103,306
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	15	2,209,431	2,222,840
Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ	15	31,431,281	63,733,713
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	16	85,480,295	63,055,674
Այլ ակտիվներ		1,612,496	98,682
Ընդամենը ակտիվներ արտարժույթով		**1,160,146,575**	**924,590,079**
Ակտիվներ տեղական արժույթով			
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ	12	284,341,346	316,776,643
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	13	2,352,333	1,665,748
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	15	101,788,443	101,286,020
Հիմնական միջոցներ	17	75,507,181	76,882,574
Ոչ նյութական ակտիվներ	18	1,582,082	1,739,384
Այլ ակտիվներ	19	13,491,471	12,593,456
Ընդամենը ակտիվներ տեղական արժույթով		**479,062,856**	**510,943,825**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**1,639,209,431**	**1,435,533,904**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Պարտավորություններ արտարժույթով			
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	20	258,230,092	186,992,916
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ	23	1,195,241	1,309,572
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	14	79,950	30,727
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	16	279,123,932	252,939,131
Այլ փոխառություններ	21	113,192,723	99,940,464
Այլ պարտավորություններ		367,852	393,461
Ընդամենը պարտավորություններ արտարժույթով		**652,189,790**	**541,606,271**
Պարտավորություններ տեղական արժույթով			
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ		455,401,582	413,613,757
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	20	329,459,340	324,813,907
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ	23	183,925,544	135,230,179
Թողարկված պարտատոմսեր	24	8,788,038	3,244,388
Այլ պարտավորություններ	22	4,067,367	3,014,206
Ընդամենը պարտավորություններ տեղական արժույթով		**981,641,871**	**879,916,437**
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**1,633,831,661**	**1,421,522,708**

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն
2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

(շարունակություն)

հազար ՀՀ դրամ

	Ծնթգ.	31 դեկտեմբերի 2016 թ.	31 դեկտեմբերի 2015թ.
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Թողարկված կապիտալ	25	100,000	100,000
Գլխավոր պահուստ		25,480,248	23,614,115
Կառավարության կողմից թողարկված մուրհակ	25	73,810,843	81,275,373
Վաճառքի համար մատչելի ակտիվների վերագնահատման պահուստ	25	1,083,657	(1,131,000)
Կուտակված վնաս		(95,840,273)	(90,573,808)
Բանկի սեփականատիրոջը վերագրելի զուտ ակտիվներ		**4,634,475**	**13,284,680**
Չվերահսկող բաժնեմաս		743,295	726,516
Ընդամենը սեփական կապիտալ		**5,377,770**	**14,011,196**
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		**1,639,209,431**	**1,435,533,904**

1-31 ծանոթագրությունները հանդիսանում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն
2016 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

հազար ՀՀ դրամ

	Բանկի սեփականատիրոջը վերագրելի							
	Թողարկված կապիտալ	Գլխավոր պահուստ	Կառավարության կողմից թողարկված մուրհակ	Վաճառքի համար մատչելի ակտիվների վերագնահատման պահուստ	Կուտակված վնաս	Ընդամենը	Չվերահսկող բաժնեմաս	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը 2015 թ. հունվարի 1-ին	**100,000**	**17,389,049**	**106,175,637**	**223,258**	**(93,679,405)**	**30,208,539**	**708,980**	**30,917,519**
Շահույթի բաշխում	**-**	**6,225,066**	**(24,900,264)**	**-**	**(6,225,066)**	**(24,900,264)**	**-**	**(24,900,264)**
Հաշվետու տարվա շահույթ	-	-	-	-	9,330,663	9,330,663	14,318	9,344,981
Այլ համապարփակ վնաս	-	-	-	(1,354,258)	-	(1,354,258)	3,218	(1,351,040)
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	**-**	**-**	**-**	**(1,354,258)**	**9,330,663**	**7,976,405**	**17,536**	**7,993,941**
Մնացորդը 2015թ. դեկտեմբերի 31-ին	**100,000**	**23,614,115**	**81,275,373**	**(1,131,000)**	**(90,573,808)**	**13,284,680**	**726,516**	**14,011,196**
Շահույթի բաշխում	**-**	**1,866,133**	**(7,464,530)**	**-**	**(1,866,133)**	**(7,464,530)**	**-**	**(7,464,530)**
Հաշվետու տարվա վնաս	-	-	-	-	(3,400,332)	(3,400,332)	15,283	(3,385,049)
Այլ համապարփակ եկամուտ	-	-	-	2,214,657	-	2,214,657	1,496	2,216,153
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ վնաս	**-**	**-**	**-**	**2,214,657**	**(3,400,332)**	**(1,185,675)**	**16,779**	**(1,168,896)**
Մնացորդը 2016 թ. դեկտեմբերի 31-ին	**100,000**	**25,480,248**	**73,810,843**	**1,083,657**	**(95,840,273)**	**4,634,475**	**743,295**	**5,377,770**

1-31 ծանոթագրությունները հանդիսանում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն
2016 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

հազար ՀՀ դրամ

	Ծնթգ.	2016 թ.	2015 թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
(Վնաս)/շահույթ մինչև հարկումը		(1,916,962)	10,546,625
Ճշգրտումներ՝ հաշվետու տարվա (վնասը)/շահույթը զուտ դրամական հոսքերին համաձայնեցնելու նպատակով			
Մաշվածություն և ամորտիզացիա	11	4,943,278	4,798,352
Հիմնական միջոցների օտարումից օգուտ		(21,523)	(18,318)
Ստացվելիք տոկոսներ		(775,343)	492,606
Վճարվելիք տոկոսներ		374,575	143,094
Զուտ (վնաս) / օգուտ արտարժույթի վերագնահատումից	6	2,883,382	(2,747,923)
Զուտ վնաս իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերաչափումից		1,092,210	2,273,328
Վճարված շահութահարկ		(1,592,996)	(764,929)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր՝ նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները		**4,986,621**	**14,722,835**
Գործառնական ակտիվների զուտ (աճ)/նվազում			
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով		(14,720,786)	35,363,728
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ և ածանցյալ ֆինանսական գործիքներ		(81,862,598)	(164,127,883)
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ		(6,565,535)	-
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով		32,553,231	65,488,664
Այլ ակտիվներ		(1,912,755)	304,157
Գործառնական պարտավորությունների զուտ աճ/(նվազում)			
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ		41,787,825	1,268,815
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ		76,193,210	38,355,781
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ		45,989,830	17,352,744
Թողարկված պարտատոմսեր		5,388,019	(796,564)
Այլ պարտավորություններ		1,151,076	(72,015)
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		**102,988,138**	**7,860,262**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(4,067,665)	(3,198,718)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր		41,889	113,996
Վաճառքի համար մատչելի ակտիվների վաճառքից և մարումից մուտքեր		3,377,068	–
Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվների ձեռքբերում		(30,746,502)	(90,363,945)
Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվների մարումից մուտքեր		49,747,753	119,874,639
Զուտ դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		**18,352,543**	**26,425,972**

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն
2016 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար
(շարունակություն)

հազար ՀՀ դրամ

	Ծնթգ.	2016 թ.	2015 թ.
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
Ստացված վարկեր		38,898,587	42,113,260
Մարված վարկեր		(7,998,714)	(14,641,932)
Զուտ դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		**30,899,873**	**27,471,328**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		**(1,331,421)**	**(1,559,643)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ		**150,909,133**	**60,197,919**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբին	28	266,603,602	206,405,683
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջին	28	**417,512,735**	**266,603,602**
Լրացուցիչ տեղեկատվություն			
Ստացված տոկոսներ		23,921,125	38,393,411
Վճարված տոկոսներ		(9,854,754)	(13,050,976)

1-31 ծանոթագրությունները հանդիսանում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Գործունեության նկարագրություն

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտվող տարվա՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (այսուհետ՝ «ՖՀՄՍ») համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ «Բանկ») և վերջինիս դուստր կազմակերպությունների (այսուհետ միասին՝ «Խումբ») գործունեության համար:

Բանկն իրավաբանական անձ է, որի միակ հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է:

Բանկն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքին (այսուհետ՝ «Օրենք») և Հայաստանի Հանրապետության այլ օրենքներին համապատասխան:

Բանկի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան 0010, Վազգեն Սարգսյան փող., 6 շենք: Բանկի աշխատակիցների միջին թվաքանակը 2016 թվականի ընթացքում կազմել է 791 (2015թ.՝ 779):

Բանկը շահույթ ստանալու նպատակ չի հետապնդում: Բանկի գործունեության ֆինանսական արդյունքները, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի կառուցվածքը սահմանվում են Բանկի գործառույթներով:

Համաձայն Օրենքի՝ Բանկի հիմնական խնդիրը գների կայունության ապահովումն է Հայաստանի Հանրապետությունում, որն իրագործվում է դրամավարկային քաղաքականության մշակման և իրականացման միջոցով: Ի լրումն իր հիմնական խնդրի՝ Բանկը նաև պատասխանատու է՝

- Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ այլ պայմանների ապահովման և գործուն վճարահաշվարկային համակարգ ստեղծելու և զարգացնելու համար:

Բանկը նաև՝

- թողարկում է Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը և կարգավորում դրամաշրջանառությունը,
- կազմակերպում և կարգավորում է փողերի «լվացումը» և ահաբեկչության ֆինանսավորումը կանխարգելող միջոցառումներ,
- Հայաստանի Հանրապետության Կառավարության (այսուհետ՝ «Կառավարություն») ֆինանսական գործակալն ու խորհրդատուն է,
- լիցենզավորում է առևտրային բանկերի և, եթե նախատեսված է օրենքով, այլ անձանց և վերահսկում ու կարգավորում է վերջիններիս գործունեությունը,
- առևտրային բանկերի համար վերջին ատյանի վարկատու է, ինչպես նաև
- տիրապետում, օգտագործում և տնօրինում է Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստները:

Բանկի խոշոր դուստր կազմակերպությունները ներկայացված են ստորև.

Անվանումը	Հիմնադրման երկիրը	Հիմնական գործունեությունը	Վերահսկվող %		Հիմնադրման ամսաթիվ
			2016 թ.	2015 թ.	
«Արմենիան Քարդ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Վճարահաշվարկային ծառայություններ	57.5	57.5	մարտ 2000 թ.
«Հայինկասացիա» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Դրամական միջոցների փոխադրումներ	100	100	ապրիլ 1998 թ.
«Համահայկական բանկ» ԲԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Բանկային գործունեություն	100	100	դեկտեմբեր 2009 թ.
«Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Հիփոթեքային վերաֆինանսավորում	100	100	հունիս 2009 թ.
«Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Հիփոթեքային վերաֆինանսավորում	100	100	փետրվար 2010 թ.
«Փոքր և միջին բիզնեսի վարկավորման աջակցություն» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Վարկավորման աջակցություն	100	100	դեկտեմբեր 2010 թ.
«Ավտոտրանսպորտային միջոցների հատուկ նշանակության միասնական պատուհան» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Ապահովագրական ենթակառուցվածքների աջակցություն	100	100	դեկտեմբեր 2013 թ.

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտվող տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջներին համապատասխան՝ Բանկի և վերջինիս դուստր կազմակերպությունների համար:

(բ) Չափման հիմունքները

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի սկզբունքի հիման վրա, բացառությամբ ֆինանսական գործիքների, որոնք սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների (ներառյալ՝ ածանցյալ ֆինանսական գործիքները) և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների, որոնք չափվում են իրական արժեքով: Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են ստորև: Այդ դրույթները հետևողականորեն կիրառվել են հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների նկատմամբ, եթե այլ բան նշված չէ:

(գ) Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ձևը

Բացառիկ դեպքերում համապատասխան հաշվետու ժամանակաշրջանում կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկատվության մանրամասն բացահայտումը կարող է բերել ՀՀ ամբողջ ֆինանսական համակարգի նկատմամբ վստահության կորստի: Հետևաբար, չնայած նման գործառնությունների

ֆինանսական արդյունքներն արտացոլված են Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններում, Խումբը կարող է միայն սահմանափակ բացահայտումներ ներկայացնել նման գործարքների վերաբերյալ:

(դ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը հանդիսանում է նաև Խմբի ֆունկցիոնալ արժույթը և այն արժույթը, որով ներկայացված են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ:

(ե) Գնահատումների և դատողությունների կիրառում

Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում ղեկավարությունն օգտագործել է իր դատողությունները և գնահատումները համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները որոշելիս: Կիրառված էական դատողությունները և գնահատումները հետևյալն են.

Իրական արժեք

Եթե համախմբված ֆինանսական հաշվետվություններում արտացոլվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը հնարավոր չէ որոշել ակտիվ շուկայի գների հիման վրա, ապա այն որոշվում է տարբեր գնահատման մոդելների կիրառմամբ, ներառյալ՝ մաթեմատիկական մոդելները: Այդպիսի մոդելների համար ելակետային տվյալները որոշվում են որպես դիտարկվող շուկաների տվյալներ, եթե դա հնարավոր է: Հակառակ դեպքում իրական արժեքի որոշման համար կիրառում են դատողություններ:

Արժեզրկման գնահատում

Խումբը պարբերաբար կատարում է փոխառությունների և դեբիտորական պարտքերի՝ արժեզրկված լինելու գնահատում: Սեփական փորձից ելնելով՝ Խումբը արժեզրկումից վնասները գնահատելիս օգտագործում է իր սուբյեկտիվ դատողություններն այն դեպքերում, երբ վարկառուն ֆինանսական դժվարություն է կրում և համանման վարկառուների վերաբերյալ չկա բավարար փաստացի տեղեկատվություն: Խումբը համանման կերպով գնահատում է ապագա դրամական հոսքերի փոփոխությունները դիտարկվող տեղեկատվության հիման վրա, որը վկայում է վարկառուների պարտավորությունների մարման ոչ բարենպաստ կարգավիճակի, կա՛մ պետական, կա՛մ տեղական տնտեսական պայմանների փոփոխության մասին, որոնք հարաբերակցվում են տվյալ խմբի ակտիվների գծով պարտավորությունների չկատարման հետ: Ղեկավարությունն օգտագործում է գնահատումներ՝ հիմնվելով ակտիվների նկատմամբ համանման վարկային ռիսկի բնութագրերի և փոխառությունների ու դեբիտորական պարտքերի խմբերի արժեզրկման օբյեկտիվ հայտանիշների պատմական տվյալների վրա: Սեփական փորձից ելնելով՝ Խումբն օգտագործում է իր սուբյեկտիվ դատողությունները դիտարկվող փոխառությունների և դեբիտորական պարտքերի վերաբերյալ տեղեկատվության ճշգրտման համար՝ ընթացիկ իրավիճակը արտացոլելու նպատակով:

Գործարքներ կապակցված կողմերի հետ

Բնականոն գործունեության ընթացքում Խումբը գործարքներ է կնքում կապակցված կողմերի հետ: ՀՀՄՍ 39-ով պահանջվում է ֆինանսական գործիքները սկզբնապես ճանաչել իրենց իրական արժեքով: Դատողություն է կիրառվում որոշելիս, թե արդյոք գործարքները գնանշվում են շուկայական, թե ոչ շուկայական տոկոսադրույքներով, երբ չկա այդպիսի գործարքների համար գործող շուկա: Դատողության համար հիմք է ծառայում չկապակցված կողմերի հետ համանման գործարքների գնանշումը և արդյունավետ տոկոսադրույքի վերլուծությունը: Կապակցված կողմերի հետ մնացորդների պայմաններն ու դրույթները բացահայտված են Ծանոթագրություն 27-ում:

Արժույթի միջազգային հիմնադրամի (այսուհետ՝ «ԱՄՀ») *հետ գործարքների հաշվառում*

Համաձայն «ԱՄՀ-ի գործարքները և ֆինանսական կազմակերպումը» ուղեցույցի՝ ԱՄՀ-ի յուրաքանչյուր անդամ նշանակում է ֆիսկալ գործակալություն (ֆինանսների նախարարություն, կենտրոնական բանկ կամ համանման կազմակերպություն)՝ ԱՄՀ-ի հետ ֆինանսական գործարքներ կատարելու համար և պահառուի՝ (կենտրոնական բանկ կամ համանման գործակալություն)՝ ԱՄՀ-ի հաշիվները պահելու համար (ԱՄՀ թիվ 1 և 2 հաշիվներ և արժեթղթերի հաշիվ):

Համաձայն «Արժույթի միջազգային հիմնադրամին, Վերակառուցման և զարգացման միջազգային բանկին, Միջազգային ֆինանսական կորպորացիային, Զարգացման միջազգային ասոցիացիային, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկին, Կապիտալ ներդրումների բազմակողմանի երաշխիքների գործակալությանը և Կապիտալ ներդրումների վերաբերյալ տարաձայնությունների կարգավորման միջազգային կենտրոնին Հայաստանի Հանրապետության անդամակցության մասին» ՀՀ օրենքի՝ Բանկը ըստ ԱՄՀ-ի հետ կնքված պայմանագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի, հանդես է գալիս որպես Հայաստանի Հանրապետության ֆիսկալ գործակալ: Բանկը համարվում է նաև Հայաստանի Հանրապետության պահառու:

Այն դեպքում, երբ Կենտրոնական բանկն ԱՄՀ-ի հետ գործառնություններում իրականացնում է ֆիսկալ գործակալի գործառույթ, արդյունքում առաջացած ակտիվների և պարտավորությունների գումարները և գործառնությունների արդյունքները արտացոլվում են Կենտրոնական բանկի ֆինանսական վիճակի և շահույթի կամ վնասի մասին հաշվետվություններում: Երբ Կենտրոնական բանկը ԱՄՀ-ի հետ գործառնություններում իրականացնում է պահառուի գործառույթ, բոլոր գործառնություններն իրականացվում են Կենտրոնական բանկի թղթակցային հաշիվների միջոցով, սակայն այդ գործառնությունների արդյունքում առաջացող ակտիվների և պարտավորությունների գումարները և համապատասխան շահույթը կամ վնասը չեն արտացոլվում Կենտրոնական բանկի՝ ֆինանսական վիճակի և շահույթի կամ վնասի մասին հաշվետվություններում:

(զ) Նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին անցում

Խումբը ընդունել է հետևյալ նոր ՖՀՄՍ ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք ուժի մեջ են 2016 թվականի հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար:

ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ. Նախաձեռնություն տեղեկատվության բացահայտման ոլորտում (հրապարակված 2014թ. դեկտեմբերին)

ՀՀՄՍ 1-ում կատարված փոփոխությունները հստակեցնում են, այլ ոչ թե էապես փոխում ՀՀՄՍ 1-ի առկա պահանջները: Փոփոխությունները պարզաբանում են հետևյալը՝

- ՀՀՄՍ 1-ի պահանջները էականության նկատմամբ,
- Ֆինանսական արդյունքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունների առանձին հոդվածները կարող են առանձնացվել,
- Կազմակերպություններն ունեն հնարավորություն ընտրելու ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրությունների ներկայացման կարգը,
- Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ասոցիացված կազմակերպությունների և համատեղ ձեռնարկությունների համապարփակ եկամտի մասը պետք է ներկայացվի ամբողջությամբ մեկ հոդվածում և դասակարգվի որպես հոդվածներ, որոնք հետագայում կդասակարգվեն կամ չեն դասակարգվի շահույթի կամ վնասի կազմում:

Բացի այդ, փոփոխությունները պարզաբանում են այն պահանջները, որոնք կիրառվում են ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններում լրացուցիչ միջանկյալ ենթագումարների բացահայտման ժամանակ: Փոփոխությունները ուժի մեջ են 2016 թվականի հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Այս փոփոխությունները Խմբի վրա ազդեցություն չունեն:

ՖՀՄՍ 10, ՖՀՄՍ 12 և ՀՀՄՍ 28–ում փոփոխություններ. Ներդրումային կազմակերպություններ՝ համախմբման բացառության կիրառում (հրապարակված 2014թ. դեկտեմբերին)

Փոփոխությունները վերաբերում են այն խնդիրներին, որոնք ի հայտ են եկել ՖՀՄՍ 10-ի համաձայն ներդրումային կազմակերպություններին համախմբման պահանջից ազատման բացառության կիրառման արդյունքում: ՖՀՄՍ 10-ի փոփոխությունները պարզաբանում են, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման պահանջից ազատումը վերաբերում է այն մայր կազմակերպությանը, որը հանդիսանում է որևէ ներդրումային կազմակերպության դուստր, որն իր բոլոր դուստր կազմակերպություններին չափում է իրական արժեքով:

Ավելին, ՖՀՄՍ 10-ի փոփոխությունները պարզաբանում են, որ պետք է համախմբվի ներդրումային ընկերության միայն այն դուստր կազմակերպությունը, որն իր հերթին ներդրումային կազմակերպություն չէ և աջակցող ծառայություններ է տրամադրում ներդրումային կազմակերպությանը: Ներդրումային կազմակերպության մնացած այլ դուստր կազմակերպությունները չափվում են իրական արժեքով: «*Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում*» ՀՀՄՍ 28–ում փոփոխությունները թույլ են տալիս ներդրողին բաժնեմասնակցության մեթոդը կիրառելիս պահպանել ներդրումային կազմակերպության հետ ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկության կողմից դուստր ընկերություններում իր բաժնեմասնակցության նկատմամբ կիրառած իրական արժեքի չափումը:

Փոփոխությունները պետք է կիրառվեն հետընթաց և ուժի մեջ են 2016 թվականի հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Սույն փոփոխությունները որևէ ազդեցություն չունեն Խմբի վրա:

ՖՀՄՍ 2014թ. տարեկան փոփոխություններ (հրապարակված 2014թ. սեպտեմբերին)

Փոփոխություններն ուժի մեջ են 2016 թվականի հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Դրանք մասնավորապես ներառում են՝

ՖՀՄՍ 5 «Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործունեություն»

Ակտիվները (կամ օտարման խմբերը) ընդհանուր առմամբ օտարվում են կա՛մ վաճառքի, կա՛մ սեփականատերերի միջև բաշխման միջոցով: ՖՀՄՍ 5-ի փոփոխությունը պարզաբանում է, որ նշված օտարման մեթոդներից մեկը մյուսով փոխարինելը չի նշանակի օտարման նոր պլան, այլ այն կհանդիսանա սկզբնական ծրագրի շարունակություն: Հետևաբար ՖՀՄՍ 5-ի պահանջների կիրառման ընդհատում չի լինի: Փոփոխությունը պետք է կիրառվի առաջընթաց կերպով:

ՖՀՄՍ 7 «Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ»

Փոփոխությունը պարզաբանում է, որ ծառայությունների մատուցման պայմանագիրը, որը ներառում է միջնորդավճար, կարող է հանդիսանալ ֆինանսական ակտիվի շարունակական ներգրավվածություն: Կազմակերպությունը պետք է գնահատի միջնորդավճարի բնույթը և պայմանագիրը ՖՀՄՍ 7-ի շարունակական մասնակցության ուղեցույցի համաձայն՝ գնահատելու համար, թե արդյոք պահանջվում են բացահայտումներ: Փոփոխությունը պետք է կիրառվի այնպես, որ շարունակական ներգրավվածություն կազմող ծառայությունների մատուցման պայմանագրերի գնահատումը կատարվի հետընթաց: Սակայն պահանջվող բացահայտումները չպետք է կատարվեն ավելի վաղ ժամանակահատվածներում, քան այն տարեկան ժամանակաշրջանը, երբ կազմակերպությունն առաջին անգամ կիրառում է փոփոխությունները:

Փոփոխությունները էական ազդեցություն չեն ունեցել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

(է) Համախմբման հիմունքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են Բանկի և վերջինիս դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Դուստր կազմակերպություններն այն կազմակերպություններն են, որոնցում կատարվել են ներդրումներ և որոնք

վերահսկվում են Խմբի կողմից: Վերահսկողությունը ձեռք է բերվում, երբ Խումբը ստանում է փոփոխական հատույցների իրավունք կամ ռիսկին ենթարկվածություն՝ ներդրման օբյեկտում ներգրավվածության արդյունքում, ինչպես նաև ունի իր իշխանությունն օգտագործելու կարողություն՝ այդ հատույցների վրա ազդելու համար:

Մասնավորապես, Խումբն ունի վերահսկողություն միայն այն դեպքում, երբ.

- ունի կարողություն ուղղորդելու ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպության որոշակի գործունեությունը, որը զգալի ներգործություն ունի հատույցների վրա,
- կրում է հատույցներ չստանալու ռիսկը կամ ստանում է փոփոխական հատույցներ ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպությունում իր մասնակցությունից, և
- հնարավորություն ունի օգտագործելու ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպության վրա ազդեցություն ունենալու կարողությունը՝ ներդրողների հատույցների գումարի վրա ներգործություն ունենալու համար:

Երբ Խումբն ունի ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպությունում մեծամասնությունից քիչ քվեարկող բաժնետոմսեր կամ համանման այլ իրավունքներ, Խումբը դիտարկում է բոլոր համապատասխան փաստերն ու հանգամանքները՝ գնահատելիս, թե արդյոք այն ունի ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպության վրա ազդեցություն ունենալու կարողություն, ներառյալ.

- ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպության քվեարկող բաժնետոմսերի այլ սեփականատերերի հետ պայմանագրային պայմանավորվածություն,
- այլ պայմանագրային պայմանավորվածություններից ծագող իրավունքներ,
- Խմբի քվեարկող բաժնետոմսեր և հնարավոր քվեարկող բաժնետոմսեր:

Խումբը վերագնահատում է, թե արդյոք այն վերահսկում է ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպությանը, եթե փաստերն ու հանգամանքները վկայում են, որ փոփոխություններ են տեղի ունեցել վերահսկողության երեք տարրերից մեկում կամ մի քանիսում: Դուստր կազմակերպության համախմբումը սկսվում է այն ժամանակ, երբ Խումբը ձեռք է բերում վերահսկողություն դուստր կազմակերպության նկատմամբ, և դադարում է, երբ Խումբը կորցնում է վերահսկողությունը դուստր կազմակերպության նկատմամբ:

Խմբի ընկերությունների միջև գործարքները, մնացորդները և գործարքներից չիրացված շահույթը բացառվում են, չիրացված վնասները նույնպես բացառվում են, բացառությամբ այն դեպքերի, երբ ծախսը չի կարող վերականգնվել: Բանկը և իր բոլոր դուստր կազմակերպությունները կիրառում են հաշվապահական հաշվառման միասնական քաղաքականություն՝ Խմբի քաղաքականությանը համահունչ:

Դուստր կազմակերպության սեփականության մասնաբաժնի փոփոխությունը առանց վերահսկողության փոփոխության հաշվառվում է որպես սեփական կապիտալի գործարք: Վնասները վերագրելի են չվերահսկող բաժնեմասին, նույնիսկ եթե դա հանգեցնում է բացասական մնացորդի:

Չվերահսկող բաժնեմասը դուստր կազմակերպության սեփական կապիտալի և զուտ արդյունքների այն մասն է, որը վերագրելի է այն բաժնեմասին, որի սեփականության իրավունքը ուղղակի կամ անուղղակի կերպով չի պատկանում Խմբին: Չվերահսկող բաժնեմասը կազմում է Խմբի սեփական կապիտալի առանձին բաղադրիչ:

Խումբը գնահատում է չվերահսկող բաժնեմասը, որն իրենից ներկայացնում է ներկայիս սեփականության մասնաբաժինը և կրողին տալիս է զուտ ակտիվների նկատմամբ համամասնական իրավունք լուծարման դեպքում՝ յուրաքանչյուր առանձին գործառնության արժեքի սկզբունքով՝ հիմք ընդունելով ձեռք բերվող կազմակերպության զուտ ակտիվներում չվերահսկող բաժնեմասի համամասնությունը կամ իրական արժեքը:

Ասոցիացված կազմակերպություններ

Ասոցիացված կազմակերպություններն այն բիզնես միավորներն են, որոնց նկատմամբ Խումբն ունի էական ազդեցություն (ուղղակիորեն կամ անուղղակիորեն), սակայն չունի վերահսկողություն՝ տիրապետելով քվեարկող ձայների 20-ից 50 տոկոսին: Ասոցիացված կազմակերպություններում ներդրումները հաշվառվում են՝ կիրառելով հաշվառման բաժնեմասնակցության մեթոդը և սկզբնապես ճանաչվում են

սկզբնական արժեքով: Ասոցիացված ընկերության հաշվեկշռային արժեքը ներառում է գնման պահին որոշված գուդվիլը՝ հանած կուտակված արժեզրկման կորուստներ (եթե այդպիսիք կան): Ասոցիացված կազմակերպություններից ստացված շահաբաժինները նվազեցնում են ասոցիացված կազմակերպություններում ներդրման հաշվեկշռային արժեքը: Ձեռքբերումից հետո ասոցիացված կազմակերպության զուտ ակտիվներում Խմբի բաժնեմասին վերաբերող այլ փոփոխությունները ճանաչվում են հետևյալ կերպ. (ա) ասոցիացված ընկերության շահույթում կամ վնասում Խմբի մասնաբաժինը ներառվում է տվյալ տարվա համախմբված շահույթ/վնասում՝ որպես ասոցիացված կազմակերպությունների արդյունքի մաս, (բ) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում Խմբի բաժնեմասը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ առանձին տողով, (գ) ասոցիացված ընկերության զուտ ակտիվների հաշվեկշռային արժեքի՝ Խմբի բաժնեմասին վերաբերող այլ փոփոխությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես ասոցիացված կազմակերպության արդյունքների մաս:

Սակայն երբ ասոցիացված կազմակերպության վնասներում Խմբի մասնաբաժինը հավասար է կամ գերազանցում է ասոցիացված կազմակերպությունում իր ունեցած բաժնեմասին, ներառյալ ցանկացած այլ չապահովված դեբիտորական պարտքեր, Խումբն այլևս չի ճանաչում հետագա վնասները, բացառությամբ այն դեպքերի, երբ այն ձեռք է բերել պարտավորություններ կամ կատարել է վճարումներ ասոցիացված կազմակերպության անունից:

(ը) Արտարժույթի փոխարկում և արտարժութային հոդվածների ներկայացում

Արտարժույթով իրականացված գործարքները սկզբնապես ճանաչվում են ֆունկցիոնալ արժույթով՝ գործարքի օրվա դրությամբ Բանկի կողմից հրապարակված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի՝ այդ օրվա դրությամբ Բանկի կողմից հրապարակված փոխարժեքով:

Արտարժույթի փոխարկումից ստացված օգուտները և վնասները ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտ/(վնաս): Տարեվերջի փոխարժեքով փոխարկում կատարելու սկզբունքը չի կիրառվում սկզբնական արժեքով գնահատվող ոչ դրամային հոդվածների նկատմամբ:

Արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները, որոնք չափվում են իրական արժեքով (ներառյալ՝ բաժնային ներդրումները), վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով:

Արտարժույթով իրականացվող գործարքների պայմանագրային փոխարժեքի և այդ օրվա դրությամբ Բանկի կողմից հրապարակված փոխարժեքի տարբերությունը ներառվում է համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվության մեջ:

Խմբի կողմից համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները 2016 և 2015 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ.

	31 դեկտեմբերի 2016 թ.	31 դեկտեմբերի 2015 թ.
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	483.94	483.75
ՀՀ դրամ/1 եվրո	512.20	528.69
ՀՀ դրամ/1 ՀՓԻ (Հատուկ փոխառության իրավունք)	650 .58	670.35

(թ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները այն միավորներն են, որոնք ազատ փոխարկելի են նախապես հայտնի դրամական գումարների և ենթակա են արժեքի փոփոխության ոչ նշանակալի ռիսկի:

Խումբը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ է համարում կանխիկ դրամը, բանկերում տեղաբաշխված նոստրո հաշիվները և ԱՄՀ-ում տեղաբաշխված ՀՓԻ միջոցները: Միջոցները, որոնց օգտագործումը սահմանափակվում է ձևավորման պահից երեք ամսից ավելի ժամանակահատվածով, չեն հանդիսանում դրամական միջոցներ և դրանց համարժեքներ: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

(ժ) Ֆինանսական գործիքներ – գնահատման հիմնական պայմաններ

Խումբը չափում է ֆինանսական գործիքները, ինչպիսիք են՝ իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքները, վաճառքի համար մատչելի ակտիվները և ածանցյալ գործիքները՝ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքը բացահայտված է Ծանոթագրություն 29-ում:

Իրական արժեքն այն գինն է, որը կստացվեր ակտիվը վաճառելիս կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելիս՝ չափման ամսաթվի դրությամբ շուկայի մասնակիցների միջև կանոնավոր գործարքում: Իրական արժեքի լավագույն վկայությունն է գործող շուկայում գինը: Գործող շուկան այն շուկան է, որում ակտիվի կամ պարտավորության հետ կապված գործարքները տեղի են ունենում բավականաչափ հաճախականությամբ և ծավալով՝ շարունակական կերպով գնային տեղեկատվություն տրամադրելու համար:

Գործող շուկայում վաճառվող ֆինանսական գործիքների իրական արժեքը գնահատվում է որպես անհատական ակտիվի կամ պարտավորության գնանշված գնի և Խմբի կողմից պահվող քանակի արտադրյալ: Նշված սահմանումը գործում է նույնիսկ այն դեպքում, երբ շուկայում բնականոն օրական վաճառքի ծավալը բավարար չէ պահվող ծավալը կլանելու համար, և մեկ գործարքում դիրքը վաճառելու պատվերների տեղադրումը կարող է ազդեցություն ունենալ գնանշված գնի վրա: Գնահատման մեթոդները, ինչպիսիք են զեղչված դրամական հոսքերի մոդելները կամ վերջերս կատարված «անկախ կողմերի միջև գործարքների» կամ ներդրում ստացող կազմակերպությունների ֆինանսական տվյալների ստացման վրա հիմնված մոդելները, օգտագործվում են որոշելու այն ֆինանսական գործիքների իրական արժեքը, որոնց համար արտաքին շուկայական գնանշման տեղեկատվությունը հասանելի չէ:

Իրական արժեքի գնահատումների վերլուծությունը կատարվում է ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակի հետևյալ կերպ. (ա) մակարդակ 1՝ գնահատումներ գործող շուկայում համանման ակտիվների կամ պարտավորությունների գնանշված (չճշգրտված) գներով, (բ) մակարդակ 2՝ գնահատման մեթոդներ, որոնցում ակտիվի կամ պարտավորության համար բոլոր էական ելակետային տվյալները ուղղակիորեն (գներ) կամ անուղղակիորեն (գների հիման վրա ստացված) դիտարկելի են, (գ) մակարդակ 3՝ գնահատումներ, որոնք հիմնված չեն բացառապես շուկայի դիտարկելի տվյալների վրա (այն է՝ գնահատման համար անհրաժեշտ են նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Գործարքի հետ կապված ծախսումները լրացուցիչ ծախսումներն են, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական գործիքի ձեռքբերմանը, թողարկմանը կամ օտարմանը: Լրացուցիչ ծախսումը այն ծախսումն է, որը կազմակերպությունը չէր կրի, եթե գործարքը տեղի չունենար: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են գործակալներին (ներառյալ՝ որպես վաճառքի գործակալ հանդես եկող աշխատակիցներին), խորհրդատուներին, միջնորդներին վճարված գումարները և կոմիսիոն վճարները, կարգավորման գործակալությունների կողմից և արժեթղթերի փոխանակումներից գանձումները, գույքի սեփականության իրավունքի փոխանցման հետ կապված հարկերը և վճարները: Գործարքի հետ կապված ծախսումները չեն ներառում պարտքի պարգևավճարներն ու զեղչերը, ֆինանսավորման ծախսումները կամ ներքին կառավարչական կամ պահպանման ծախսումները:

Ամորտիզացված արժեքը այն գումարն է, որով ֆինանսական գործիքը չափվել է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած հաշվեգրված տոկոսները և ֆինանսական ակտիվների համար՝ հանած արժեզրկման վնասի գծով ցանկացած նվազեցում: Հաշվեգրված տոկոսները ներառում են սկզբնական ճանաչման ժամանակ գործարքի հետ կապված հետաձգված ծախսումների և մինչև մարման գումարը ցանկացած պարգևավճարի կամ զեղչի ամորտիզացիան՝ օգտագործելով

արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հաշվեգրված տոկոսային եկամուտը և հաշվեգրված տոկոսային ծախսը, ներառյալ հաշվեգրված արժեկտրոնը և ամորտիզացված զեղչը կամ պարգևավճարը (ներառյալ՝ առաջացման պահին հետաձգված վճարները, եթե կան այդպիսիք), առանձին չեն ներկայացվում, այլ ներառվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության համապատասխան հոդվածի հաշվեկշռային արժեքում:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը համապատասխան ժամանակահատվածի կտրվածքով տոկոսային եկամտի կամ տոկոսային ծախսի բաշխման այնպիսի մեթոդ է, որը հանգեցնում է հաշվեկշռային արժեքի նկատմամբ կիրառվող հաստատուն պարբերական տոկոսադրույքի (արդյունավետ տոկոսադրույքի):

Արդյունավետ տոկոսադրույքը այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ որոշակի դեպքերում ավելի կարճ ժամանակահատվածի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները (չներառելով ապագա արժեզրկման կորուստները) զեղչում է ճշգրիտ՝ մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքը: Արդյունավետ տոկոսադրույքը զեղչում է փոփոխական տոկոսադրույք ունեցող գործիքների դրամական միջոցների հոսքերը մինչև հաջորդ տոկոսադրույքի վերագնանշման ամսաթիվը, բացառությամբ այն պարգևավճարի կամ զեղչի, որն արտացոլում է գործիքում սահմանված լողացող տոկոսադրույքի կամ շուկայական դրույքներով չսահմանված այլ փոփոխականների նկատմամբ վարկային սպրեդը: Այդպիսի պարգևավճարները և զեղչերը ամորտիզացվում են գործիքի ակնկալվող գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում: Ներկա արժեքի հաշվարկը ներառում է պայմանագրի կողմերի միջև վճարված կամ ստացված բոլոր վճարները, որոնք արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասն են կազմում:

Սկզբնական ճանաչում

Համաձայն ՀՀՄՍ 39-ի դրույթների՝ ֆինանսական ակտիվները դասակարգվում են համապատասխանաբար որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ, փոխառություններ և դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ, վաճառքի համար մատչելի ակտիվներ: Ֆինանսական ակտիվները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չճանաչվող ներդրումների պարագայում՝ գումարած ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսումները: Խմբի կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են սկզբնական ճանաչման ժամանակ և հետագայում կարող են վերադասակարգվել ստորև նշված դեպքերում:

Ճանաչման ամսաթիվ

Ֆինանսական ակտիվների բոլոր կանոնավոր գնումներն ու վաճառքներն արտացոլվում են վերջնահաշվարկի ամսաթվով: Կանոնավոր կերպով գնմանը կամ վաճառքին է վերաբերում ֆինանսական ակտիվների այնպիսի գնումը կամ վաճառքը, որը պահանջում է ակտիվի մատակարարում՝ շուկայում գործող կարգավորման միջոցով կամ գործարար սովորույթով սահմանված ժամկետի ընթացքում:

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ

«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ» դասում ներառվում են որպես առևտրային նպատակով պահվող դասակարգված ֆինանսական գործիքները: Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես առևտրային նպատակով պահվող, եթե դրանք ձեռք են բերվել կարճ ժամանակահատվածում վաճառելու նպատակով: Ածանցյալ գործիքները նույնպես դասակարգվում են որպես առևտրային նպատակով պահվող, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք արդյունավետ հեջավորման գործիքներ են: Առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվներից եկամուտներն ու ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Խումբն իր սովորական գործունեության ընթացքում արտարժույթի փոխանակման և կապիտալի շուկաներում կնքում է ածանցյալ ֆինանսական գործիքների՝ ներառյալ ֆյուչերսների, ֆորվարդների և

սվոփերի տարատեսակ պայմանագրեր: Այդպիսի ֆինանսական գործիքները պահվում են առևտրային նպատակով և հաշվառվում են իրական արժեքով:

Իրական արժեքները գնահատվում են գնանշված շուկայական գների կամ գնային մոդելների հիման վրա, որոնք հաշվի են առնում հիմքում ընկած գործիքի ընթացիկ շուկայական և պայմանագրային գները կամ այլ գործոններ: Ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվներ, երբ իրական արժեքը դրական է և որպես պարտավորություններ, երբ այն բացասական է: Տվյալ գործիքներից առաջացող օգուտներն ու վնասները ներառվում են շահույթում կամ վնասում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից զուտ օգուտ կամ արտարժույթի փոխարժեքի փոփոխություններից զուտ օգուտ/(վնաս)՝ կախված գործիքի բնույթից:

Այլ ֆինանսական գործիքներում պարունակվող ածանցյալ գործիքները դիտարկվում են որպես առանձին ածանցյալ գործիքներ և հաշվառվում են իրական արժեքով, եթե դրանց տնտեսական բնութագրերը և ռիսկերը ուղիղ կապված չեն դրանց հիմնական պայմանագրին, և հիմնական պայմանագիրը չի պահվում առևտրային նպատակով կամ նախատեսված չի որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Հիմնական պայմանագրերից առանձնացված պարունակվող ածանցյալ գործիքները հաշվառվում են առևտրային պայուսակում իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխությունները ճանաչելով շահույթում կամ վնասում:

Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ

Հաստատուն կամ սահմանված վճարումներով և հաստատուն մարման ժամկետով ոչ ածանցյալ ակտիվները, որոնք Խումբը հստակ մտադրված է և ի վիճակի է պահել մինչև մարման ժամկետի լրանալը, դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող: Ներդրումները, որոնք Խումբը մտադրված է պահել անորոշ ժամկետով, չեն ներառվում տվյալ դասում: Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվների հետագա չափումը կատարվում է ամորտիզացված արժեքով: Օգուտներն ու վնասները ճանաչվում են շահույթում կամ վնասում, երբ ակտիվներն արժեզրկվում են, ինչպես նաև ամորտիզացիայի ընթացքում:

Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառությունները և դեբիտորական պարտքերը հաստատուն կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք գնանշված չեն ակտիվ շուկայում: Դրանք նախատեսված չեն անհապաղ կամ մոտ ապագայում վաճառքի համար և չեն դասակարգվում որպես առևտրային նպատակով պահվող կամ վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր: Այդպիսի ակտիվները ներառում են բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում միջոցներ, միջոցները ԱՄՀ-ում, վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր, ներդրումներ՝ դասակարգված որպես փոխառություններ և դեբիտորական պարտքեր: Այդպիսի ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Օգուտներն ու վնասները շահույթի կամ վնասի կազմում ճանաչվում են, երբ փոխառություններն ու դեբիտորական պարտքերը ապաճանաչվում կամ արժեզրկվում են, ինչպես նաև ամորտիզացիայի ընթացքում:

Վաճառքի համար մատչելի ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ակտիվները ոչ ածանցյալ գործիք հանդիսացող ֆինանսական ակտիվներ են, որոնք նախատեսված են որպես վաճառքի համար պահվող կամ որոնք դասակարգված չեն վերը թվարկված երեք կատեգորիաներում: Սկզբնական ճանաչումից հետո վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով, ընդ որում՝ օգուտներն ու վնասները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում մինչև ակտիվների օտարումը կամ արժեզրկումը, որի ընթացքում նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ներառված կուտակված շահույթը կամ վնասը վերադասակարգվում է շահույթի կամ վնասի: Տոկոսները, որոնք հաշվարկվել էին արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով, ճանաչվում են շահույթի կամ վնասի կազմում:

Ֆինանսական ակտիվների վերադասակարգում

Եթե ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվ, սակայն մոտ ժամանակաշրջանում վաճառելու մտադրություն չկա, ապա այն կարող է վերադասակարգվել իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից հետևյալ իրավիճակներից մեկի դեպքում՝

- այն ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է վերոնշյալ փոխառությունների և դեբիտորական պարտքերի սահմանմանը, կարող է վերադասակարգվել որպես փոխառություններ և դեբիտորական պարտքեր, եթե Խումբը նպատակ և հնարավորություն ունի դրանք պահել մինչև տեսանելի ապագա կամ մինչև մարումը,
- առևտրային նպատակով պահվող այլ ֆինանսական ակտիվները կարող են վերադասակարգվել որպես վաճառքի համար մատչելի կամ մինչև մարումը պահվող ֆինանսական ակտիվներ հազվադեպ հանգամանքներում:

Վաճառքի համար մատչելի դասակարգված ֆինանսական ակտիվը, փոխառությունների և դեբիտորական պարտքերի սահմանմանը համապատասխանելու դեպքում, կարող է վերադասակարգվել որպես փոխառություններ և դեբիտորական պարտքեր, եթե Խումբը նպատակ և հնարավորություն ունի պահել դրանք մինչև տեսանելի ապագա կամ մինչև մարումը:

Ֆինանսական ակտիվները վերադասակարգվում են իրենց իրական արժեքով՝ վերադասակարգման ամսաթվի դրությամբ: Ցանկացած շահույթ կամ վնաս, որը ճանաչվել է ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում, չի հակադարձվում: Վերադասակարգման ամսաթվով ճանաչված ֆինանսական ակտիվի իրական արժեքը դառնում է նրա նոր ինքնարժեք կամ ամորտիզացված արժեք:

Ներգրավված փոխառու միջոցներ

Թողարկված ֆինանսական գործիքները կամ դրանց բաղկացուցիչները դասակարգվում են որպես պարտավորություններ, եթե պայմանագրային համաձայնության արդյունքում Խումբն ունի պարտավորություն փոխանցել դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվներ կամ այլ կերպ կատարելու պարտավորությունները, բացի դրամական միջոցների՝ հաստատուն գումարով կամ այլ ֆինանսական ակտիվներով սեփական բաժնային գործիքների հաստատուն քանակով փոխարինելը: Նման գործիքները ներառում են ֆինանսական և այլ հաստատությունների ավանդները և հաշիվների մնացորդները, պարտավորությունները Կառավարության հանդեպ, պարտավորությունները ԱՄՀ-ի հանդեպ, այլ փոխառու միջոցները, թողարկված պարտատոմսերը:

Սկզբնական ճանաչումից հետո փոխառված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Պարտավորության ապաճանաչման դեպքում, ինչպես նաև ամորտիզացիայի ընթացքում, եկամուտներն ու ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Զրոյական տոկոսադրույքով վարկերի հաշվառում

Խմբի կողմից միջազգային ֆինանսական հաստատություններից զրոյական տոկոսադրույքով ստացված միջոցների օգուտը դիտարկվում և հաշվառվում է որպես պետական շնորհ: Զրոյական տոկոսադրույքով օգուտը չափվում է որպես ստացված միջոցների իրական արժեքի և միջոցների սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ ստացված և որպես հետաձգված եկամուտ ճանաչված մուտքերի միջև տարբերություն: Հետաձգված եկամտի գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում Խումբը որպես ծախս է ճանաչում համապատասխան ծախսումները: Կատարվում է շնորհին վերաբերող եկամտի չափով նվազեցում՝ համապատասխան ծախսը ներկայացնելիս:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մասը, կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի մասը) ապաճանաչվում է, երբ՝

- ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքի ժամկետն ավարտվում է.
- Խումբը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամբողջությամբ և առանց

էական ուշացման փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրի համաձայն, ինչպես նաև

– Խումբը կամ (ա) փոխանցել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) ո՛չ փոխանցել և ո՛չ էլ պահպանում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ վերահսկողության իրավունքը:

Այն դեպքում, երբ Խումբը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը և ո՛չ փոխանցել ու ո՛չ էլ պահպանում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, ինչպես նաև չի փոխանցել ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ակտիվը ճանաչվում է Խմբի շարունակվող մասնակցության չափով:

Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի երաշխիքային ապահովման ձև, այդպիսի մասնակցությունը չափվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնով՝ ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեք և Խմբից պահանջվող փոխհատուցման առավելագույն գումար:

Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի գծով թողարկված և/կամ գնված օպցիոնի ձև (ներառյալ՝ դրամական միջոցներով մարվող օպցիոններ կամ նմանատիպ պահուստներ), Խմբի մասնակցության չափը որոշվում է այն գումարի չափով, որով Խումբը կարող է հետ գնել փոխանցված ակտիվը, բացառությամբ իրական արժեքով գնահատված ակտիվի գծով թողարկված վաճառքի օպցիոնի (ներառյալ՝ դրամական միջոցներով մարվող օպցիոններ կամ նմանատիպ պահուստներ), երբ Խմբի շարունակվող մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ փոխանցված ակտիվի իրական արժեք և օպցիոնի իրագործման գին:

Ֆինանսական պարտավորությունը ապաճանաչվում է, երբ մարվում, չեղարկվում կամ դադարում է:

Եթե փոխառուի և փոխատուի միջև պարտքային գործիքը փոխարինվում է մեկ այլ պարտքային գործիքով, որի պայմաններն էականորեն տարբերվում են կամ եթե կատարվում է գործող պարտքային գործիքի պայմանների էական փոփոխություն, այդպիսի փոխարինումը կամ փոփոխությունը հանգեցնում է այդ պարտքի ապաճանաչմանը և նոր պարտքային գործիքի ճանաչմանը, իսկ համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը ձևակերպվում է շահույթում կամ վնասում:

(հ) Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում՝ արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն: Հաշվանցման այդպիսի իրավունքը (ա) չպետք է պայմանավորված լինի ապագա իրադարձությամբ և (բ) պետք է իրավաբանորեն կիրառելի լինի հետևյալ բոլոր հանգամանքներում. (i) բնականոն գործունեության ընթացքում, (ii) դեֆոլտի դեպքում և (iii) անվճարունակության կամ սնանկության դեպքում:

(լ) Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Վաճառքի և հետգնման պայմանագրերով («ռեպո») վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ:

Արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր», իսկ պայմանագրային կողմի պարտավորությունը՝ ֆինանսական և այլ հաստատությունների նկատմամբ պարտավորությունների կազմում: Վաճառքի և հետգնման գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային ծախս և ճանաչվում է հետգնման պայմանագրի գործողության ընթացքում:

Հետգնման պայմանագրերի ներքո («հակադարձ ռեպո պայմանագրեր») արժեթղթերի ձեռքբերման համար վճարված միջոցները գրանցվում են որպես բանկերում և այլ ֆինանսական հաստատություննե-

րում տեղաբաշխված միջոցներ: Վաճառքի և հետգնման գնի միջև տարբերությունը՝ ճշտված տոկոսադրույքով և գործընկերոջ կողմից ստացվող շահաբաժնի եկամտով, դիտարկվում է որպես տոկոսային եկամուտ և հաշվեգրվում է ռեպո պայմանագրերի ողջ գործողության ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

(խ) Փոխառության տրված և ստացված արժեթղթեր

Արժեթղթերը, որոնք փոխառության են տրվել գնորդներին, շարունակվում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում: Փոխառությամբ ներգրավված արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում միայն երրորդ անձանց վաճառքի դեպքում: Այս դեպքում առուվաճառքի գործարքները հաշվառվում են շահույթում կամ վնասում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով հաշվառվող ֆինանսական գործիքներից զուտ շահույթի կազմում: Այդպիսի արժեթղթերի վերադարձի պարտավորությունը արտացոլվում է իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող պարտավորություններում:

(ծ) Շրջանառության մեջ գտնվող թղթադրամներ և մետաղադրամներ

Բանկի կողմից թողարկված շրջանառության մեջ գտնվող թղթադրամները և մետաղադրամները ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում արտացոլվում են անվանական արժեքով՝ որպես պարտավորություն դրանց տիրապետողների հանդեպ: Թղթադրամների տպագրման և մետաղադրամների հատման ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ դրանց կատարման պահին:

(կ) Դրամագիտական արժեքներ

Դրամագիտական արժեքները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Դրամագիտական արժեքների ինքնարժեքը որոշվում է «առաջին մուտք, առաջին ելք» սկզբունքով և ներառում է մետաղադրամների ձեռքբերման ծախսումները և նրանց ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները: Վաճառքի ժամանակ գնահատված վաճառքից մուտքերի գումարը ճանաչվում է որպես եկամուտ ընթացիկ տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում, իսկ հաշվեկշռային արժեքի գումարը ճանաչվում է որպես ծախս ընթացիկ տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում:

(հ) Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Այդ գումարը ներառում է սարքավորման փոխարինման ժամանակ կատարված ծախսերը, եթե դրանք բավարարում են ճանաչման չափանիշներին: Նմանապես, խոշոր կապիտալ ներդրումներ կատարելիս, ծախսը ներառվում է հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի մեջ որպես փոխարինում, եթե ճանաչման չափանիշները բավարարված են:

Երբ հիմնական միջոցի նշանակալի մասերը անհրաժեշտ է պարբերաբար փոխարինել, Խումբը ճանաչում է նման մասերը որպես առանձին ակտիվներ՝ իրենց հատուկ օգտակար ծառայության ժամկետներով և համապատասխանաբար հաշվարկում է մաշվածություն:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված բոլոր ծախսումները շահույթում կամ վնասում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին:

Սկզբնապես ճանաչված հիմնական միջոցի միավոր և ցանկացած էական մաս ապաճանաչվում է օտարման դեպքում, և երբ ակտիվի օգտագործումից կամ օտարումից ոչ մի տնտեսական օգուտ չի ակնկալվում: Ակտիվի ապաճանաչումից առաջացող ցանկացած օգուտ կամ վնաս (հաշվարկված որպես

օտարումից զուտ մուտքերի/հատույցների և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերություն) ներառվում է շահույթում կամ վնասում, երբ ակտիվն ապաճանաչվում է:

Մաշվածություն

Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի օգտագործման համար մատչելի դառնալու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների օգտակար ծառայության հետևյալ ժամկետների ընթացքում.

	2016 թ.	2015 թ.
Հող և շենքեր		
– Շենքեր	30-80 տարի	30-80 տարի
– Շենքերի սպասարկման համակարգեր	3-20 տարի	3-15 տարի
Ցանցեր, համակարգչային և այլ սարքավորումներ	2-15 տարի	2-20 տարի
Փոխադրամիջոցներ	5 տարի	5 տարի

Ակտիվի մնացորդային արժեքը ակտիվի այն մոտավոր գումարն է, որը Խումբը ներկայումս կստանար ակտիվի օտարումից՝ հանած ակտիվի օտարման գնահատված ծախսերը, եթե ակտիվը արդեն լիներ իր օգտակար ծառայության վերջին սպասվող տարիքին և պայմաններում: Ակտիվների մնացորդային արժեքները և օգտակար ծառայության ժամկետները վերանայվում և, եթե անհրաժեշտ է, փոփոխվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

(ձ) Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ

Ոչ ընթացիկ ակտիվները ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության մեջ դասակարգվում են որպես «վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ», եթե դրանց հաշվեկշռային արժեքը փոխհատուցվելու է հիմնականում վաճառքի գործարքի միջոցով՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տասներկու ամսվա ընթացքում: Ակտիվը «վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվ» դասակարգվելու համար պետք է բավարարի հետևյալ բոլոր պայմաններին. ա) ակտիվը իր ներկա վիճակում պետք է պատրաստ (մատչելի) լինի անմիջապես վաճառքի համար, բ) Խմբի ղեկավարությունը պետք է ձեռնարկի գնորդ գտնելու և վաճառքի պլանը կատարելու ակտիվ ծրագիր, գ) ակտիվը ողջամիտ գնով պետք է ակտիվորեն առաջարկվի շուկայում, դ) պետք է ակնկալվի, որ մեկ տարվա ընթացքում վաճառքը կբավարարի որպես ավարտված վաճառք ճանաչվելու պայմաններին, ե) պլանն ավարտին հասցնելու համար անհրաժեշտ գործողությունները պետք է ցուցանշեն, որ պլանում նշանակալի փոփոխությունների կատարումը կամ պլանի դադարեցումը հավանական չէ: Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվները չափվում են իրենց հաշվեկշռային արժեքից և իրական արժեքի և վաճառքի գծով ծախսումների տարբերությունից նվազագույնով: Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվների համար մաշվածություն չի հաշվարկվում:

(ղ) Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները ներառում են համակարգչային ծրագրերն ու լիցենզիաները: Առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ձեռքբերման արժեքով: Ձեռնարկատիրական միավորման արդյունքում ձեռքբերված ոչ նյութական ակտիվների արժեքը ձեռքբերման ամսաթվի դրությամբ դրանց իրական արժեքն է: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և ճանաչումից և արժեզրկումից կուտակված վնասները: Որոշակի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվները ամորտիզացվում են գծային մեթոդով օգտակար ծառայության ընթացքում, որը կազմում է 1-7 տարի, և գնահատվում են արժեզրկման տեսանկյունից, երբ առկա են արժեզրկման հայտանիշեր:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ դրանց կատարման պահին:

(ճ) Գործառնական վարձակալության գծով պարտավորվածություններ. Խումբը՝ որպես վարձակալ

Ակտիվի այն վարձակալությունը, որով չի նախատեսվում վարձատուից Խմբին ակտիվի սեփականության հետ կապված գործնականորեն բոլոր ռիսկերի և հատույցների փոխանցում, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության վճարները ճանաչվում են գծային մեթոդով վարձակալության ժամկետի ընթացքում որպես այլ գործառնական ծախսեր:

(մ) Արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին Խումբը իրականացնում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի՝ արժեզրկված լինելու օբյեկտիվ հայտանիշերի գնահատում: Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը համարվում է արժեզրկված միայն այն դեպքում, եթե կա արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ՝ որպես ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձությունների («ծախսային իրադարձություն») արդյունք, և երբ այդ իրադարձությունը կամ իրադարձություններն ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվից կամ ակտիվների խմբից ակնկալվող ապագա դրամական հոսքերի վրա, որոնք կարելի է արժանահավատորեն չափել: Արժեզրկումից առաջացած վնասի օբյեկտիվ հայտանիշը կարող է ներառել վարկառուի կամ վարկառուների խմբի զգալի ֆինանսական դժվարությունները, տոկոսագումարների և մայր գումարների վճարման պարտավորությունների խախտումների առկայությունը, այն հավանականությունը, որ տեղի կունենա սնանկացում կամ այլ ֆինանսական վերակազմակերպում, ինչպես նաև դիտարկվող շուկաներից տեղեկատվություն ակնկալվող ապագա դրամական հոսքերի չափերի նվազման վերաբերյալ, օրինակ՝ ժամկետանց վճարումների մակարդակի փոփոխություն կամ տնտեսական պայմանների փոփոխություն, որոնք հարաբերակցվում են վճարման պարտավորությունների խախտումների հետ:

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ

Ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված այն միջոցների համար, որոնց հաշվառումն իրականացվում է ամորտիզացված արժեքով, Խումբն ի սկզբանե գնահատում է արժեզրկված լինելու հայտանիշները անհատապես՝ էական ակտիվների համար կամ խմբային՝ բոլոր ֆինանսական ակտիվների համար, որոնք անհատապես էական չեն համարվում: Եթե Խումբը որոշում է, որ անհատապես գնահատված ֆինանսական ակտիվի համար չկա արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ, անկախ այն հանգամանքից, էական է այն, թե ոչ, ապա այդ ակտիվը ներառում է համանման վարկային ռիսկերի բնութագրեր ունեցող ֆինանսական ակտիվների խմբում և գնահատում է դրանց արժեզրկված լինելը խմբային հիմունքով: Ակտիվները, որոնց արժեզրկված լինելը գնահատվում է անհատական հիմունքով և որոնց նկատմամբ ճանաչվում են արժեզրկումից վնասներ, չպետք է գնահատվեն խմբային հիմունքով:

Արժեզրկված լինելու օբյեկտիվ հայտանիշերի առկայության դեպքում արժեզրկումից վնասը իրենից ներկայացնում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի (բացառությամբ դեռևս չկրած ապագա արժեզրկման կորուստների) ներկա արժեքի տարբերությունը: Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկման պահուստի միջոցով, իսկ արժեզրկումից ծախսն արտացոլվում է համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվության մեջ: Տոկոսային եկամուտը հաշվեգրվում է ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցները, համապատասխան պահուստների հետ միասին, դուրս են գրվում, եթե ապագայում չկա վարկը հավաքագրելու իրատեսական հեռանկար, և երբ բոլոր գրավներն իրացվել են կամ

փոխանցվել Խմբին: Եթե հաջորդող տարվա ընթացքում գնահատված արժեզրկման ծախսն ավելանում կամ նվազում է արժեզրկման ճանաչումից հետո կատարված իրադարձությունների պատճառով, նախկինում ճանաչված արժեզրկման ծախսն ավելացվում կամ նվազեցվում է՝ ճշգրտելով պահուստի գումարը: Եթե ապագա դուրսգրումը հետագայում վերականգնվում է, ապա վերականգնված գումարը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում որպես եկամուտ:

Հնարավոր ապագա դրամական հոսքերի բերված արժեքը զեղչվում է ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Եթե ֆինանսական գործիքը տրամադրված է լողացող տոկոսադրույքով, ապա արժեզրկումից վնասների չափման նպատակով զեղչման դրույքաչափը կլինի ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքը: Գրավով ապահովված ֆինանսական ակտիվների ապագա հոսքերի ներկա արժեքի հաշվարկը հիմնվում է այն դրամական հոսքերի վրա, որոնք կարող են ստացվել գրավի իրացումից, նվազեցված գրավի ձեռքբերման և օտարման ծախսումներով՝ անկախ իրացման հավանականությունից:

Ֆինանսական ակտիվների խմբի գծով ապագա դրամական հոսքերը, որոնց արժեզրկված լինելը գնահատվում է խմբային հիմքով, որոշվում են ակտիվների գծով կրած վնասների պատմական վիճակագրության հիման վրա, որի գծով պարտքային ռիսկի բնութագրիչները համարժեք են համանման ակտիվների խմբի բնութագրիչներին: Պատմական վիճակագրական շարքերը ճշգրտվում են ընթացիկ շուկայական իրավիճակը արտացոլելու համար՝ բացառելու պատմական վիճակագրական շարքերի հիմքում ընկած այն շուկայական պայմանների ազդեցությունը, որոնք տվյալ ժամանակաշրջանում գոյություն չունեն, և արտացոլելու պատմական վիճակագրական շարքերի հիմքում չընդգրկված շուկայական նոր պայմանները: Ապագա դրամական հոսքերում գնահատման փոփոխությունները արտացոլում և համապատասխանում են դիտարկվող շուկաներում յուրաքանչյուր տարվա տեղեկատվության փոփոխությանը (օրինակ՝ գործազրկության մակարդակի փոփոխություն, անշարժ գույքի գներ, ապրանքների գներ, վճարունակության կարգավիճակ կամ այլ գործոններ, որոնք վկայում են խմբի կրած վնասների և դրանց չափի մասին): Ապագա դրամական հոսքերի գնահատման համար օգտագործվող մեթոդաբանությունը և ենթադրությունները պարբերաբար վերանայվում են Խմբի կողմից՝ վնասների իրական և գնահատված արժեքների միջև տարբերությունները նվազեցնելու նպատակով:

Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ

Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվները Խումբը գնահատում է անհատականորեն, եթե առկա են արժեզրկման հայտանիշեր: Եթե արժեզրկման հետևանքով վնասի առկայության օբյեկտիվ հայտանիշեր կան, վնասի արժեքը հաշվարկվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և հետագայում ակնկալվող դրամական հոսքերի ներկա բերված արժեքի տարբերություն: Ակտիվի հաշվեկշռային արժեքը պակասեցվում է, և վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Եթե որևէ տարվա ընթացքում արժեզրկումից ակնկալվող վնասի գումարը նվազում է արժեզրկումը ճանաչելուց հետո տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով, նախկինում հաշվառված գումարները ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես եկամուտ:

Վաճառքի համար մատչելի ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Խումբը գնահատում է վաճառքի համար մատչելի ակտիվների կամ ներդրումների կամ դրանց խմբի արժեզրկված լինելու օբյեկտիվ հայտանիշերի առկայությունը:

Վաճառքի համար մատչելի դասակարգված բաժնային ներդրումների արժեզրկման օբյեկտիվ հայտանիշներից է ներդրման իրական արժեքի նշանակալի կամ էական նվազումը սկզբնական արժեքից: Երբ կա արժեզրկման հայտանիշ, կուտակված վնասը, որը գնահատվում է որպես ձեռքբերման գնի և ներկա իրական արժեքի միջև տարբերություն՝ հանած նախկինում շահույթում կամ վնասում ճանաչված՝ այդ

ներդրման գծով արժեզրկման կորուստները, վերադասակարգվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքից շահույթի կամ վնասի կազմ: Բաժնային ներդրումների արժեզրկման գծով վնասները չեն հակադարձվում շահույթի կամ վնասի միջոցով. դրանց իրական արժեքի ավելացումները արժեզրկումից հետո ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

Վաճառքի համար մատչելի դասակարգված պարտքային գործիքների արժեզրկման օբյեկտիվ հայտանիշերի առկայության գնահատումը իրականացվում է ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների նման: Ապագա տոկոսային եկամուտը հաշվեգրվում է՝ օգտագործելով այն դրույքաչափը, որն արժեզրկման վնասներն արտացոլելու նպատակով կիրառվել է ապագա դրամական հոսքերի զեղչման ժամանակ:

Տոկոսային եկամուտը արտացոլվում է շահույթում կամ վնասում: Եթե հաջորդող տարվա ընթացքում պարտքային գործիքի իրական արժեքն աճում է այնպիսի իրադարձությունների պատճառով, որոնք տեղի են ունեցել արժեզրկման գծով վնասները շահույթում կամ վնասում ճանաչվելուց հետո, ապա նախկինում արժեզրկման գծով ծախսը հակադարձվում է շահույթի կամ վնասի միջոցով:

Ոչ ֆինանսական ակտիվներ

Խումբը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատում է, արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե առկա է այդպիսի հայտանիշ կամ երբ անհրաժեշտ է իրականացնել ակտիվի տարեկան արժեզրկման ստուգում, ապա Խումբը գնահատում է ակտիվի փոխհատուցվող գումարը:

Ակտիվի փոխհատուցվող գումարը ակտիվի կամ դրամաստեղծ միավորի իրական արժեքից՝ հանած վաճառքի համար անհրաժեշտ ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնն է, որոշվում է առանձին ակտիվի համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ակտիվը չի առաջացնում դրամական միջոցների ներհոսքեր, որոնք մեծապես անկախ են այլ ակտիվներից կամ ակտիվների խմբերից առաջացող դրամական միջոցների ներհոսքերից: Այն դեպքում, երբ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է վերջինիս փոխհատուցվող գումարը, ակտիվը համարվում է արժեզրկված և արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Օգտագործման արժեքի գնահատման ժամանակ դրամական միջոցների գնահատված հոսքերը զեղչվում են ներկա արժեքի՝ օգտագործելով զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ փողի արժեքի և տվյալ ակտիվին հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները՝ առանց հաշվի առնելու հարկային ազդեցությունը:

Ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում և հակադարձվում են միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(յ) Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Խումբն ունի իրավական կամ կառուցողական պարտավորություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք, իսկ պարտավորության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

(ն) Հարկում

Բանկն ազատված է բոլոր հարկերից և տուրքերից, բացառությամբ ապրանքների ներմուծման համար մաքսային սահմանին վճարման ենթակա հարկերից, մաքսատուրքերից և մաքսավճարներից: Միաժամանակ Բանկը հանդես է գալիս որպես հարկային գործակալ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրու-

թյամբ սահմանված կարգով: Խմբի դուստր կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հաշվարկում են շահութահարկ և այլ հարկեր ու տուրքեր:

(շ) Թողարկված կապիտալ

Թողարկված կապիտալը Բանկի կանոնադրական կապիտալն է, որը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության սեփականությունը և չի կարող գրավադրվել, բռնագանձվել կամ որևէ այլ կերպ օտարվել Հայաստանի Հանրապետության պարտավորությունների դիմաց:

Համաձայն Օրենքի 11.4 հոդվածի՝ Խմբի վնասը պահուստների հանրագումարը գերազանցելու դեպքում Կառավարության կողմից տրամադրվող անտոկոս հասարակ մուրհակը ճանաչվում է որպես Կառավարության կողմից թողարկված մուրհակ Խմբի կապիտալում:

(ո) Շահույթի բաշխում

Խմբի շահույթը, որը որոշվում է վերջինիս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հրապարակումից հետո, բաշխվում է հետևյալ կերպ.

- շահույթի 20%-ն ուղղվում է գլխավոր պահուստի համալրմանը՝ մինչև դրա ընդհանուր չափը կազմի առկա դրամական զանգվածի 25%-ը,
- մասհանումներ պետք է կատարվեն՝ Կառավարության կողմից նախկինում Բանկին տրամադրված մուրհակի մարման ծախսերը ծածկելու նպատակով:

Նշված մասհանումները կատարելուց հետո Խմբի ստացված շահույթի մնացորդը փոխանցվում է պետական բյուջե:

Պետական բյուջե վճարման ենթակա Խմբի շահույթի հաշվարկի մեջ չեն ընդգրկվում ոսկու, հատուկ փոխառության իրավունքների, արտարժույթների և դրանցով արտահայտված արժեքների վերագնահատումից և ձեռքբերումից առաջացած եկամուտների և ծախսերի դրական տարբերությունը՝ ճշգրտված նախորդ ժամանակաշրջանների բացասական արդյունքների հատուցմանն ուղղված գումարների չափով:

2016 թվականին Խումբը վերանայել է շահույթի բաշխման ներկայացման վերաբերյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը՝ առավել պատշաճ ներկայացում ապահովելու նպատակով: Խումբը ներկայացնում է Կառավարության՝ նախկինում թողարկված մուրհակի մարման գծով մասհանումները՝ որպես բաշխում «Կառավարության կողմից թողարկված մուրհակ» հաշվից (նախկինում՝ «կուտակված վնաս» հաշվից):

(չ) Պայմանական ակտիվներ և պարտավորություններ

Պայմանական պարտավորությունները չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում, այլ բացահայտվում են հաշվետվություններին կից ծանոթագրություններում, բացառությամբ այն դեպքերի, երբ պարտավորության մարման հետ կապված միջոցների արտահոսքը համարվում է քիչ հավանական: Պայմանական ակտիվները չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում, սակայն բացահայտվում են հաշվետվություններին կից ծանոթագրություններում այն դեպքերում, երբ դրանց հետ կապված տնտեսական օգուտների ներհոսքը համարվում է հավանական:

(պ) Տոկոսային եկամուտներ և ծախսեր

Բոլոր այն ֆինանսական գործիքների համար, որոնք հաշվառվում են ամորտիզացված արժեքով, և բոլոր տոկոսային եկամուտ բերող ֆինանսական գործիքների համար, որոնք դասակարգված են որպես վաճառքի համար մատչելի, տոկոսային եկամուտն ու ծախսը հաշվառվում են արդյունավետ տոկոսադրույ-

քով, որի միջոցով ակնկալվող ապագա դրամական վճարումները կամ ներհոսքերը ֆինանսական գործիքի ենթադրվող ողջ օգտագործման ժամանակահատվածում կամ ավելի կարճ ժամանակահատվածում, որտեղ այն կիրառելի է, ճշգրտորեն բերվում են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքին: Հաշվարկի ժամանակ հաշվի են առնվում ֆինանսական գործիքի գծով բոլոր պայմանագրային պայմանները (օրինակ՝ ժամկետից շուտ մարման իրավունքը) և կոմիսիոն կամ լրացուցիչ ծախսերը, որոնք անմիջականորեն կապված են գործիքի հետ և որոնք արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մաս են կազմում, սակայն հաշվի չեն առնվում ապագա վնասները: Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքները ճշգրտվում են Խմբի կողմից վճարումների կամ մուտքերի գնահատման վերանայման դեպքում: Ճշգրտված հաշվեկշռային արժեքը հաշվարկվում է սկզբնական արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա, իսկ հաշվեկշռային արժեքի փոփոխությունը դիտվում է որպես տոկոսային եկամուտ կամ ծախս:

Երբ ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի ճանաչված արժեքը նվազել է արժեզրկման կորուստների արդյունքում, տոկոսային եկամուտը շարունակում է ճանաչվել՝ օգտագործելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը՝ կիրառելով նոր հաշվեկշռային արժեքը:

ջ) Միջնորդավճարների գծով եկամուտ

Տվյալ ժամանակաշրջանում ծառայությունների մատուցման արդյունքում վաստակված միջնորդավճարները հաշվեգրվում են այդ ժամանակահատվածի ընթացքում:

3. Հաշվապահական հաշվառման նոր հրապարակումներ

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ հրապարակվել են, սակայն դեռևս ուժի մեջ չեն որոշակի նոր ստանդարտներ, գոյություն ունեցող ստանդարտների փոփոխություններ կամ մեկնաբանություններ: Խումբը ժամկետից շուտ չի ընդունել նոր ստանդարտները:

Ղեկավարությունն ակնկալում է, որ բոլոր հրապարակված ստանդարտներն ու փոփոխությունները կներառվեն Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ՝ սկսած դրանց ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո սկսվող առաջին ժամանակաշրջանից: Ստորև ներկայացված է տեղեկատվություն նոր ստանդարտների, փոփոխությունների և մեկնաբանությունների վերաբերյալ, որոնք, ըստ ղեկավարության գնահատման, կիրառելի են Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ: Մի շարք այլ նոր ստանդարտներ և մեկնաբանություններ են հրապարակվել, որոնք էական ազդեցություն չունեն Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» (փոփոխվել է 2014 թվականի մայիսին և ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար):

2014 թ. հուլիսին ՀՀՄՄԽ-ն թողարկեց ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» ստանդարտի վերջնական տարբերակը, որն արտացոլում է ֆինանսական գործիքներին վերաբերող նախագծի բոլոր փուլերն ու փոխարինում է ՀՀՄՍ 39-ին՝ «*Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը*», և ՖՀՄՍ 9-ի բոլոր նախկին

տարբերակներին: Ստանդարտը ներկայացնում է դասակարգման, չափման, ինչպես նաև արժեզրկման և հեջավորման հաշվառման նոր պահանջներ:

Դասակարգման և չափման տեսանկյունից, նոր ստանդարտը կպահանջի գնահատել բոլոր ֆինանսական գործիքները, բացի բաժնային գործիքներում ներդրումներից և ածանցյալ գործիքներից, համակցված մոտեցման հիման վրա՝ ելնելով ընկերության ակտիվները կառավարելու բիզնես մոդելի և գործիքների դրամական հոսքերի բնութագրիչներից: ՀՀՄՍ 39-ի չափման կատեգորիաները կփոխարինվեն հետևյալ կատեգորիաներով. իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող, և ամորտիզացված արժեքով չափվող գործիքներ: ՖՀՄՍ 9-ը նաև թույլ կտա ընկերություններին շարունակել դասակարգել (առանց հետագա վերադասակարգման հնարավորության) իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող, և ամորտիզացված արժեքով չափվող գործիքների սահմանմանը համապատասխանող գործիքները որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա վերացնում կամ էապես նվազեցնում է չափման կամ ճանաչման անհետևողականությունը: Առևտրական նպատակով չպահվող բաժնային գործիքներում ներդրումները կարող են դասակարգվել (առանց հետագա վերադասակարգման հնարավորության) որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող գործիքներ, առանց օգուտների կամ վնասների հետագա վերադասակարգման, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ֆինանսական պարտավորությունների հաշվառման ՀՀՄՍ 39-ի պահանջները էապես չեն փոխվի:

ՖՀՄՍ 9-ը նաև հիմնովին կփոխի վարկերի արժեզրկման նկատմամբ մոտեցումը: Ստանդարտը կփոխարինի ՀՀՄՍ 39-ի՝ կրած վնասների մոտեցումը ակնկալվող վարկային կորուստների (ԱԿՎ) մոտեցմամբ: Խմբից կպահանջվի ակնկալվող վարկային կորուստների պահուստ ճանաչել բոլոր վարկերի և պարտքային ֆինանսական գործիքների համար, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ինչպես նաև վարկային պարտավորվածությունների և ֆինանսական երաշխիքի պայմանագրերի համար: Պահուստը գնահատվում է ակնկալվող վարկային կորուստների հիման վրա՝ կապված հաջորդ տասներկու ամիսների ընթացքում դեֆոլտի հավանականության հետ: Այն դեպքերում, երբ գործիքի սկզբնական ճանաչումից հետո տեղի է ունեցել վարկային ռիսկի էական աճ, պահուստը գնահատվում է ակտիվի ամբողջ ժամկետի ընթացքում դեֆոլտի հավանականության հիման վրա:

ՖՀՄՍ 9-ը ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Ավելի վաղ կիրառությունը թույլատրվում է: Ստանդարտը կիրառվում է հետընթաց կարգով, սակայն համեմատական տեղեկատվության վերահաշվարկ չի պահանջվում. կիրառման ազդեցությունը անցման ամսաթվին (2018թ. հունվարի 1) կգրանցվի չբաշխված շահույթում: ՖՀՄՍ 9-ի կիրառումն ազդեցություն կունենա Խմբի ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման վրա, սակայն ազդեցություն չի ունենա Խմբի ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման վրա: Խումբն ակնկալում է, որ ՖՀՄՍ 9-ը նշանակալի ազդեցություն կունենա իր կապիտալի վրա: Այդ ազդեցության չափը որոշելու համար Խմբին անհրաժեշտ է կատարել ավելի մանրամասն վերլուծություն, որը հաշվի կառնի ամբողջ հիմնավորված և կիրառելի տեղեկությունը՝ ներառյալ հեռանկարային տարրեր:

ՖՀՄՍ 15 «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» (հրապարակվել է 2014 թվականի մայիսին և ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար)

2014 թվականի մայիսին ՀՀՄՄԽ-ն հրապարակել է «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» ՖՀՄՍ 15-ը, որն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ վաղաժամկետ կիրառման հնարավորությամբ: ՖՀՄՍ 15-ը սահմանում է հասույթի ճանաչման սկզբունքները և կիրառելի է լինելու հաճախորդների հետ բոլոր պայմանագրերի համար: Սակայն տոկոսային եկամուտները և միջնորդավճարները, որոնք ֆինանսական գործիքների և վարձակալության անբաժան մասն են կազմում, կշարունակեն գտնվել ՖՀՄՍ 15-ի շրջանակներից դուրս և կկարգավորվեն այլ կիրառելի ստանդարտներով (օր.՝ ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 16՝ «*Վարձակալություն*»):

Ստանդարտի համաձայն՝ հասույթը պետք է ճանաչվի, երբ ապրանքներն ու ծառայությունները փոխանցվել են, այն փոխհատուցման գումարի չափով, որի նկատմամբ իրավունքը ընկերությունն ակնկալում է ստանալ այդ ապրանքների և ծառայությունների փոխանցման դիմաց:

Խումբը չի նախատեսում ՖՀՄՍ 15-ի վաղաժամկետ ընդունում և ներկայումս գնահատում է դրա ազդեցությունը:

ՖՀՄՍ 16 «Վարձակալություն» (հրապարակվել է 2016 թվականի հունվարին և ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար)

ՀՀՄՍԽ-ն հրապարակել է ՖՀՄՍ 16 «Վարձակալություն» վարձակալության հաշվառման նոր ստանդարտը 2016թ. հունվարին: Նոր ստանդարտը զգալիորեն չի փոխում վարձակալության հաշվառումը վարձատուների համար: Սակայն այն պահանջում է վարձակալներին ճանաչել վարձակալությունների մեծ մասը իրենց հաշվապահական հաշվեկշռում որպես վարձակալության գծով պարտավորություն՝ համապատասխան ակտիվի օգտագործման իրավունքի հետ մեկտեղ:

Վարձակալները պետք է կիրառեն միասնական մոդել բոլոր ճանաչված վարձակալությունների համար, բայց հնարավորություն կունենան չճանաչել կարճաժամկետ վարձակալությունները և ցածր արժեք ունեցող ակտիվների վարձակալությունը: Ընդհանուր առմամբ, շահույթի կամ վնասի ճանաչման կարգը նման է այսօրվա ֆինանսական վարձակալության հաշվառմանը՝ շահույթ կամ վնասում տոկոսային եկամտի և մաշվածության առանձին ճանաչմամբ:

ՖՀՄՍ 16-ը ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Վաղաժամկետ կիրառումը թույլատրելի է, պայմանով, որ հասույթի նոր ստանդարտ ՖՀՄՍ 15-ը կիրառվում է նույն օրը: Խումբը չի նախատեսում ՖՀՄՍ 16-ի վաղաժամկետ ընդունում և ներկայումս գնահատում է դրա ազդեցությունը:

Չիրացված վնասների համար հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը. Փոփոխություններ ՀՀՄՍ 12-ում (թողարկվել են 2016թ. հունվարին և ուժի մեջ են մտնում 2017 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)

2016թ. հունվարին, փոփոխություններ հրապարակելով ՀՀՄՍ 12-ում, ՀՀՄՍ-ն հստակեցրեց ֆինանսական հաշվառման նպատակով իրական արժեքով չափվող, սակայն հարկային հաշվառման նպատակով սկզբնական արժեքով չափվող պարտքային գործիքների գծով հետաձգված հարկային ակտիվների հաշվառման պահանջները: Ակնկալվում է, որ փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՀՀՄՍ 7-ի փոփոխություններ. Նախաձեռնություն տեղեկատվության բացահայտման ոլորտում (թողարկվել են 2016թ. հունվարի 29-ին և ուժի մեջ են մտնում 2017 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)

2016 թ. հունվարին ՀՀՄՍԽ-ն հրապարակեց «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին» ՀՀՄՍ 7-ում փոփոխություններ՝ նպատակ ունենալով բարելավել ֆինանսավորման գործունեության բացահայտումները և օգնել օգտագործողներին ավելի լավ հասկանալ հաշվետու ընկերության իրացվելիության դիրքերը: Ըստ նոր պահանջների՝ ընկերությունները պետք է բացահայտեն տեղեկատվություն ֆինանսավորման գործունեության հետևանքով իրենց ֆինանսական պարտավորությունների փոփոխությունների վերաբերյալ, ինչպիսիք են փոփոխությունները դրամական հոսքերից և ոչ դրամական հոդվածներից (օր.՝ օգուտ և վնաս արտարժույթի փոփոխությունից): Փոփոխությունը ուժի մեջ է մտնում 2017 թ. հունվարի 1-ից: Խումբը ներկայումս գնահատում է փոփոխության ազդեցությունը իր համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

4. Տոկոսային եկամուտ

հազար ՀՀ դրամ

	2016 թ.	2015 թ.
Տոկոսային եկամուտ արտարժույթով արտահայտված ակտիվների գծով		
Նոստրո հաշիվներ	461,374	121,076
Մինչև մարումը պահվող ակտիվներ	294,654	296,485
Ժամկետային ավանդներ	264,119	157,314
ԱՄՆ-ում տեղաբաշխված միջոցներ	2,394	784
Այլ	10,843	49,582
Ընդամենը տոկոսային եկամուտ արտարժույթով արտահայտված ակտիվների գծով	**1,033,384**	**625,241**
Տոկոսային եկամուտ տեղական արժույթով արտահայտված ակտիվների գծով		
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ	21,314,286	35,031,817
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	2,348,798	2,243,747
Ընդամենը տոկոսային եկամուտ տեղական արժույթով արտահայտված ակտիվների գծով	**23,663,084**	**37,275,564**
Ընդամենը տոկոսային եկամուտ	**24,696,468**	**37,900,805**

5. Տոկոսային ծախս

հազար ՀՀ դրամ

	2016 թ.	2015 թ.
Տոկոսային ծախս արտարժույթով արտահայտված պարտավորությունների գծով		
Այլ փոխառություններ	2,074,742	1,362,662
Պարտավորություններ ԱՄՆ-ի հանդեպ	1,270,377	1,137,224
Այլ	-	1,867
Ընդամենը տոկոսային ծախս արտարժույթով արտահայտված պարտավորությունների գծով	**3,345,119**	**2,501,753**
Տոկոսային ծախս տեղական արժույթով արտահայտված պարտավորությունների գծով		
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ (Ծնթգ. 27)	5,431,734	10,008,453
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	846,537	240,398
Թողարկված պարտատոմսեր	511,061	357,806
Այլ	94,878	85,660
Ընդամենը տոկոսային ծախս տեղական արժույթով արտահայտված պարտավորությունների գծով	**6,884,210**	**10,692,317**
Ընդամենը տոկոսային ծախս	**10,229,329**	**13,194,070**

6. Զուտ (վնաս)/օգուտ փոխարժեքային տարբերություններից

հազար ՀՀ դրամ

	2016 թ.	2015 թ.
Զուտ (վնաս)/օգուտ արտարժույթի վերագնահատումից	(2,883,382)	2,747,923
Զուտ օգուտ սփոթ գործարքներից	235,859	874,507
Ընդամենը զուտ (վնաս)/օգուտ փոխարժեքային տարբերություններից	**(2,647,523)**	**3,622,430**

Դրամային ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից ստացված զուտ (վնասի)/օգուտի կազմում ներառված է 1,874,640 հազար ՀՀ դրամ գումարով արտարժույթի վերագնահատումից զուտ վնասը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների գծով (2015թ.՝ 3,509,024 հազար ՀՀ դրամի զուտ վնաս):

7. Զուտ օգուտ /(վնաս) ածանցյալ գործիքներից

հազար ՀՀ դրամ

	2016 թ.	2015 թ.
Զուտ օգուտ/(վնաս) Կառավարության հետ կնքված ֆորվարդ պայմանագրից (Ծնթգ. 27)	547,349	(978,171)
Զուտ օգուտ/(վնաս) սեփական կառավարման ներքո ֆյուչերսային պայմանագրերի գծով	90,294	(984,393)
Զուտ վնաս սվոփ պայմանագրերից	-	(363,876)
Ընդամենը զուտ օգուտ/(վնաս) ածանցյալ գործիքներից	**637,643**	**(2,326,440)**

2007թ. հունվարի 5-ին Կառավարության հետ կնքված պայմանագրի համաձայն՝ Բանկը պարտավորվել է փոխարկել պետական բյուջեի հիմնական արտարժութային մուտքերն ու ելքերը Կառավարության բյուջետային ուղերձում տվյալ տարվա համար սահմանված փոխարժեքներով, ինչը հիմք է հանդիսանում «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» օրենքում ցուցանիշների հաշվարկման համար: Արտարժույթի փոխանակման այդպիսի գործարքներից օգուտը կամ վնասը Բանկը հաշվառում է որպես ածանցյալ գործիքներից ֆինանսական արդյունք:

8. Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից

հազար ՀՀ դրամ

	2016 թ.	2015 թ.
Զուտ օգուտ սեփական կառավարման ներքո գտնվող արտերկրյա արժեթղթերի գծով (բացառությամբ արտարժույթի վերագնահատման*)	3,684,946	1,406,599
Զուտ օգուտ հավատարմագրային կառավարման ներքո գտնվող ակտիվների գծով (բացառությամբ արտարժույթի վերագնահատման*)	522,643	290,126
Զուտ օգուտ ՀՀ պետական արժեթղթերից	292,002	213,702
Հավատարմագրային կառավարման գծով վճարներ (բացառությամբ արտարժույթի վերագնահատման*)	(178,377)	(181,376)
Ընդամենը զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից	**4,321,214**	**1,729,051**

** Վերը նշված ֆինանսական գործիքների գծով արտարժույթի վերագնահատման արդյունքը ներառված է «Զուտ (վնաս)/օգուտ փոխարժեքային տարբերություններից» հոդվածում (Ծնթգ. 6):*

9. Այլ եկամուտ

հազար ՀՀ դրամ

	2016 թ.	2015 թ.
Ֆինանսական գործակալության վճար	898,319	1,379,925
Դրամագիտական արժեքներ	495,206	607,117
Այլ	2,182,491	2,310,962
Ընդամենը այլ եկամուտ	**3,576,016**	**4,298,004**

Ֆինանսական գործակալության վճարն իրենից ներկայացնում է Բանկի՝ որպես Կառավարության գործակալի կողմից ստացված վճար՝ գործակալության պայմանագրերի համաձայն: Հիմք ընդունելով գործակալության պայմանագրերի դրույթները՝ Բանկը վարկեր է տրամադրում առևտրային բանկերին և այլ ֆինանսական հաստատություններին:

2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում «Այլ» տողում ներառված է 1,876,354 հազար ՀՀ դրամ գումարը, որը ներկայացնում է Բանկի երկու դուստր կազմակերպությունների հասույթը, որոնք տրամադրում են կանխիկի հավաքագրման և պլաստիկ քարտերով վճարումների ծառայություններ (2015թ.՝ 1,764,297 հազար ՀՀ դրամ):

10. Թղթադրամների, դրամագիտական արժեքների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր

հազար ՀՀ դրամ

	2016 թ.	2015 թ.
Տարվա ընթացքում վաճառված դրամագիտական արժեքների թողարկման ծախսեր	466,148	487,998
Թղթադրամների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր	300	1,773,953
Ընդամենը թղթադրամների, դրամագիտական արժեքների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր	**466,448**	**2,261,951**

11. Այլ ծախսեր

հազար ՀՀ դրամ

	2016 թ.	2015 թ.
Աշխատակիցների հատուցումներ, վերապատրաստման ծախսեր և հարակից վճարներ	8,743,184	8,115,218
Մաշվածություն և ամորտիզացիա	4,943,278	4,798,352
Վերանորոգում և տեխնիկական սպասարկում	1,862,214	1,764,893
Կրթություն, հետազոտություն և նոր ծրագրերի մշակում	1,315,819	204,030
Վճարահաշվարկային համակարգի զարգացման և սպասարկման ծախսեր	482,651	399,446
Անվտանգության և ապահովագրական ծախսեր	443,721	441,635
Մասնագիտական ծառայություններ	353,809	192,686
Բազելյան կոմիտեի պահանջների իրագործման ծախսեր	321,570	306,682
Այլ	2,538,312	2,474,436
Ընդամենը այլ ծախսեր	**21,004,558**	**18,697,378**

2016թ. դեկտեմբերի 31-ին և 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարիների ընթացքում «Այլ» տողում ներառված ծախսերը ներկայացնում են բաժանորդագրության վճարներ, ինչպես նաև ներկայացուցչական, տպագրման, կապի ապահովման, կոմունալ, վարձակալության և գրասենյակային ծախսեր:

2016թ. դեկտեմբերի 31-ին և 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարիների համար աշխատակիցների հատուցումների, վերապատրաստման ծախսերի և հարակից վճարների, մաշվածության և ամորտիզացիայի ու վերանորոգման և սպասարկման ծախսերի գումարները նաև ներառում են Խմբի դուստր կազմակերպությունների համապատասխան ծախսերի գումարները:

12. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2016 թ.	31 դեկտեմբերի 2015 թ.
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով		
Նոստրո հաշիվներ	391,056,963	253,102,636
Ժամկետային ավանդներ	29,028,319	15,440,510
Հավատարմագրային կառավարման ներքո գտնվող ակտիվներում ներառված դրամական միջոցներ	2,914,810	1,952,562
Ընդամենը բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով	**423,000,092**	**270,495,708**

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում արտարժույթով տեղաբաշխված միջոցների կենտրոնացում

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ տեղաբաշխված միջոցներ մեկ բանկում, որի մնացորդը գերազանցում էր բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված ընդհանուր միջոցների 10%-ը: 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ մնացորդի ընդհանուր գումարը կազմում է 265,089,384 հազար ՀՀ դրամ (2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ մեկ բանկում, մնացորդի ընդհանուր գումարը կազմում է 190,866,648 հազար ՀՀ դրամ):

Ժամկետային ավանդներն ունեն մինչև 1 ամիս մարման ժամկետ և 0.28%-ից մինչև 1.02% տոկոսադրույք (2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 0.51%-ից մինչև 0.52% տոկոսադրույք):

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հավատարմագրային կառավարման ներքո գտնվող ակտիվներում ներառված դրամական միջոցների 2,914,810 հազար ՀՀ դրամի մնացորդը (2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,952,562 հազար ՀՀ դրամի մնացորդը) իրենից ներկայացնում է ներդրումային կառավարման պայմանագրի շրջանակում Բանկի կողմից արտերկրյա արժեթղթերով գործարքների ներքո հաշվանցումների համար պահպանվող մնացորդը և ֆյուչերսային գործարքների ներքո հաշվանցումների մարժային պահուստը: 2016թ. դեկտեմբերի 31-ի և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տոկոսադրույքի ֆյուչերսների հաշվանցումների համար պահվող մարժային պահուստի գումարը ներառված է «Հավատարմագրային կառավարման ներքո գտնվող ակտիվներում ներառված կանխիկ» տողում:

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1,451,820 հազար ՀՀ դրամ արտարժութային ժամկետային ավանդներ Խմբի կողմից գրավադրված են թողարկված պարտատոմսերի ապահովվածության համար (Ծնթգ. 24) (2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1,452,060 հազար ՀՀ դրամ գրավադրված արտարժութային ժամկետային ավանդներ):

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2016 թ.	31 դեկտեմբերի 2015 թ.
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով		
Վարկեր բանկերին և ֆինանսական կազմակերպություններին KfW, Համաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի և Եվրոպական ներդրումային բանկի հետ համաձայնագրերի շրջանակներում	105,894,951	85,351,415
Հիփոթեքային վերաֆինանսավորում	61,258,612	49,183,495
Առևտրային բանկերում ավանդներ և ընթացիկ հաշիվներ	50,364,096	42,527,391
Հետգնման պայմանագրեր և այլ մեկօրյա միջոցներ	45,707,770	122,365,066
Ներդրումներ՝ դասակարգված որպես փոխառություններ և դեբիտորական պարտքեր	13,791,080	6,448,154
Ստորադաս վարկեր	-	3,079,245
Այլ վարկեր	7,324,837	7,821,877
Ընդամենը բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով	**284,341,346**	**316,776,643**

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղական արժույթով տեղաբաշխված միջոցների և ներդրումների կենտրոնացում

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 2 բանկի մնացորդները գերազանցում են բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղական արժույթով տեղաբաշխված միջոցների ընդհանուր գումարի 10%-ը (2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2 բանկ):

Հակադարձ հետգնման պայմանագրերով առևտրային բանկերին տրամադրված վարկերը ներառում են կարճաժամկետ վարկեր, որոնք տրամադրվել են առևտրային բանկերին կանոնավոր կերպով՝ մրցութային գործընթացի միջոցով:

Հակադարձ հետգնման համաձայնագրերով գրավի առարկա են հանդիսանում արժեթղթերը, որոնք Խումբը կարող է վաճառել կամ վերագրավադրել: 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ հետգնման պայմանագրեր են կնքվել 4 տեղական բանկերի և 3 այլ ֆինանսական հաստատությունների հետ (2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 16 տեղական բանկեր և 2 այլ ֆինանսական հաստատություններ): Այս պայմանագրերով գրավի առարկա հանդիսացող արժեթղթերի իրական արժեքները ներկայացված են ստորև.

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2016 թ.	31 դեկտեմբերի 2015 թ.
Կառավարության գանձապետական արժեթղթեր	45,178,235	109,253,680
Կառավարության կողմից թողարկված Եվրոպարտատոմսեր	2,078,547	11,837,588
Կորպորատիվ պարտատոմսեր	749,595	4,761,830
Ընդամենը	**48,006,377**	**125,853,098**

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 749,595 հազար ՀՀ դրամ կորպորատիվ պարտատոմսերից 289,360 հազար ՀՀ դրամը ներկայացնում է Խմբի դուստր կազմակերպությանը պատկանող պարտատոմսերը

(2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 4,761,830 հազար ՀՀ դրամ կորպորատիվ պարտատոմսերից 821,663 հազար ՀՀ դրամ):

KfW-ի, Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ), Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) և Համաշխարհային բանկի հետ պայմանագրերի շրջանակներում վարկեր են տրամադրվել տեղական առևտրային բանկերին հետևյալ ծրագրերի ներքո, որոնք ֆինանսավորվում են KfW բանկային խմբի, ԵՆԲ, ԱԶԲ և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (Համաշխարհային բանկի անդամ կազմակերպություն) կողմից.

- *ՓՄՁ աջակցություն.* Համաշխարհային բանկի և KfW-ի ՓՄՁ աջակցության ծրագրերի նպատակն է Հայաստանում զարգացնել ՓՄՁ-ները, մասնավորապես՝ առևտրային բանկերին և ունիվերսալ վարկային կազմակերպություններին ապահովելով անհրաժեշտ ֆինանսական միջոցներ՝ միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորումը առավել արդյունավետ և շահութաբեր դարձնելու նպատակով: Սա իրականացվում է գործընկեր բանկերում նոր վարկային գործիքակազմի /տեխնոլոգիաների/ ներդրման և բարձրակարգ վարկային մասնագետների ուսուցման և վերապատրաստումների կազմակերպման միջոցով: 2014թ. ընթացքում նոր վարկային գիծ է ստացվել ԱԶԲ-ի «Կանանց ձեռներեցության ոլորտի աջակցման և զարգացման» ծրագրի շրջանակներում: Ծրագրի հիմնական նպատակն է ՀՀ ֆինանսական համակարգի միջոցով խթանել ձեռներեցության զարգացումը կանանց շրջանում՝ մեծացնելով ազգային արժույթով ֆինանսական միջոցների հասանելիությունը կանանց պատկանող ՓՄՁ-ների համար: 2015թ. ընթացքում նոր վարկ է ստացվել ԵՆԲ-ից՝ հիմնականում գյուղմշակման, գյուղատնտեսության և զբոսաշրջության ոլորտների ՓՄՁ-ներին առևտրային բանկերի և ունիվերսալ վարկային կազմակերպությունների միջոցով փոխառություններ տրամադրելու նպատակով: 2016թ. ընթացքում նոր վարկ է ստացվել «Էներգաարդյունավետություն փոքր և միջին ձեռնարկությունների համար» վարկային ծրագրի շրջանակներում: Ծրագրի հիմնական նպատակն է ստեղծել և ընդլայնել էներգաարդյունավետության վարկերի առաջարկը Հայաստանի ֆինանսական կազմակերպություններում և միաժամանակ բավարարել էներգաարդյունավետության վարկերի պահանջարկը միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների համար: Ծրագրի նպատակն է նպաստել հայկական ՓՄՁ-ների կողմից էներգիայի պահանջարկի և վնասակար գազերի արտանետման նվազմանը, ինչպես նաև խթանել ձեռնարկությունների մրցունակությունը:
- *Վերականգնվող էներգիայի զարգացում.* Ծրագրի ընդհանուր նպատակն է՝ նպաստել էներգամատակարարման բարելավմանը և Հայաստանում մասնավոր հատվածի հետագա զարգացմանը՝ էլեկտրաէներգիայի արտադրության համար վերականգնվող էներգիայի աղբյուրների ծախսարդյունավետ օգտագործումն ապահովելու միջոցով: Ծրագրով նախատեսվում է աջակցել վերականգնվող էներգիայի օգտագործմանը, մասնավորապես փոքր հիդրոէլեկտրակայաններին (ՓՀԷԿ)՝ վարկեր տրամադրելով անհատ ձեռնարկատերերին և մասնավոր ձեռնարկություններին:
- *Բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացում.* Ծրագրի նպատակն է՝ ընդլայնել առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից անշարժ գույքի ձեռքբերման և վերանորոգման նպատակով տնային տնտեսություններին հատկացվող վարկավորումը:

Ծրագրերի պայմանների համաձայն, Խումբը, կիրառելով տեխնիկական և ֆինանսական չափանիշներ, սահմանում է համապատասխան հայաստանյան բանկեր և ֆինանսական հաստատություններ, որոնցում տեղաբաշխում է միջոցներ՝ այդ գործընկերների հետ ստորագրված պայմանագրերի համաձայն: Բանկերը և ֆինանսական հաստատությունները որոշում են վերջնական փոխառուներին՝ ստանձնելով տրամադրված վարկերի հետ կապված ռիսկերը:

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ KfW-ի, Համաշխարհային բանկի, ԵՆԲ-ի և ԱԶԲ-ի հետ պայմանագրերի շրջանակներում վարկեր են տրամադրվել տեղական 16 բանկերի (2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 15 տեղական բանկերի) և 9 այլ ֆինանսական կազմակերպությունների (2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 7 այլ ֆինանսական կազմակերպությունների):

2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիփոթեքային վերաֆինանսավորումը ֆինանսական կազմակերպություններին կատարվել է մինչև 10 տարի մարման ժամկետով (2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 11 տարի):

2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիփոթեքային վերաֆինանսավորման վարկերն ապահովված են գրավով՝ հաճախորդներին տրամադրված վարկային պայմանագրերի շրջանակներում պահանջի իրավունքով՝ 60,995,474 հազար ՀՀ դրամի գումարով (2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 49,059,324 հազար ՀՀ դրամ):

2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 7,024,213 հազար ՀՀ դրամ արժեքով հիփոթեքային վերաֆինանսավորման վարկերը (2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 4,287,045 հազար ՀՀ դրամ) գրավադրվել են՝ երաշխավորելու Խմբի՝ Կառավարությունից ստացված վարկերի (Ծնթգ. 23) և թողարկված պարտատոմսերի (Ծնթգ. 24) ապահովվածությունը:

Առևտրային բանկերում տեղաբաշխված ավանդները և ընթացիկ հաշիվները ներառում են Խմբի դուստր կազմակերպությունների կողմից առևտրային բանկերում կատարված ցպահանջ և կարճաժամկետ տեղաբաշխումները:

2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առևտրային բանկերում տեղական արժույթով ներդրված ավանդները և ընթացիկ հաշիվներ չեն գրավադրվել՝ երաշխավորելու Խմբի կողմից թողարկված պարտատոմսերի ապահովվածությունը (2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 30,000 հազար ՀՀ դրամ գրավադրված միջոցներ) (Ծնթգ. 24):

Խմբի ղեկավարությունը դասակարգել է 2016թ. ավարտվող տարվա դրությամբ 13,791,080 հազար ՀՀ դրամ ներդրումները՝ որպես փոխառություններ և դեբիտորական պարտքեր (2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 6,448,154 հազար ՀՀ դրամ): Խմբի ղեկավարությունը կայացրել է այդ որոշումը՝ ելնելով այն հանգամանքից, որ տվյալ ներդրումների համար իրացվելի շուկա առկա չէ և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Խումբն ունի այդ ներդրումները տեսանելի ապագայում պահելու հնարավորություն և մտադրություն:

Ստորադաս վարկերը ներառում են այն վարկերը, որոնք ստորադաս պայմաններով տրամադրվում են առևտրային բանկերին 2009 թ-ից սկսած, նախնական 5 տարի ժամկետով՝ բանկային համակարգում հավանական ճգնաժամային ռիսկերը զսպելու բավարար կարողություն ստեղծելու նպատակով: 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ստորադաս վարկերն ամբողջությամբ մարվել են:

Այլ վարկերն ապահովված են 5,371,933 հազար ՀՀ դրամ արժեքով անշարժ գույքով (2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 5,516,166 հազար ՀՀ դրամ) և 1,279,430 հազար ՀՀ դրամ արժեքով շարժական գույքով և այլ ակտիվներով (2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,680,204 հազար ՀՀ դրամ):

13. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2016 թ.	31 դեկտեմբերի 2015 թ.
Ակտիվներ		
Պարտքային և հաստատագրված եկամտով այլ գործիքներ արտարժույթով - Գնանշված		
Սեփական կառավարման ներքո գտնվող արտերկրյա պարտատոմսեր	515,867,650	434,162,433
Հավատարմագրային կառավարման ներքո գտնվող արտերկրյա պարտատոմսեր	75,773,877	78,599,919
Ընդամենը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ արտարժույթով - Գնանշված	**591,641,527**	**512,762,352**
Պարտքային և հաստատագրված եկամտով այլ գործիքներ տեղական արժույթով		
ՀՀ Կառավարության զանձապետական արժեթղթեր	2,352,333	1,665,748
Ընդամենը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ տեղական արժույթով	**2,352,333**	**1,665,748**
Ընդամենը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	**593,993,860**	**514,428,100**

2016թ. և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող՝ սեփական կառավարման ներքո գտնվող արտերկրյա պարտատոմսերն իրենցից ներկայացնում են.

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2016 թ.	31 դեկտեմբերի 2015 թ.
Պետական պարտատոմսեր	250,595,989	248,812,939
Պետական գործակալությունների պարտատոմսեր	117,820,190	106,179,924
Այլ արժեթղթեր	147,451,471	79,169,570
Ընդամենը	**515,867,650**	**434,162,433**

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող՝ սեփական կառավարման ներքո գտնվող արտերկրյա արժեթղթերն իրենցից ներկայացնում են եվրոպական երկրների կառավարությունների կողմից թողարկված արժեթղթեր և ԱՄՆ զանձապետական մուրհակներ, պետական գործակալությունների, արտերկրյա բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների կողմից թողարկված արժեթղթեր:

2016 թ. և 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հավատարմագրային կառավարման ներքո գտնվող արտերկրյա պարտատոմսերն իրենցից ներկայացնում են.

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2016 թ.	31 դեկտեմբերի 2015 թ.
Պետական պարտատոմսեր	26,833,437	17,227,083
Պետական գործակալությունների պարտատոմսեր	21,829,108	13,215,316
Այլ արժեթղթեր	27,111,332	48,157,520
Ընդամենը	**75,773,877**	**78,599,919**

Հավատարմագրային կառավարման ներքո գտնվող արժեթղթերն իրենցից ներկայացնում են միջազգային ֆինանսական կազմակերպությունների հայեցողական կառավարման ներքո գտնվող ակտիվներ՝ համաձայն ներդրումային կառավարման պայմանագրի:

2016 թ. և 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տեղական արժույթով պետական արժեթղթերն իրենցից ներկայացնում են Կառավարության արժեկտրոնային և զեղչատոկոսային գանձապետական արժեթղթեր:

14. Ածանցյալ ֆինանսական գործիքներ

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2016 թ.	31 դեկտեմբերի 2015 թ.
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ		
Արտարժութային պայմանագրեր հավատարմագրային կառավարման ներքո	-	103,306
Ընդամենը ածանցյալ ֆինանսական ակտիվներ	**-**	**103,306**
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ		
Ֆորվարդ պայմանագիր Կառավարության հետ	28,177	30,727
Արտարժութային պայմանագրեր հավատարմագրային կառավարման ներքո	51,773	-
Ընդամենը ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	**79,950**	**30,727**

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ 63 կարճ ֆյուչերսային պայմանագրեր՝ 9,354 հազար եվրո կամ 4,791,155 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով՝ համաձայն ՀՀ դրամի նկատմամբ եվրոյի՝ տարվա վերջի պաշտոնական փոխարժեքի, որոնք եղել են միջազգային ֆինանսական կազմակերպությունների հայեցողական կառավարման ներքո՝ համաձայն ներդրումային կառավարման պայմանագրի, տոկոսադրույքի ռիսկը կարգավորելու նպատակով (2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 139 կարճ ֆյուչերսային պայմանագրեր՝ 19,304 հազար եվրո կամ 10,206,001 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով):

հազար ՀՀ դրամ

	Անվանական արժեք		Իրական արժեք			
	2016 թ.	2015 թ.	2016 թ.		2015 թ.	
			Ակտիվ	Պարտավո-րություն	Ակտիվ	Պարտավո-րություն
Տոկոսադրույքի ֆյուչերսներ	4,791,155	10,206,001	-	51,773	103,306	-
Ընդամենը արտարժութային ֆյուչերսներ հավատարմագրային կառավարման ներքո	**4,791,155**	**10,206,001**	**-**	**51,773**	**103,306**	**-**
Ֆորվարդ պայմանագիր Կառավարության հետ	1,626,682	1,226,884	-	28,177	-	30,727
Ընդամենը	**6,417,837**	**11,432,885**	**-**	**79,950**	**103,306**	**30,727**

15. Ներդրումային արժեթղթեր

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2016 թ.	31 դեկտեմբերի 2015 թ.
Վաճառքի համար մատչելի ներդրումներ արտարժույթով – Չգնանշվող		
Բաժնային ներդրումներ		
Արտերկրյա արժեթղթեր	2,207,785	2,221,194
Բաժնային ներդրումներ սկզբնական արժեքով		
SWIFT	1,646	1,646
Ընդամենը վաճառքի համար մատչելի ներդրումներ արտարժույթով – Չգնանշվող	**2,209,431**	**2,222,840**
Վաճառքի համար մատչելի ներդրումներ տեղական արժույթով		
Պարտքային գործիքներ		
ՀՀ Կառավարության զանձապետական արժեթղթեր	21,204,072	13,770,172
ՀՀ Կառավարության կողմից թողարկված մուրհակ (Ծնթգ. 25)	73,810,843	81,275,373
Կորպորատիվ պարտատոմսեր	6,111,734	5,629,794
Ընդամենը պարտքային գործիքներ	**101,126,649**	**100,675,339**
Բաժնային ներդրումներ սկզբնական արժեքով		
Այլ ներդրումներ	661,794	610,681
Ընդամենը բաժնային ներդրումներ	**661,794**	**610,681**
Ընդամենը վաճառքի համար մատչելի ներդրումներ տեղական արժույթով	**101,788,443**	**101,286,020**
Ընդամենը վաճառքի համար մատչելի ներդրումներ	**103,997,874**	**103,508,860**
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ արտարժույթով		
Արտերկրյա արժեթղթեր	31,431,281	63,733,713
Ընդամենը մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ արտարժույթով	**31,431,281**	**63,733,713**

2016 թ. և 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ որպես վաճառքի համար մատչելի դասակարգված արտերկրյա արժեթղթերն իրենցից ներկայացնում են Խմբի դուստր կազմակերպություններից մեկի ներդրումը զարգացման հիմնադրամում, որի նախաձեռնողն ու կառավարողը KfW-ն է: Զարգացման հիմնադրամը

ստեղծվել է Հարավարևելյան Եվրոպայի տարածաշրջանի, ներառյալ Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացումն ու բարեկեցությունը խթանելու համար՝ լրացուցիչ զարգացման ֆինանսավորման կայուն ապահովման միջոցով:

Տեղական արժույթով և որպես վաճառքի համար մատչելի դասակարգված արժեթղթերն իրենցից ներկայացնում են ՀՀ Կառավարության պետական արժեկտրոնային արժեթղթեր և տեղական ներդրումային և զարգացման հիմնադրամների կողմից թողարկված արժեթղթեր:

Վաճառքի համար մատչելի պարտքային ներդրումային արժեթղթերը չափվում են իրական արժեքով՝ օգտագործելով գնահատման տեխնիկա, որը օգտագործում է ընթացիկ շուկայական տոկոսադրույքները՝ այդ ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը զեղչելու համար:

2016 թվականին Կառավարության կողմից վերաթողարկվել է 73,810,843 հազար ՀՀ դրամ (2015թ.՝81,275,373 հազար ՀՀ դրամ) արժեքով անտոկոս ցպահանջ հասարակ մուրհակ: Ղեկավարությունը գտնում է, որ մուրհակի հաշվեկշռային արժեքը մոտավորապես հավասար է դրա իրական արժեքին:

Մինչև մարման ժամկետ պահվող դասակարգված արտերկրյա արժեթղթերը ներառում են եվրոպական երկրների կողմից թողարկված զեղչատոկոսային և արժեկտրոնային արժեթղթեր, ինչպես նաև պետական գործակալությունների, արտերկրյա բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների թողարկած արժեթղթեր:

2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում Խումբը վերադասակարգել է որոշ ֆինանսական ակտիվներ, որոնք մարվելու էին 2016 թ. ընթացքում, մինչև մարման ժամկետ պահվող կատեգորիայից վաճառքի համար պահվող կատեգորիա՝ պայմանավորված Բանկի արտարժութային ակտիվների արժութային կառուցվածքի վերաբալանսավորման հետ, որի անհրաժեշտությունը առաջացել է ԱՄՀ կողմից ՀՓԻ արժութային զամբյուղի կառուցվածքի փոփոխության արդյունքում: Վերադասակարգումը տեղի է ունեցել այդ ակտիվների մարման ամսաթվին մոտ ժամանակահատվածում: Վերադասակարգման ամսաթվի դրությամբ վերոնշյալ ակտիվների հաշվեկշռային արժեքը եղել է 8,982,014 հազար ՀՀ դրամ, իրական արժեքը՝ 9,029,947 հազար ՀՀ դրամ:

16. Գործարքներ Արժույթի միջազգային հիմնադրամի հետ

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2016 թ.	31 դեկտեմբերի 2015 թ.
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ		
Բաժնեմասը ԱՄՀ-ում (անդամակցություն)	83,794,704	61,672,200
ԱՄՀ-ում ՀՓԻ միջոցներ	1,684,319	1,383,162
Հաշվեգրված տոկոսներ	1,272	312
Ընդամենը ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	**85,480,295**	**63,055,674**

Հայաստանի Հանրապետությունը ԱՄՀ-ի անդամ է: Բանկը հանդես է գալիս որպես Հայաստանի Հանրապետության՝ ԱՄՀ-ում անդամակցության բաժնեմասի պահառու:

Բաժնեմասի հաշվեկշիռն ակտիվի հատուկ տեսակ է: Բաժնեմասերը լինում են տարբեր՝ կախված յուրաքանչյուր երկրի տնտեսության չափից և որոշվում են ԱՄՀ-ի կառավարիչների խորհրդի կողմից: Բաժնեմասով որոշվում են ԱՄՀ-ում անդամ երկրի ձայնի իրավունքը, ԱՄՀ-ի ֆինանսական միջոցների հասանելիության սահմանաչափերը և մասնակցի մասնաբաժինը ԱՄՀ-ի հաշվարկային միավորի՝ ՀՓԻ-ների տեղաբաշխում իրականացնելիս: Հայաստանի Հանրապետության բաժնեմասի 75%-ի համար վճարումը կատարվել է Բանկի կողմից ԱՄՀ-ին՝ թողարկված անտոկոս հասարակ մուրհակների տեսքով: 2016թ. փետրվարի 25-ին Հայաստանի Հանրապետության բաժնեմասը ԱՄՀ-ում 92,000 հազար ՀՓԻ-ից բարձրացել է մինչև 128,800 հազար ՀՓԻ՝ համաձայն ԱՄՀ կառավարիչների խորհրդի որոշման: Բաժնեմասի վճարման՝ մուրհակի միջոցով կատարված մասը (18,622,225 հազար ՀՀ դրամ) չի պահանջել դրամական միջոցների և դրանց համարժեքների օգտագործում և բացառվել է դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունից: 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության բաժնեմասը ԱՄՀ-ում կազմել է 128,800 հազար ՀՓԻ կամ 83,794,704 հազար ՀՀ դրամ՝ հիմք ընդունելով տարվա վերջի՝ ՀՓԻ-նկատմամբ ՀՀ դրամի պաշտոնական փոխարժեքը (2015 թ.՝ 92,000 հազար ՀՓԻ կամ 61,672,200 հազար ՀՀ դրամ՝ հիմք ընդունելով տարվա վերջի՝ ՀՓԻ-ի նկատմամբ ՀՀ դրամի պաշտոնական փոխարժեքը): Անդամակցության բաժնեմասն անտոկոս է և ոչ ընթացիկ ակտիվ է:

Բանկն ԱՄՀ-ում ՀՓԻ-ով արտահայտված ընթացիկ հաշիվն օգտագործում է ԱՄՀ-ի հետ գործարքներ կատարելիս: Այդ ընթացիկ հաշիվը տոկոսային է. տոկոսները հաշվարկվում են՝ հիմք ընդունելով շաբաթական կտրվածքով ԱՄՀ-ի կողմից հրապարակվող ՀՓԻ տոկոսադրույքը:

Ստորև ներկայացված են 2016 թ. դեկտեմբերի 31-ին և 2015 թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում ՀՓԻ հաշվում շարժերը.

հազար ՀՀ դրամ

	2016 թ.	2015 թ.
ՀՓԻ հաշվի մնացորդն առ 1 հունվարի	**1,383,162**	**2,963,798**
ԱՄՀ-ից միջոցների ստացում «Երկարաձգվող ֆինանսավորում» (Extended Fund Facility (EFF)) ծրագրի շրջանակներում.		
Հօգուտ Բանկի	20,816,691	4,658,010
ՀՓԻ-ների գնում	4,459,268	6,960,067
Փոխանցում Բանկի՝ այլ բանկերում նոստրո հաշիվներին՝ «Երկարաձգվող ֆինանսավորում» (Extended Fund Facility (EFF)) ծրագրի միջոցներից	(12,783,356)	-
Վարկերի հետվճարում ԱՄՀ-ին.		
Բանկի անունից՝		
(Poverty Reduction and Growth Trust (PRGT))	(2,131,827)	(3,020,627)
Stand-By Arrangement (SBA) ծրագիր	-	(1,923,050)
Extended Fund Facility (EFF)	(8,653,383)	(4,862,374)
Կառավարության անունից՝		
Stand-By Arrangement (SBA) ծրագիր	(6,175,021)	(2,035,810)
Վարկերին վերաբերող միջնորդավճարների վճարում	(136,129)	(62,663)
Այլ եկամուտ	39,014	15,616
Այլ վճարներ	(2,090)	(999)
ԱՄՀ միջոցների օգտագործման դիմաց տոկոսագումարների վճարում.		
Բանկի անունից	(1,163,336)	(1,087,467)
Կառավարության անունից	-	(12,639)
ՀՓԻ տեղաբաշխումից ստացված միջոցների օգտագործման դիմաց տոկոսագումարի վճարում	(33,345)	(29,537)
ՀՓԻ միջոցներից եկամուտ	1,444	633
Պահուստային դիրքի հետգնում	6,199,880	-
Փոխարժեքային տարբերություններ	(136,653)	(179,796)
ՀՓԻ հաշվի մնացորդն առ 31 դեկտեմբերի	**1,684,319**	**1,383,162**

2016 թ. ընթացքում ստացվել են և ՀՓԻ հաշվին մուտքագրվել են հետևյալ միջոցները. 31,300 հազար ՀՓԻ՝ «Երկարաձգվող ֆինանսավորում» (Extended Fund Facility (EFF)) ծրագրի շրջանակներում, որից մի մասը փոխարկվել է ԱՄՆ դոլարի և փոխանցվել Բանկի՝ այլ բանկերում ԱՄՆ դոլարով թղթակցային հաշիվներից մեկին: Բոլոր այդ միջոցները ստացվել են Բանկի կողմից, իր անունից:

2015 թ. ընթացքում ստացվել են և ՀՓԻ հաշվին մուտքագրվել են հետևյալ միջոցները. 11,740 հազար ՀՓԻ՝ «Երկարաձգվող ֆինանսավորում» (Extended Fund Facility (EFF)) ծրագրի շրջանակներում: 7,000 հազար ՀՓԻ մուտքագրվել է ՀՓԻ հաշվին: Մնացորդային մասը արտահայտված է եղել ԱՄՆ դոլարով և մուտքագրվել է ԱՄՆ դոլարով թղթակցային հաշիվներից մեկին: Բոլոր այդ միջոցները ստացվել են Բանկի կողմից, իր անունից:

Վերը ներկայացված աղյուսակում ներառված գործարքների գումարները ՀՀ դրամի համարժեքով են՝ հիմք ընդունելով գործարքների տեղի ունենալու ամսաթվի դրությամբ ՀՓԻ/դրամ փոխարժեքը:

Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2016 թ.	31 դեկտեմբերի 2015 թ.
Արժեթղթերի հաշիվ	159,285,304	140,663,079
ԱՄՀ-ի հանդեպ պարտավորությունների ճշգրտման հաշիվ	(8,201,736)	143,670
Թիվ 1 հաշիվ	48,356,946	27,929,924
Թիվ 2 հաշիվ	2,637	2,606
ՀՓԻ տեղաբաշխում	57,243,662	58,983,198
ECF վարկ՝	22,187,380	25,021,484
Հաշվեկշռային արժեք	21,161,000	23,740,786
Հետաձգված եկամուտ	1,026,380	1,280,698
Հաշվեգրված տոկոսներ	249,739	195,170
Ընդամենը պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	**279,123,932**	**252,939,131**

Արժեթղթերի հաշիվը, ճշգրտման հաշիվը և թիվ 1 հաշիվը ներառում են Բանկի պարտավորությունները EFF վարկի և անդամակցության գումարների գծով: Ներկայումս ԱՄՀ-ի հետ բոլոր հիմնական հաշվարկներն իրականացվում են թիվ 1 հաշվի միջոցով: Թիվ 2 հաշիվն օգտագործվում է ԱՄՀ-ի կողմից վարչական նպատակների համար:

2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱՄՀ-ի հանդեպ Բանկի պարտավորությունների մի մասը և անդամակցության գումարը ծածկվում են Խմբի թողարկած հասարակ մուրհակով՝ 159,285,304 հազար ՀՀ դրամի (2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 140,663,079 հազար ՀՀ դրամի) չափով:

Բացառությամբ անդամակցության բաժնեմասի և ՀՓԻ տեղաբաշխման մասով պարտավորության՝ բանկի պարտավորությունը ԱՄՀ-ի հանդեպ 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներառում է պարտավորություններն ըստ «Երկարաժամկետ վարկային գործիք» (Extended Credit Facility (ECF)) ծրագրի և «Երկարաձգվող ֆինանսավորում» (Extended Fund Facility (EFF)) ծրագրի:

ECF (Extended Credit Facility) վարկը ֆինանսական աջակցություն է տրամադրում վճարային հաշվեկշռի հետ կապված երկարատև խնդիրներ ունեցող երկրներին: ECF-ը ստեղծվել է նոր հաստատված «Աղքատության կրճատում և տնտեսական աճ» ծրագրի ներքո և մաս է կազմում առավել լայն շրջանակի բարեփոխումների, որոնք ուղղված են ԱՄՀ-ի ֆինանսական աջակցությունն առավել ճկուն դարձնելուն և որոնք առավել հարմարեցված են ցածր եկամուտ ունեցող երկրների բազմազան կարիքներին, ներառյալ ճգնաժամային ժամանակաշրջաններում: 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ECF-ն անտոկոս է (2015 թ.՝ 0%): 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չմարված վարկերը ենթակա են մարման 2017 թ. մայիսից մինչև 2023 թ. հունիս (2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չմարված վարկեր՝2016 թ. մայիսից մինչև 2023 թ. հունիս):

EFF (Extended Fund Facility) վարկը տրամադրվում է երկրներին միջնաժամկետ վճարման խնդիրների հաղթահարման համար: EFF վարկի տոկոսադրույքը լողացող է և հրապարակվում է ԱՄՀ-ի կողմից շաբաթական կտրվածքով: 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չմարված վարկերը ենթակա են մարման 2017 թ. հունիսից մինչև 2026 թ. դեկտեմբեր (2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չմարված վարկեր՝ 2016 թ. հունիսից մինչև 2025 թ. նոյեմբեր):

Stand-By վարկը տրամադրվում է ԱՄՀ-ի անդամ երկրներին՝ ճգնաժամի պայմաններում վճարային խնդիրների հաղթահարման համար: SBA վարկերի մի մասը ստացվել է անմիջապես Բանկի կողմից, իսկ մյուս մասը՝ Բանկի կողմից՝ Կառավարության անունից: SBA վարկի տոկոսադրույքը լողացող է և ԱՄՀ-ի

կողմից հրապարակվում է շաբաթական կտրվածքով: Մինչև 2012 թ. նոյեմբեր ԱՄՀ-ն տարեկան 2% հավելավճար էր հաշվարկում ԱՄՀ-ում անդամակցության գումարի 300%-ը գերազանցող Stand-By և EFF վարկերի ընդհանուր գումարի նկատմամբ, իսկ 2012 թ. նոյեմբերից մինչև 2013 թ. սեպտեմբերի 30-ը հաշվարկում էր 3% հավելավճար, քանի որ արդեն 3 տարի էր, ինչ Stand-By և EFF վարկերի գումարը շարունակում էր գերազանցել ԱՄՀ-ում անդամակցության գումարի 300%-ը: 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի պարտավորությունը SBA վարկի գծով մարվել է:

ԱՄՀ անդամ երկրների միջազգային պահուստներն ավելացնելու նպատակով ԱՄՀ-ն ՀՓԻ տեղաբաշխում է իրականացնում անդամ երկրներին: ՀՓԻ տեղաբաշխման տոկոսադրույքը լողացող է և հրապարակվում է ԱՄՀ-ի կողմից շաբաթական կտրվածքով: ՀՓԻ տեղաբաշխումը չունի սահմանված մարման ժամկետ, սակայն կարող է չեղարկվել ԱՄՀ-ի կողմից:

17. Հիմնական միջոցներ

հազար ՀՀ դրամ

	Հող և շենքեր	Ցանցեր, համակարգչային և այլ սարքավորումներ	Փոխադրամիջոցներ	Անավարտ շինարարություն	Ընդամենը
Սկզբնական արժեք					
Մնացորդը առ 1 հունվարի 2015 թ.	**64,648,053**	**23,113,082**	**618,138**	**5,199,409**	**93,578,682**
Ավելացումներ	24,450	450,098	77,184	2,524,907	3,076,639
Օտարումներ	(150,508)	(311,133)	(25,668)	-	(487,309)
Տեղափոխում	7,313,395	125,510	-	(7,438,905)	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015 թ.	**71,835,390**	**23,377,557**	**669,654**	**285,411**	**96,168,012**
Ավելացումներ	80,585	409,125	56,018	2,661,468	3,207,196
Օտարումներ	-	(460,633)	(51,356)	-	(511,989)
Տեղափոխում	972,155	(972,155)	-	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2016 թ.	**72,888,130**	**22,353,894**	**674,316**	**2,946,879**	**98,863,219**
Մաշվածություն					
Մնացորդը առ 1 հունվարի 2015 թ.	**6,089,210**	**8,885,383**	**369,266**	**-**	**15,343,859**
Տարվա մաշվածության ծախս	2,528,036	1,820,554	68,340	-	4,416,930
Օտարումներ	(149,001)	(302,736)	(23,614)	-	(475,351)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015 թ.	**8,468,245**	**10,403,201**	**413,992**	**-**	**19,285,438**
Տարվա մաշվածության ծախս	2,713,844	1,777,485	70,893	-	4,562,222
Օտարումներ	-	(443,893)	(47,729)	-	(491,622)
Տեղափոխում	179,117	(179,117)	-	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2016 թ.	**11,361,206**	**11,557,676**	**437,156**	**-**	**23,356,038**
Հաշվեկշռային արժեք					
2016 թ. դեկտեմբերի 31-ին	**61,526,924**	**10,796,218**	**237,160**	**2,946,879**	**75,507,181**
2015 թ. դեկտեմբերի 31-ին	**63,367,145**	**12,974,356**	**255,662**	**285,411**	**76,882,574**

Անավարտ շինարարությունը հիմնականում բաղկացած է շենքերի շինարարությունից: Ավարտից հետո ակտիվները վերադասակարգվում են համապատասխանաբար որպես շենքեր և սարքավորումներ:

18. Ոչ նյութական ակտիվներ

հազար ՀՀ դրամ

	Համակարգչային ծրագրեր
Սկզբնական արժեք	
Մնացորդը առ 1 հունվարի 2015 թ.	**2,763,116**
Ավելացումներ	341,909
Օտարումներ	(13,607)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015 թ.	**3,091,418**
Ավելացումներ	223,754
Օտարումներ	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2016 թ.	**3,315,172**
Ամորտիզացիա	
Մնացորդը առ 1 հունվարի 2015 թ.	**981,347**
Տարվա ամորտիզացիոն ծախս	381,422
Օտարումներ	(10,735)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015 թ.	**1,352,034**
Տարվա ամորտիզացիոն ծախս	381,056
Օտարումներ	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2016 թ.	**1,733,090**
Հաշվեկշռային արժեք	
2016 թ. դեկտեմբերի 31-ին	**1,582,082**
2015 թ. դեկտեմբերի 31-ին	**1,739,384**

19. Այլ ակտիվներ տեղական արժույթով

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2016 թ.	31 դեկտեմբերի 2015 թ.
Դրամագիտական արժեքներ	7,934,344	7,168,991
Կանխավճարներ	3,030,893	2,141,070
Այլ	2,526,234	3,283,395
Ընդամենը այլ ակտիվներ	**13,491,471**	**12,593,456**

20. Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2016 թ.	31 դեկտեմբերի 2015 թ.
Պարտավորություններ արտարժույթով		
Տեղական բանկերի լորո հաշիվներ և ավանդներ	256,510,976	184,852,856
Ավանդների երաշխավորման հիմնադրամի ժամկետային ավանդ և ընթացիկ հաշիվներ	1,703,577	1,850,415
Այլ իրավաբանական անձանց ընթացիկ հաշիվներ	15,539	289,645
Ընդամենը պարտավորություններ արտարժույթով	**258,230,092**	**186,992,916**
Պարտավորություններ տեղական արժույթով		
Տեղական բանկերի լորո հաշիվներ և ավանդներ	329,168,722	324,424,899
Ավանդների երաշխավորման հիմնադրամի ժամկետային ավանդ և ընթացիկ հաշիվներ	274,930	117,737
Այլ իրավաբանական անձանց ընթացիկ հաշիվներ	15,688	271,271
Ընդամենը պարտավորություններ տեղական արժույթով	**329,459,340**	**324,813,907**
Ընդամենը ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	**587,689,432**	**511,806,823**

Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդների կենտրոնացում

2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 2 բանկի մնացորդ գերազանցել է Խմբի ընդհանուր ֆինանսական և այլ հաստատությունների ավանդների և հաշիվների մնացորդների 10%-ը: Այդ մնացորդը 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 201,342,818 հազար ՀՀ դրամ (2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2 բանկ, 166,323,130 հազար ՀՀ դրամ):

21. Այլ փոխառություններ

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2016 թ.	31 դեկտեմբերի 2015 թ.
Վարկեր KfW-ից	48,539,612	41,396,010
Վարկեր ԵՆԲ-ից	30,332,787	30,320,617
Վարկեր Համաշխարհային բանկից	22,642,785	23,270,697
Վարկեր ԱԶԲ -ից	5,004,020	3,496,469
Այլ	6,673,519	1,456,671
Ընդամենը այլ փոխառություններ	**113,192,723**	**99,940,464**

KfW-ի կողմից Խմբին տրամադրվել են վարկեր Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության ֆինանսական համագործակցության միջկառավարական պայմանագրի շրջանակներում, որի նպատակը վարկային հատուկ ծրագրերի ֆինանսավորումն է տեղական առևտրային բանկերի միջոցով (Ծնթգ. 12): Վարկերի մարման ժամկետայնությունը 2017 թ-ից մինչև 2048 թ. ընկած ժամանակաշրջանն է (2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2016 թ-ից մինչև 2048 թ.): Վարկերի մարումը KfW-ին երաշխավորված է Կառավարության կողմից:

Բանկին տրամադրվել են վարկեր Համաշխարհային բանկի կողմից, որի նպատակը փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորումն է տեղական առևտրային բանկերի և ֆինանսական կազմակերպությունների միջոցով (Ծնթգ. 12): Վարկերի մարման ժամկետայնությունը 2017 թ-ից 2035 թ. ընկած ժամանակաշրջանն է (2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2016 թ-ից 2035 թ.):

ԱԶԲ-ի կողմից տրամադրվել է փոխառություն՝ առևտրային բանկերի և ֆինանսական հաստատությունների միջոցով կանանց պատկանող փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման նպատակով (Ծնթգ. 12): Վարկի մարման ժամկետայնությունը 2017 թ-ից մինչև 2044թ. ընկած ժամանակաշրջանն է (2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2016 թ-ից 2044 թ.):

2016թ. ընթացքում Խումբը վարկեր է ստացել Եվրոպական ներդրումային բանկից՝ փոքր նախագծերի ֆինանսավորման համար: Վարկերը ուղղվելու են հիմնականում գյուղմշակման և գյուղատնտեսության ոլորտներին (Ծնթգ. 12): Վարկերի մարման ժամկետայնությունը 2018 թ-ից մինչև 2030 թ. ընկած ժամանակաշրջանն է:

2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Խմբի դուստր կազմակերպություններից մեկը փոխառություն է ստացել Ֆրանսիական զարգացման գործակալությունից՝ ներառված «Այլ» դասում: Վարկի մարման ժամկետայնությունը 2017 թ.-ից մինչև 2025 թ. ընկած ժամանակահատվածն է (2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2016 թ-ից մինչև 2025 թ.): 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս վարկային ծրագրի գծով մնացորդը կազմում է 6,673,519 հազար ՀՀ դրամ (2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,456,671 հազար ՀՀ դրամ):

22. Այլ պարտավորություններ տեղական արժույթով

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2016 թ.	31 դեկտեմբերի 2015 թ.
Այլ պարտավորություններ տեղական արժույթով		
Կրեդիտորական պարտքեր	2,062,488	1,866,393
Աշխատակիցների ցպահանջ ավանդներ	829,066	676,635
Այլ պարտավորություններ	1,175,813	471,178
Ընդամենը այլ պարտավորություններ տեղական արժույթով	**4,067,367**	**3,014,206**

23. Պարտավորություններ Հայաստանի Հանրապետության Կառավարության հանդեպ

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2016 թ.	31 դեկտեմբերի 2015 թ.
Պարտավորություններ արտարժույթով		
Կառավարության ընթացիկ հաշիվներ	1,195,241	1,061,467
Կրեդիտորական պարտքեր	-	248,105
Ընդամենը պարտավորություններ արտարժույթով	**1,195,241**	**1,309,572**
Պարտավորություններ տեղական արժույթով		
Ժամկետային ավանդներ	135,211,272	86,130,956
Կառավարության ընթացիկ հաշիվներ	47,104,499	46,845,662
Կառավարությունից ստացված վարկեր	1,609,773	2,253,561
Ընդամենը պարտավորություններ տեղական արժույթով	**183,925,544**	**135,230,179**
Ընդամենը պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ	**185,120,785**	**136,539,751**

Կառավարության ժամկետային ավանդների ժամկետայնությունը մինչև մեկ տարի է, և տոկոսադրույքը կազմում է 5.98%-ից մինչև 7.25% (2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 10.1%-ից մինչև 11.2%):

2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չմարված՝ Կառավարությունից ստացված վարկերում ներառված են 2009 թ. հունիսի 13-ին ստորագրված ընդհանուր համաձայնագրի հիման վրա հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման ծրագրի շրջանակներում Խմբի դուստր կազմակերպություններից մեկի կողմից Կառավարությունից ստացված վարկերը: Վարկերի անվանական տոկոսադրույքը տարեկան 7% է, մարման ժամկետը՝ մինչև 2019 թ. հունիսը:

2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկերին և այլ ֆինանսական հաստատություններին տրամադրված 1,466,583 հազար ՀՀ դրամ ընդհանուր արժեքով հիփոթեքային վերաֆինանսավորման վարկերը հանդիսանում են Կառավարությունից ստացված վարկի դիմաց գրավ (2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,902,052 հազար ՀՀ դրամ):

24. Թողարկված պարտատոմսեր

2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի դուստր կազմակերպությունն ուներ թողարկած 2,137,300 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով՝ մեկ տարի ժամկետայնությամբ զեղչատոկոսային պարտատոմսեր, 3,510,600 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով՝ երեք տարի ժամկետայնությամբ արժեկտրոնային պարտատոմսեր (մարումը՝ մինչև 2019 թ. նոյեմբեր), 2,000,000 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով՝ երեք տարի ժամկետայնությամբ արժեկտրոնային պարտատոմսեր (մարումը՝ մինչև 2017թ. հոկտեմբեր) և 1,200,000 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով՝ հինգ տարի ժամկետայնությամբ արժեկտրոնային պարտատոմսեր (մարումը՝ մինչև 2019 թ. հունիս) (2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2,000,000 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով՝ երեք տարի ժամկետայնությամբ արժեկտրոնային պարտատոմսեր և 1,200,000 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով՝ հինգ տարի ժամկետայնությամբ արժեկտրոնային պարտատոմսեր):

Պարտատոմսերի միջին տարեկան եկամտաբերությունը կազմել է 9.8%-ից 11.82% (2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 9,8%-ից մինչև 11.82%): 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ թողարկված պարտատոմսերի հաշվեկշռային արժեքը կազմում է 8,788,038 հազար ՀՀ դրամ (2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 3,244,388 հազար ՀՀ դրամ): 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 5,557,630 հազար ՀՀ դրամ (2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2,384,993 հազար ՀՀ դրամ) արժեքով բանկերին և այլ ֆինանսական հաստատություններին տրամադրված հիփոթեքային վերաֆինանսավորման վարկեր և 1,451,820 հազար ՀՀ դրամ՝ արտարժույթով ժամկետային ավանդներ (2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,452,060 հազար ՀՀ դրամ՝ արտարժույթով և 30,000 հազար ՀՀ դրամ՝ տեղական արժույթով) գրավադրված են թողարկված պարտատոմսերի ապահովվածության համար:

25. Կապիտալի կառավարում

Խմբի կապիտալը ներառում է Խմբի ակտիվների մնացորդային արժեքը՝ պարտավորությունների չափով նվազեցում կատարելուց հետո:

Բանկի (որպես կենտրոնական բանկի) նկատմամբ չկան արտաքին կապիտալի պահանջներ, բացառությամբ Օրենքով կանոնադրական կապիտալի չափի նկատմամբ սահմանված պահանջի:

Համաձայն Օրենքի՝ Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 100,000 հազար ՀՀ դրամ: Բանկի կանոնադրական կապիտալը Հայաստանի Հանրապետության սեփականությունն է և չի կարող գրավ դրվել, բռնագանձվել կամ այլ կերպ օտարվել Հայաստանի Հանրապետության պարտավորությունների դիմաց:

Կապիտալը կառավարելիս Բանկի նպատակն է պահպանել կապիտալի համապատասխան մակարդակ՝ Բանկի տնտեսական անկախությունն ու իր գործառույթներն իրականացնելու կարողությունն ապահովելու համար: Բանկի ղեկավարությունը կառավարման ներքո գտնվող ողջ կապիտալը դիտարկում է որպես սեփական կապիտալ, ինչպես ներկայացված է ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում:

Բանկի կապիտալի բաղադրիչների կառավարման նպատակներն ու քաղաքականությունը սահմանված են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) որոշումներով հաստատված համապատասխան ներքին կանոնակարգերով: Իր գործառույթների իրականացման հետ կապված ֆինանսական ռիսկերը ծածկելու նպատակով միջոցների և պահուստների ձևավորումը կատարվում է Խորհրդի կողմից հաստատված կանոնակարգերին և Օրենքին համապատասխան:

Գլխավոր պահուստը ձևավորվում է Օրենքի համաձայն և ենթակա չէ բաշխման: Գլխավոր պահուստը ձևավորվում է բանկային գործունեության արդյունքում առաջացող ընդհանուր ռիսկերը (հնարավոր վնասները) ծածկելու համար: Կառավարության կողմից թողարկված մուրհակը իրենից ներկայացնում է ցպահանջ անտոկոս հասարակ մուրհակի տեսքով Կառավարության ներդրումը, որը կատարվում է Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններում ֆինանսական տարվա արդյունքում առաջացած վնասի՝ պահուստների հանրագումարը գերազանցելու դեպքում:

2016 թ. դեկտեմբերին Խումբը բաշխել է 2015 թ. դեկտեմբերի դրությամբ առաջացած շահույթի 80%-ը՝ նախկինում Կառավարության կողմից թողարկված մուրհակի գումարը ծածկելու նպատակով: 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շահույթի մնացորդային մասը փոխանցվել է գլխավոր պահուստ: Կառավարությունը վերաթողարկել է 73,810,843 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով անտոկոս հասարակ մուրհակ (Ծնթգ. 15): Հասարակ մուրհակի գումարը մարմանն ուղղված շահույթի բաշխումը և շահույթի փոխանցումը գլխավոր պահուստ չեն պահանջել դրամական միջոցների և դրանց համարժեքների օգտագործում և բացառվել են դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունից:

2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վաճառքի համար մատչելի ակտիվների վերագնահատման պահուստը, որը կազմում է 1,083,657 հազար ՀՀ դրամ (դրական ազդեցություն) (2015 թ. դեկտեմբերի 31-ի

դրությամբ՝ 1,131,000 հազար ՀՀ դրամ (բացասական ազդեցություն)), ներկայացնում է հաշվետու ամսաթվի դրությամբ Խմբի՝ վաճառքի համար մատչելի դասակարգված ֆինանսական ակտիվների իրական արժեքի և դրանք սկզբնական ճանաչման իրական արժեքի միջև տարբերությունը:

26. Պայմանական պարտավորություններ

Կապիտալ բնույթի պարտավորություններ

2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կապիտալ ներդրումների գծով պարտավորությունները, որոնք վերաբերում են Խմբի շենքերի կապիտալ շինարարությանը և համակարգչային ծրագրի մշակմանը, կազմում են 1,410,017 հազար ՀՀ դրամ (2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 231,336 հազար ՀՀ դրամ):

Իրավական պարտավորություններ

Խմբի ղեկավարությանը հայտնի չէ Խմբի դեմ հարուցված որևէ փաստացի, անավարտ կամ սպառնացող էական հայցերի մասին:

Երաշխիքներ

2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունի տրված երաշխիքներ 746,025 հազար ՀՀ դրամի չափով (2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 745,732 հազար ՀՀ դրամ): Երաշխիքները տրվել էին 1994 թ-ից 1995 թ. ընկած ժամանակաշրջանում՝ շինարարական ընկերությունների անունից երկրաշարժի գոտու վերակառուցման նպատակով: Երաշխիքներն իրենցից ներկայացնում են չեղյալ չհամարվող հաստատումներ առ այն, որ Խումբը կկատարի վճարումներն այն դեպքում, երբ հաճախորդն ի վիճակի չի լինի կատարել իր պարտավորությունները երրորդ կողմերի հանդեպ և կենթարկվի վարկային ռիսկի: Երաշխիքների տրման ամսաթվից մինչև 2016 թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում Խումբը չի կատարել որևէ վճարում և չի ստացել այդ երաշխիքների գծով որևէ պահանջ:

27. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Գործարքներ ղեկավար անձնակազմի անդամների հետ

Ստորև ներկայացված է «Աշխատակիցների հատուցումներ, վերապատրաստման ծախսեր և հարակից վճարներ» հոդվածում ներառված ղեկավար անձնակազմի անդամների ընդհանուր վարձատրությունը (Ծնթգ. 11):

հազար ՀՀ դրամ

	2016 թ.	2015 թ.
Ղեկավար անձնակազմ, ներառյալ Խորհրդի անդամները	303,057	273,310
Ընդամենը	**303,057**	**273,310**

2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ղեկավար անձնակազմի անդամներին տրամադրված վարկերի մնացորդը կազմել է 117,833 հազար ՀՀ դրամ (2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 127,030 հազար ՀՀ դրամ): 2016 թ. ավարտվող ֆինանսական տարվա ընթացքում ղեկավար անձնակազմի անդամներին

տրամադրված և նրանց կողմից մարված վարկերի ընդհանուր գումարը կազմել է համապատասխանաբար 15,180 հազար ՀՀ դրամ և 24,377 հազար ՀՀ դրամ (2015 թ.՝ 6,624 հազար ՀՀ դրամ և 24,928 հազար ՀՀ դրամ): 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ղեկավար անձնակազմի անդամների կողմից Բանկում տեղաբաշխված ավանդների մնացորդը կազմել է 128,404 հազար ՀՀ դրամ (2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 71,636 հազար ՀՀ դրամ): 2016 թ. ավարտվող ֆինանսական տարվա ընթացքում ղեկավար անձնակազմի անդամների կողմից տեղաբաշխված և մարված ավանդների ընդհանուր գումարը կազմել է համապատասխանաբար 82,047 հազար ՀՀ դրամ և 25,279 հազար ՀՀ դրամ (2015 թ.՝ 79,109 հազար ՀՀ դրամ և 64,381 հազար ՀՀ դրամ): Համաձայն Բանկի ներքին կանոնակարգերի՝ վարկեր չեն կարող տրամադրվել Բանկի այն աշխատակիցներին, ովքեր ունեն Բանկում տեղաբաշխված ավանդներ:

Ղեկավար անձնակազմի անդամների հետ գործարքների գծով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում արտացոլված գումարները հետևյալն են.

հազար ՀՀ դրամ

	2016 թ.	2015 թ.
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն		
Տոկոսային ծախս	(11,526)	(7,856)
Տոկոսային եկամուտ	4,241	4,662

Գործարքներ Հայաստանի Հանրապետության Կառավարության հետ

Ստորև ներկայացված են Կառավարության հետ գործարքների մնացորդները և պայմանագրով սահմանված միջին տոկոսադրույքները.

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2016 թ.		31 դեկտեմբերի 2015 թ.	
	Մնացորդ	**Պայմանագրով սահմանված միջին տոկոսադրույք**	**Մնացորդ**	**Պայմանագրով սահմանված միջին տոկոսադրույք**
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն				
Ակտիվներ				
Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող (Ծնթգ.13)	2,352,333	10.8%	1,665,748	12.1%
Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր՝ դասակարգված որպես վաճառքի համար մատչելի (Ծնթգ. 15)	21,204,072	11.0%	13,770,172	10.5%
	23,556,405		**15,435,920**	
Կառավարության կողմից թողարկված մուրհակ (Ծնթգ. 15)				
Մնացորդ հունվարի 1-ին	81,275,373		106,175,637	
Ավելացում	-		-	
Նվազեցում՝ շահույթի բաշխման արդյունքում	(7,464,530)		(24,900,264)	
Մնացորդը դեկտեմբերի 31-ին	**73,810,843**		**81,275,373**	
	97,367,248		**96,711,293**	
Պարտավորություններ				
Պարտավորություններ ՀՀ Կառավարության նկատմամբ (տեղական արժույթով) (Ծնթգ. 23)	183,925,544	5.2%	135,230,179	7.3%
Պարտավորություններ ՀՀ Կառավարության նկատմամբ (արտարժույթով) (Ծնթգ. 23)	1,195,241		1,309,572	0.0%
	185,120,785		**136,539,751**	

Կառավարության նկատմամբ պարտավորություններում տեղական արժույթով ներառված ավանդների շարժը.

հազար ՀՀ դրամ

	2016 թ.	2015 թ.
Մնացորդը հունվարի 1-ին	**86,130,956**	**35,191,972**
Ավելացում	726,599,595	701,219,056
Տոկոսային ծախս	4,781,824	9,599,967
Մարում (ներառյալ՝ տոկոսի վճարումը)	(682,301,103)	(659,880,039)
Մնացորդը դեկտեմբերի 31-ին	**135,211,272**	**86,130,956**

Կառավարությունից տեղական արժույթով ստացված վարկերի շարժը.

հազար ՀՀ դրամ

	2016 թ.	2015 թ.
Մնացորդը հունվարի 1-ին	**2,253,561**	**2,897,476**
Տոկոսային ծախս	98,948	117,325
Մարում (ներառյալ՝ տոկոսի վճարումը)	(742,736)	(761,240)
Մնացորդը դեկտեմբերի 31-ին	**1,609,773**	**2,253,561**

Կառավարության հետ գործարքների գծով համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունում արտացոլված գումարները հետևյալն են.

հազար ՀՀ դրամ

	2016 թ.	2015 թ.
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն		
Տոկոսային եկամուտ Կառավարության արժեթղթերից	2,348,798	2,243,747
Տոկոսային ծախս	(5,431,734)	(10,008,453)
Զուտ (վնաս)/օգուտ փոխարժեքային տարբերություններից	(33,546)	420,023
Զուտ օգուտ/(վնաս) ածանցյալ գործիքներից	547,349	(978,171)

2007 թ. հունվարի 5-ին Կառավարության հետ կնքված պայմանագրի համաձայն՝ Բանկը պարտավորվել է փոխարկել պետական բյուջեի հիմնական արտարժութային մուտքերն ու ելքերը Կառավարության բյուջետային ուղերձում տվյալ տարվա համար սահմանված փոխարժեքներով, ինչը հիմք է հանդիսանում «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» օրենքում ցուցանիշների հաշվարկման համար: Արտարժույթի փոխանակման այդպիսի գործարքներից օգուտը կամ վնասը Բանկը հաշվառում է որպես ածանցյալ գործիքներից ֆինանսական արդյունք:

Գործարքներ Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի հետ

Ստորև բերված աղյուսակներում ներառված տեղեկատվությունը վերաբերում է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի հետ գործարքների արդյունքներին և մնացորդներին: Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կառավարման մարմնում Բանկն ունի ներկայացուցիչներ:

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2016 թ.		31 դեկտեմբերի 2015 թ.	
	Մնացորդ	**Պայմանագրով սահմանված միջին տոկոսադրույք**	**Մնացորդ**	**Պայմանագրով սահմանված միջին տոկոսադրույք**
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն				
Պարտավորություններ				
Ավանդների երաշխավորման հիմնադրամի ժամկետային ավանդ և ընթացիկ հաշիվներ (տեղական արժույթով, Ծնթգ. 20)	15,688	0.00%	117,737	8.75%
Ավանդների երաշխավորման հիմնադրամի ժամկետային ավանդ և ընթացիկ հաշիվներ (արտարժույթով, Ծնթգ. 20)	1,703,577	0.00%	1,850,415	0.0%
Ընդամենը պարտավորություններ	**1,719,265**		**1,968,152**	

Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի ավանդների և ընթացիկ հաշիվների շարժը հետևյալն է.

հազար ՀՀ դրամ

	2016 թ.	**2015 թ.**
Մնացորդը հունվարի 1-ին	**1,968,152**	**2,024,635**
Ավելացում	46,040,386	49,791,783
Տոկոսային ծախս	12,695	11,637
Մարում (ներառյալ՝ տոկոսի վճարումը)	(46,301,968)	(49,859,903)
Մնացորդը դեկտեմբերի 31-ին	**1,719,265**	**1,968,152**

Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի հետ գործարքների գծով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում արտացոլված գումարները հետևյալն են.

հազար ՀՀ դրամ

	2016 թ.	**2015 թ.**
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն		
Տոկոսային ծախս	12,695	11,637

28. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունում տարեվերջի դրությամբ արտացոլված դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են հետևյալ հոդվածներից.

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2016 թ.	31 դեկտեմբերի 2015 թ.
Կանխիկ դրամ	24,771,453	12,117,804
Նոստրո հաշիվներ (Ծնթգ. 12)	391,056,963	253,102,636
ԱՄՀ-ում ՀՓԻ միջոցներ (Ծնթգ. 16)	1,684,319	1,383,162
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**417,512,735**	**266,603,602**

29. Ֆինանսական գործիքների իրական արժեք

Իրական արժեքի գնահատումների վերլուծությունը կատարվում է ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակի, հետևյալ կերպ. (ա) մակարդակ 1՝ գնահատումներ գործող շուկայում համանման ակտիվների կամ պարտավորությունների գնանշված (չճշգրտված) գներով, (բ) մակարդակ 2՝ գնահատման մեթոդներ, որոնցում ակտիվի կամ պարտավորության համար բոլոր էական ելակետային տվյալները ուղղակիորեն (գներ) կամ անուղղակիորեն (գների հիման վրա ստացված) դիտարկելի են, (գ) մակարդակ 3՝ գնահատումներ, որոնք հիմնված չեն շուկայի դիտարկելի տվյալների վրա (այն է՝ ոչ դիտարկելի ելակետային տվյալներ): Ֆինանսական գործիքները դասակարգելիս ղեկավարությունը կիրառում է դատողություն՝ օգտագործելով իրական արժեքի հիերարխիան: Եթե իրական արժեքի գնահատման համար օգտագործվում են էական ճշգրտում պահանջող դիտարկելի ելակետային տվյալներ, ապա տվյալ գնահատումը մակարդակ 3-ի գնահատում է: Գնահատման ելակետային տվյալների էականությունը գնահատվում է իրական արժեքի ամբողջական գնահատման համատրությամբ:

(ա) Իրական արժեքի պարբերական գնահատումներ

Իրական արժեքի պարբերական գնահատումներն այն գնահատումներն են, որոնք հաշվապահական հաշվառման ստանդարտներով պահանջվում կամ թույլատրվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Իրական արժեքի պարբերական գնահատումների դասակարգումն ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակի ներկայացված է ստորև.

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2016 թ.				31 դեկտեմբերի 2015 թ.			
	Մակար-դակ 1	Մակար-դակ 2	Մակար-դակ 3	Ընդամենը	Մակար-դակ 1	Մակար-դակ 2	Մակար-դակ 3	Ընդամենը
Իրական արժեքով հաշվառվող ակտիվներ								
Ֆինանսական ակտիվներ								
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ								
- Պետական պարտատոմսեր	277,429,426	-	-	277,429,426	262,028,255	-	-	262,028,255
- Պետական գործակալությունների պարտատոմսեր	139,649,298	-	-	139,649,298	123,407,007	-	-	123,407,007
- Այլ արժեթղթեր	174,562,803	-	-	174,562,803	127,327,090	-	-	127,327,090
- ՀՀ Կառավարության պետական արժեթղթեր	-	2,352,333	-	2,352,333	-	1,665,748	-	1,665,748
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	**-**	**-**	**-**	**-**	**103,306**	**-**	**-**	**103,306**
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր								
- Արտերկրյա արժեթղթեր	-	2,207,785	-	2,207,785	-	2,221,194	-	2,221,194
- ՀՀ Կառավարության գանձապետական արժեթղթեր	-	21,204,072	-	21,204,072	-	13,770,172	-	13,770,172
- Կառավարության կողմից թողարկված մուրհակ	-	73,810,843	-	73,810,843	-	81,275,373	-	81,275,373
- Կորպորատիվ պարտատոմսեր	-	-	6,111,734	6,111,734	-	-	5,629,794	5,629,794
Ընդամենը ակտիվներ իրական արժեքի պարբերական գնահատմամբ	**591,641,527**	**99,575,033**	**6,111,734**	**697,328,294**	**512,865,658**	**98,932,487**	**5,629,794**	**617,427,939**

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբեր 2016 թ.			31 դեկտեմբեր 2015 թ.	
	Մակարդակ 1	Մակարդակ 3	Ընդամենը	Մակարդակ 3	Ընդամենը
Իրական արժեքով հաշվառվող պարտավորություններ					
Ֆինանսական պարտավորություններ					
Արտարժութային պայմանագրեր հավատարմագրային կառավարման ներքո	51,773	-	51,773	-	-
Ֆորվարդ պայմանագիր Կառավարության հետ	-	28,177	28,177	30,727	30,727
Ընդամենը պարտավորություններ իրական արժեքի պարբերական գնահատմամբ	**51,773**	**28,177**	**79,950**	**30,727**	**30,727**

Մակարդակ 2-ի իրական արժեքի գնահատումներում օգտագործված ելակետային տվյալների և գնահատման մեթոդի նկարագիրը առ 31 դեկտեմբերի 2016 թ. ներկայացված է ստորև.

հազար ՀՀ դրամ

	Իրական արժեք	Գնահատման մեթոդ	Օգտագործված ելակետային տվյալներ
Իրական արժեքով հաշվառվող ակտիվներ			
Ֆինանսական ակտիվներ			
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ			
– ՀՀ Կառավարության պետական արժեթղթեր	2,352,333	Ջեղչված դրամական միջոցների հոսքեր (ՋԴՄՀ)	Պետական պարտատոմսերի եկամտաբերության կոր
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր			
– Արտերկրյա արժեթղթեր	2,207,785	ՋԴՄՀ	Ռիսկերից ազատ տոկոսադրույք՝ եվրո
– ՀՀ Կառավարության գանձապետական արժեթղթեր	21,204,072	ՋԴՄՀ	Պետական պարտատոմսերի եկամտաբերության կոր
– Կառավարության կողմից թողարկված մուրհակ	73,810,843	ՋԴՄՀ	Պետական պարտատոմսերի եկամտաբերության կոր
Ընդամենը մակարդակ 2-ում իրական արժեքի պարբերական գնահատումներ	**99,575,033**		

Մակարդակ 2-ի իրական արժեքի գնահատումներում օգտագործված ելակետային տվյալների և գնահատման մեթոդի նկարագիրը առ 31 դեկտեմբերի 2015 թ. ներկայացված է ստորև.

հազար ՀՀ դրամ

	Իրական արժեք	Գնահատման մեթոդ	Օգտագործված ելակետային տվյալներ
Իրական արժեքով հաշվառվող ակտիվներ			
Ֆինանսական ակտիվներ			
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ			
– ՀՀ Կառավարության պետական արժեթղթեր	1,665,748	ՋԴՄՀ	Պետական պարտատոմսերի եկամտաբերության կոր
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր			
– Արտերկրյա արժեթղթեր	2,221,194	ՋԴՄՀ	Ռիսկերից ազատ տոկոսադրույք՝ եվրո
– ՀՀ Կառավարության գանձապետական արժեթղթեր	13,770,172	ՋԴՄՀ	Պետական պարտատոմսերի եկամտաբերության կոր
– Կառավարության կողմից թողարկված մուրհակ	81,275,373	ՋԴՄՀ	Պետական պարտատոմսերի եկամտաբերության կոր
Ընդամենը մակարդակ 2-ում իրական արժեքի պարբերական գնահատումներ	**98,932,487**		

Մակարդակ 3-ի իրական արժեքի գնահատման մեթոդի, գնահատումներում օգտագործված ելակետային տվյալների և այդ ելակետային տվյալներում հնարավոր ողջամիտ փոփոխությունների նկատմամբ համապատասխան զգայունության նկարագիրը 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև.

հազար ՀՀ դրամ

	Իրական արժեք	Գնահատման մեթոդ	Օգտագործված ելակետային տվյալներ	Ելակետային տվյալների միջակայքը (միջին կշռված)	Ողջամիտ փոփոխություն	Իրական արժեքի գնահատման զգայունություն
Իրական արժեքով հաշվառվող ակտիվներ						
Ֆինանսական ակտիվներ						
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր						
- Կորպորատիվ պարտատոմսեր	6,111,734	ԶԴՄՀ	1) Պետական պարտատոմսերի եկամտաբերության կոր	1) 9.75%	1) ± 370 բ.կ.	1) (45,398)/46,584
			2) Վարկային ռիսկ	2) 3%	2) ± 200 բ.կ.	2) 25,030/(30,801)
			3) Վերադարձելիության գործակից	3) 50%	3) ± 20%	3)12,471/(18,545)
Իրական արժեքով հաշվառվող պարտավորություններ						
Ֆինանսական պարտավորություններ						
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	28,177	ԶԴՄՀ	1) Ռիսկերից ազատ տոկոսադրույք՝ ՀՀ դրամ	1) 6.84%	1) ± 370 բ.կ.	1) (4,736)/4,918
			2) Ռիսկերից ազատ տոկոսադրույք՝ ԱՄՆ դոլար	2) 5.77%	2) ±60/-8 բ.կ.	2) 777/(104)
			3) Ռիսկերից ազատ տոկոսադրույք՝ եվրո	3) 4.63%	3)±12/-8 բ.կ.	3) 5/(3)
			4) ԱՄՆ դոլար/ ՀՀ դրամ սփոթ դրույք տարվա վերջին	4) 483.94	4) առկա չէ	4) առկա չէ
			5) Եվրո/ ՀՀ դրամ սփոթ դրույք տարվա վերջին	5) 512.2	5) առկա չէ	5) առկա չէ
			6) Արտաքին պարտքի ակնկալվող գումար՝ ԱՄՆ դոլար	6) 3,252 հազ. ԱՄՆ դոլար	6) ±10%	6) (2,912)/2,912
			7) Արտաքին պարտքի ակնկալվող գումար՝ եվրո	7) 100 հազ. եվրո	7) ± 10%	7) 95/(95)

Մակարդակ 3-ի իրական արժեքի գնահատման մեթոդի, գնահատումներում օգտագործված ելակետային տվյալների և այդ ելակետային տվյալներում հնարավոր ողջամիտ փոփոխությունների նկատմամբ համապատասխան զգայունության նկարագիրը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև.

հազար ՀՀ դրամ

	Իրական արժեք	Գնահատման մեթոդ	Օգտագործված ելակետային տվյալներ	Ելակետային տվյալների միջակայքը (միջին կշռված)	Ողջամիտ փոփոխություն	Իրական արժեքի գնահատման զգայունություն
Իրական արժեքով հաշվառվող ակտիվներ						
Ֆինանսական ակտիվներ Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր						
- Կորպորատիվ պարտատոմսեր	5,629,794	ԶԴՄՀ	1) Պետական պարտատոմսերի եկամտաբերության կոր	1) 14%	1) ± 150 բ.կ.	1) (89,041)/91,164
			2) Վարկային ռիսկ	2) 3%	2) ± 200 բ.կ.	2) (139,685)/122,035
			3) Վերադարձելիության գործակից	3) 50%	3) ± 20%	3) 60,536/(89,041)
Իրական արժեքով հաշվառվող պարտավորություններ						
Ֆինանսական պարտավորություններ						
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	30,727	ԶԴՄՀ	1) Ռիսկերից ազատ տոկոսադրույք՝ ՀՀ դրամ	1) 10.64%	1) ± 150 բ.կ.	1) 1,399/(1,419)
			2) Ռիսկերից ազատ տոկոսադրույք՝ ԱՄՆ դոլար	2) 5.43%	2) ± 75 բ.կ.	2) (723)/728
			3) Ռիսկերից ազատ տոկոսադրույք՝ եվրո	3) 4.79%	3) ± 75 բ.կ.	3) (33)/33
			4) ԱՄՆ դոլար/ ՀՀ դրամ սփոթ դրույք տարվա վերջին	4) 483.75	4) առկա չէ	4) առկա չէ
			5) Եվրո/ՀՀ դրամ սփոթ դրույք տարվա վերջին	5) 528.69	5) առկա չէ	5) առկա չէ
			6) Արտաքին պարտքի ակնկալվող զուտ գումար՝ ԱՄՆ դոլար	6) ԱՄՆ դոլար 2.416 հազ.	6) ± 10	6) 2.970/(2.970)
			7) Արտաքին պարտքի ակնկալվող զուտ գումար՝ եվրո	7) Եվրո 100 հազ.	7) ± 10	7) 103/(103)

Ներկայացված աղյուսակները բացահայտում են ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գնահատման ելակետային տվյալների նկատմամբ զգայունությունն այն դեպքում, երբ խելամտորեն հնարավոր այլընտրանքային ենթադրություններն արտացոլելու համար ոչ դիտարկելի ելակետային տվյալներից մեկի կամ մի քանիսի փոփոխությունը հանգեցնում է իրական արժեքի էական փոփոխության: Ներկայացված աղյուսակում բացահայտված իրական արժեքի գնահատման զգայունությունը ցույց է տալիս

գնահատման արդյունքի փոփոխության ուղղությունը համապատասխան ելակետային փոփոխականների ավելացման կամ նվազեցման դեպքում:

(բ) Մակարդակ 3-ի իրական արժեքի պարբերական գնահատումների գործընթացներ

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ 3-ում իրական արժեքի գնահատումները պարբերաբար դիտարկվում են Բանկի հաշվապահական հաշվառման և ֆինանսական վարչությունների կողմից՝ որոշում կայացնելով գնահատման մեթոդի ելակետային տվյալների վերլուծության և օգտագործվող գնահատման մեթոդի համապատասխանության վերաբերյալ: Մակարդակ 3-ում գործիքները գնահատվում են գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի զուտ բերված արժեքով՝ օգտագործելով յուրաքանչյուր ֆինանսական գործիքի առանձնահատկությունների հիման վրա որոշված զեղչման դրույքները: Անհրաժեշտության դեպքում Խմբի կողմից կիրառվում է հետադարձ թեստավորում:

(գ) Ակտիվներ և պարտավորություններ, որոնք չեն գնահատվում իրական արժեքով, սակայն որոնց համար կատարվում է իրական արժեքի վերաբերյալ տեղեկատվության բացահայտում

Ստորև ներկայացված է իրական արժեքով չգնահատվող ակտիվների հաշվեկշռային արժեքը և իրական արժեքի վերլուծությունն ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակի.

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2016 թ.				31 դեկտեմբերի 2015 թ.			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Հաշվեկշռային արժեք	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ								
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով								
- Նոստրո հաշիվներ	–	391,056,963	–	391,056,963	–	253,102,636	–	253,102,636
- Ժամկետային ավանդներ	–	28,980,855	–	29,028,319	–	15,493,099	–	15,440,510
- Հավատարմագրային կառավարման ներքո գտնվող ակտիվներում ներառված դրամական միջոցներ	–	2,914,810	–	2,914,810	–	1,952,562	–	1,952,562
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով								
- Հետգնման պայմանագրեր և այլ մեկօրյա միջոցներ	–	45,707,770	–	45,707,770	–	122,365,066	–	122,365,066
- Վարկեր բանկերին և ֆինանսական կազմակերպություններին KfW-ի, Համաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի և Եվրոպական ներդրումային բանկի հետ համաձայնագրերի շրջանակներում	–	106,004,276	–	105,894,951	–	85,653,331	–	85,351,415
- Հիփոթեքային վերաֆինանսավորում	–	58,925,041	–	61,258,612	–	49,183,495	–	49,183,495
- Առևտրային բանկերում տեղաբաշխված ավանդներ և թղթակցային հաշիվներ	–	50,163,151	–	50,364,096	–	42,431,842	–	42,527,391
- Ներդրումներ՝ դասակարգված որպես փոխառություններ և դեբիտորական պարտքեր	–	–	9,881,947	13,791,080	–	–	3,610,240	6,448,154
- Ստորադաս վարկեր	–	–	–	–	–	3,068,234	–	3,079,245
- Այլ վարկեր	–	6,995,062	–	7,324,837	–	7,536,402	–	7,821,877
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումային արժեթղթեր								
- Պետական պարտատոմսեր	–	–	–	–	16,232,891	–	–	16,232,827
- Պետական գործակալությունների պարտատոմսեր	11,654,715	–	–	11,655,737	29,834,116	–	–	29,810,650
- Այլ արժեթղթեր	19,776,585	–	–	19,775,544	17,695,047	–	–	17,690,236
Ընդամենը	**31,431,300**	**690,747,928**	**9,881,947**	**738,772,719**	**63,762,054**	**580,786,667**	**3,610,240**	**651,006,064**

Խմբի ղեկավարությունը կարծում է, որ ֆինանսական և այլ հաստատություններում արտերկրյա և տեղական արժույթով հաշիվների և ավանդների, ԱՄՀ-ին վճարվելիք գումարների և այլ փոխառու միջոցների հաշվեկշռային արժեքը մոտարկում է դրանց իրական արժեքին: Իրական արժեքի հիերարխիայում այդ ֆինանսական պարտավորությունները ներառված են մակարդակ 2-ում:

Ստորև ներկայացված է իրական արժեքով չգնահատվող պարտավորությունների հաշվեկշռային արժեքը և իրական արժեքի դասակարգումն ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակի.

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2016 թ.		31 դեկտեմբերի 2015 թ.	
	Մակարդակ 2	Հաշվեկշռային արժեք	Մակարդակ 2	Հաշվեկշռային արժեք
Ֆինանսական պարտավորություններ				
Պարտավորություններ ՀՀ Կառավարության նկատմամբ				
Պարտավորություններ արտարժույթով				
- Կառավարության ընթացիկ հաշիվներ	1,195,241	1,195,241	1,061,467	1,061,467
- Կրեդիտորական պարտքեր	-	-	248,105	248,105
Պարտավորություններ տեղական արժույթով				
- Կառավարության ընթացիկ հաշիվներ	47,104,499	47,104,499	46,845,662	46,845,662
- Ժամկետային ավանդներ	135,165,735	135,211,272	86,173,942	86,130,956
- Կառավարությունից ստացված վարկեր	1,609,773	1,609,773	2,253,561	2,253,561
- Թողարկված պարտատոմսեր	**8,980,647**	**8,788,038**	**3,054,691**	**3,244,388**
Ընդամենը	**194,055,895**	**193,908,823**	**139,637,428**	**139,784,139**

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ 2-ում և մակարդակ 3-ում իրական արժեքները գնահատվել են՝ օգտագործելով զեղչված դրամական միջոցների մեթոդը: Գործող շուկայում չգնանշված՝ լողացող տոկոսադրույքով գործիքների իրական արժեքը գնահատվել է որպես դրանց հաշվեկշռային արժեքին հավասար: Չգնանշված՝ ֆիքսված տոկոսադրույքով գործիքների իրական արժեքը գնահատվել է՝ հիմք ընդունելով ապագա դրամական միջոցների հոսքերի զեղչման մեթոդը՝ կիրառելով համանման վարկային ռիսկ և մարման ժամկետ ունեցող նոր գործիքների համար շուկայում գործող տոկոսադրույքները:

30. Ռիսկերի կառավարում

Ներածություն

Խմբի գործունեությանը բնորոշ են ռիսկեր: Ռիսկերի կառավարումը Խումբն իրականացնում է բացահայտման, գնահատման և մոնիթորինգի մշտական գործընթացների, ինչպես նաև ռիսկերի սահմանաչափերի հաստատման և ներքին վերահսկողության այլ միջոցառումների միջոցով: Ռիսկերի կառավարման այդ գործընթացը չափազանց կարևոր է Խմբի հիմնական գործառույթների իրականացման համար, և Խմբում յուրաքանչյուր անհատ հաշվետու է իր պարտականություններին առնչվող ռիսկերի ազդեցության

մասով: Խմբի գործունեությունը ենթարկվում է վարկային, իրացվելիության և շուկայական ռիսկերի: Վերջինս ներառում է առևտրային և ոչ առևտրային ռիսկեր: Խմբի գործունեությունը ենթարկվում է նաև գործառնական ռիսկերի:

Ռիսկերի անկախ վերահսկման գործընթացը չի ընդգրկում գործարար ռիսկերը, ինչպիսիք են միջավայրի, տեխնոլոգիաների և ոլորտի փոփոխությունը: Նման ռիսկերը վերահսկվում են Խմբի կողմից ռազմավարական պլանավորման գործընթացի միջոցով:

Ռիսկերի բացահայտման և վերահսկման վերջնական պատասխանատվությունը կրում է Խորհուրդը, սակայն գոյություն ունեն ռիսկերի կառավարման և վերահսկման համար պատասխանատու առանձին անկախ մարմիններ:

Խորհուրդը

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր մոտեցումների, ռազմավարության և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար:

Ինստիտուցիոնալ հիմքերը

ՀՀ միջազգային պահուստները ոչ ռեզիդենտների նկատմամբ Բանկի պահանջներն են՝ արտահայտված ազատ փոխարկելի արտարժույթով: Պահուստներն արտացոլվում են Բանկի ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում: Բանկը պահուստների կառավարումն իրականացնում է Օրենքի 52-րդ հոդվածում նշված սկզբունքներին համապատասխան՝ ներդրումներ կատարելով Խորհրդի կողմից հաստատված գործիքներում:

Պահուստները նախատեսված են արտաքին վճարային/առևտրային անհավասարակշռությունները ֆինանսավորելու, փոխարժեքի վրա այդ անհավասարակշռությունների ազդեցությունը անուղղակի կարգավորելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների անխոչընդոտ կատարումն ապահովելու համար: Բանկը պահուստներն օգտագործում է ՀՀ Կառավարության և պետական գործակալությունների արտարժութային սպասարկման համար, օրինակ՝ արտարժույթի փոխարկման կամ արտաքին պարտքի գծով վճարումների համար:

2007 թվականից սկսած՝ Բանկը, որդեգրելով առաջնակարգ կենտրոնական բանկերում գոյություն ունեցող միջազգային լավագույն փորձը, սահմանել է միջազգային պահուստների կառավարման նոր սկզբունքներ: Խմբի կողմից ներդրվել է որոշումների կայացման եռամակարդակ համակարգ, ըստ որի Խորհրդի կողմից սահմանվում է «Ակտիվների ռազմավարական տեղաբաշխումը», այսինքն՝ պահուստների կառավարման հիմնական սկզբունքները երկարաժամկետ՝ 3 տարի միջակայքի համար, իսկ ավելի կարճաժամկետ, մարտավարական ուղենիշերի ընտրության իրավասությունը պատվիրակվել է Բանկի ներդրումային հանձնաժողովին: Պորտֆելի կառավարիչները, իրենց հերթին, ունեն մարտավարական ուղենիշերի և թույլատրելի ակտիվ ռիսկի սահմաններում ընթացիկ կառավարման որոշումներ կայացնելու իրավասություններ:

Կառավարում և վերահսկողություն

Ըստ Բանկի կառուցվածքի՝ ՀՀ միջազգային պահուստների կառավարման համար պատասխանատու է Ֆինանսական վարչությունը: Ֆինանսական վարչության բաժիններից մեկը՝ Արտաքին շուկաներում գործառնությունների բաժինը, իրականացնում է պահուստների ամենօրյա կառավարման հետ կապված գործառնություններ: Նույն վարչության Միջազգային ռիսկերի կառավարման բաժինը պատասխանատու է ռիսկերի գնահատման, ակտիվների ռազմավարական տեղաբաշխման և ուղենիշերի մշակման, սահմանաչափերի պահպանման մոնիթորինգի, ինչպես նաև պահուստների կառավարման կատարողականի գնահատման և հաշվետվությունների ներկայացման համար:

Պահուստների կառավարման հետ կապված խնդիրներն ամսական պարբերականությամբ քննարկվում են Բանկի Ներդրումային հանձնաժողովի կողմից, որում ընդգրկված են պահուստների կառավարման գործընթացում ներգրավված բոլոր ստորաբաժանումների ղեկավարները, ինչպես նաև Բանկի նախագահը և նախագահի տեղակալը: Հանձնաժողովը նախկինում բացառապես խորհրդատվական մարմին էր, սակայն պահուստների կառավարման եռամակարդակ համակարգի ներդրումից հետո վերջինիս շնորհվել է որոշումներ կայացնելու իրավասություն:

Պահուստների կառավարման կատարողականի վերաբերյալ Ֆինանսական վարչությունը եռամսյակային պարբերականությամբ զեկուցում է Ներդրումային հանձնաժողովին և կիսամյակային պարբերականությամբ՝ Խորհրդին: Բանկը յուրաքանչյուր եռամսյակը մեկ Կառավարությանը և Ազգային ժողովին է ներկայացնում միջազգային պահուստների վիճակի և կազմի մասին տեղեկատվություն և հրապարակում է այն:

Ակտիվների տեղաբաշխումը և ռիսկերի կառավարումը

Համաձայն Օրենքի 52-րդ հոդվածի՝ ՀՀ միջազգային պահուստները կառավարվում են իրացվելիության և անվտանգության պատշաճ մակարդակի ապահովման պայմաններում եկամտաբերության մաքսիմալացման սկզբունքով: Այս նպատակով Բանկի Ֆինանսական վարչությունը մշակում է ակտիվների ռազմավարական տեղաբաշխման և մարտավարական ուղենիշերի նախագծերը, որոնք հաստատվում են համապատասխանաբար Բանկի Խորհրդի և Ներդրումային հանձնաժողովի կողմից: Ներդրումային ուղենիշերը ներառում են ներդրումային գործընթացը կարգավորող բոլոր սահմանաչափերը և պահանջները, ինչպես նաև ակտիվների այն կառուցվածքը, որը համապատասխանում է Խորհրդի կողմից պահուստների կառավարմանը ներկայացվող սկզբունքներին:

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկն այն ռիսկն է, որ Խումբը կարող է կրել վնասներ՝ հաճախորդների կամ գործընկերների պարտավորությունների չկատարման դեպքում: Խումբն իրականացնում է վարկային ռիսկի վերահսկում և կառավարում՝ ռիսկի առավելագույն չափի սահմանման միջոցով, որը Խումբը կարող է ընդունել ըստ առանձին գործընկերների, աշխարհագրական կամ ոլորտային ռիսկի կենտրոնացումների, ինչպես նաև սահմանված ռիսկի սահմանաչափերի պահպանման վերահսկողության միջոցով:

Խումբը մշակել է վարկային որակի ստուգման ընթացակարգ՝ ապահովելու գործընկերների վճարունակության հնարավոր փոփոխությունների վաղաժամկետ հայտնաբերումը: Միջազգային պահուստների վարկային որակը գնահատելու համար Բանկը գնահատում է գործընկերների վարկունակությունը՝ հիմք ընդունելով միջազգային հեղինակավոր վարկանշային կազմակերպությունների կողմից շնորհված վարկանիշները:

Խումբը սահմանում է նվազագույն ընդունելի վարկանիշներ պետական, պետական գործակալությունների, այլ պետական մարմինների, ֆինանսական կազմակերպությունների և վերազգային կազմակերպությունների թողարկած արժեթղթերի համար: Այդ վարկանիշները չեն կարող ցածր լինել որոշակի սահմանված նվազագույն մակարդակից, որը պարբերաբար վերանայվում է:

Վարկային ռիսկի մոնիթորինգի համար կիրառվում է ներքին ռեսուրսներով մշակված մոդելը: Վերջինս հնարավորություն է տալիս գործընկերոջ բաժնետոմսերի գների վարքագծի, ինչպես նաև մի շարք հաշվեկշռային ցուցանիշների հիման վրա գնահատելու ընկերության անվճարունակության հավանականությունը: Այն պատկանում է կառուցվածքային մոդելների տիպին, որն ընկերության անվճարունակությանը տալիս է տնտեսագիտորեն իմաստալից բացատրություն՝ հիմնվելով ակտիվների և պարտավորությունների կառուցվածքի, ինչպես նաև պարտքի չափի վրա: Մոդելը հիմնված է սահմանային օպցիոնի գնի հաշվարկման բանաձևի վրա, որը նաև հեղինակավոր FITCH վարկանշային կազմակերպության կողմից

ընկերություններին շնորհվող վարկանիշների բաղադրիչներից մեկն է: Վարկանիշների և կիրառվող մոդելի արդյունքների հիման վրա կառուցվում է ըստ վարկանիշների և ժամկետայնությունների, առանձին գործընկերների և գործիքների գծով ներդրումների առավելագույն ծավալների սահմանաչափերի մատրիցը, որը և վարկային ռիսկի կառավարման հիմնական գործիքն է:

Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Վարկային ռիսկը, որն առաջանում է ածանցյալ ֆինանսական գործիքներից, ժամանակի ցանկացած պահին սահմանափակվում է դրական իրական արժեքով հաշվառվող ածանցյալ գործիքներով, որոնք ճանաչված են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում:

Վարկային ռիսկի առավելագույն չափը՝ առանց գրավի կամ այլ վարկային ապահովման

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության տարրերի (ներառյալ ածանցյալ գործիքների) վարկային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը, նախքան գլխավոր հաշվանցման և գրավադրման պայմանագրերի միջոցով ռիսկի նվազեցման, լավագույնս ներկայացված է դրանց հաշվեկշռային արժեքով:

Երբ ֆինանսական գործիքները հաշվառվում են իրական արժեքով, հաշվեկշռային արժեքները ցույց են տալիս ընթացիկ, բայց ոչ առավելագույն վարկային ռիսկին ենթարկվածությունը, որը կարող է առաջանալ ապագայում իրական արժեքների փոփոխություններից:

Ֆինանսական գործիքների յուրաքանչյուր դասի համար վարկային ռիսկին առավելագույն ենթարկվածության մանրամասների համար անհրաժեշտ է դիտարկել համապատասխան ծանոթագրությունները:

Վարկային ռիսկն ըստ ֆինանսական ակտիվների դասերի

Խմբի ֆինանսական ակտիվները, բացառությամբ բաժնային ներդրումների, դասակարգվում են ըստ Խմբի գործընկերներին Fitch IBCA, Moody's և Standard & Poor's վարկանիշային գործակալությունների կողմից շնորհված վարկանիշներից նվազագույնի: Ստորև ներկայացված են վարկանիշներն ըստ Moody's վարկանիշային գործակալության կոդերի՝ օգտագործելով Bloomberg տեղեկատվական համակարգի վարկանիշների համապատասխանության աղյուսակը: AAA+ վարկանիշն օգտագործվում է չափազանց հուսալի ֆինանսական հաստատությունների, ինչպիսին է Միջազգային հաշվարկների բանկը (BIS), նույնականացման համար:

հազար ՀՀ դրամ

	Վարկային վարկանիշ	31 դեկտեմբերի 2016 թ.		31 դեկտեմբերի 2015 թ.	
		Գումար	%-ը ֆինանսական ակտիվներում	Գումար	%-ը ֆինանսական ակտիվներում
Ֆինանսական ակտիվներ՝ ոչ ժամկետանց և ոչ արժեզրկված					
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով					
- Նոստրո հաշիվներ	P-1	387,653,933	91.6	251,353,280	92.9
	P-2	2,536,092	0.6	969,674	0.4
	Վարկանիշ առկա չէ	829,258	0.2	379,357	0.1
	NP	37,680	0.0	400,325	0.2
- Ժամկետային ավանդներ	P-1	22,341,229	5.3	13,988,450	5.2
	Վարկանիշ առկա չէ	6,687,090	1.6	1,452,060	0.5
- Հավատարմագրային կառավարման ներքո գտնվող ակտիվներում ներառված դրամական միջոցներ և տոկոսադրույքի ֆյուչերսի պարտադիր մարժա	P-1	2,914,810	0.7	1,952,562	0.7
Ընդամենը բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով		**423,000,092**	**100.0**	**270,495,708**	**100.0**
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ					
- Պետական պարտատոմսեր	Aaa	239,537,627	40.4	3,207,670	0.6
	Aa1-Aa3	33,038,691	5.6	255,403,079	49.6
	A1	4,853,108	0.8	3,417,506	0.7
- Պետական գործակալությունների պարտատոմսեր և այլ արժեթղթեր	Aaa	107,076,919	18.0	45,814,452	8.9
	Aa1-Aa3	27,615,942	3.8	55,344,888	10.8
	A1-A3	4,956,437	0.8	22,247,667	4.3
- Այլ արժեթղթեր	Aaa	106,958,695	18.0	28,822,144	5.6
	Aa1-Aa3	67,604,108	12.2	90,992,039	17.7
	A1-A3	-		7,512,907	1.5
- ՀՀ Կառավարության պետական արժեթղթեր	Ba2	2,352,333	0.4	1,665,748	0.3
Ընդամենը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ		**593,993,860**	**100.0**	**514,428,100**	**100.0**
Վաճառքի համար մատչելի ակտիվներ՝ բացառությամբ բաժնային ներդրումների					
- ՀՀ Կառավարության պետական արժեթղթեր	Ba2	21,204,072	21.0	13,770,172	13.7
- Կառավարության կողմից թողարկված մուրհակ	Ba2	73,810,843	73.0	81,275,373	80.7
- Կորպորատիվ պարտատոմսեր	Վարկանիշ առկա չէ	6,111,734	6.0	5,629,794	5.6
Ընդամենը վաճառքի համար մատչելի ակտիվներ՝ բացառությամբ բաժնային ներդրումների		**101,126,649**	**100.0**	**100,675,339**	**100.0**
Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ					
- Պետական պարտատոմսեր	Aa1-Aa3			5,386,249	8.4
	A1-A2			10,846,578	17.0
- Պետական գործակալությունների պարտատոմսեր	Aaa	1,811,606	5.8	7,429,017	11.7
	Aa1-Aa2	9,844,131	31.3	7,209,037	11.3
	A1-A3	-	0.0	15,172,596	23.8
- Այլ արժեթղթեր	Aaa	17,005,568	54.1	11,524,205	18.1
	Aa1	2,769,976	8.8	6,166,031	9.7
Ընդամենը մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ		**31,431,281**	**100.0**	**63,733,713**	**100.0**

2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկանիշ չունեցող վարկային խմբում ներառված ընթացիկ հաշիվներն ու ժամկետային ավանդները կազմել են համապատասխանաբար 459,005 հազար ՀՀ դրամ և 6,687,090 հազար ՀՀ դրամ գումարի չափով (2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 372,798 հազար ՀՀ դրամ և 1,452,060 հազար ՀՀ դրամ), հանդիսանում են Խմբի դուստր կազմակերպությունների կողմից տեղական առևտրային բանկում ընթացիկ հաշիվներ և ներդրված ավանդներ:

6,111,734 հազար ՀՀ դրամ արժեքով չվարկանշված կորպորատիվ պարտատոմսերը հանդիսանում են Խմբի դուստր կազմակերպություններից մեկի ներդրումները տեղական ներդրումային և զարգացման հիմնադրամներում (2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 5,629,794 հազար ՀՀ դրամ):

հազար ՀՀ դրամ

		31 դեկտեմբերի 2016 թ.		31 դեկտեմբերի 2015 թ.	
	Վարկային վարկանիշ	Գումար	%-ը ֆինանսական ակտիվներում	Գումար	%-ը ֆինանսական ակտիվներում
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով					
- Վարկեր բանկերին և ֆինանսական կազմակերպություններին KfW-ի, Համաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի և Եվրոպական ներդրումային բանկի հետ համաձայնագրերի շրջանակներում	Մարվել են հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո	7,601,310	7.2	4,122,009	4.8
	Վճարման ենթակա չեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ	98,293,641	92.8	81,229,406	95.2
Ընդամենը		**105,894,951**	**100.0**	**85,351,415**	**100.0**
- Հիփոթեքային վերաֆինանսավորում	Մարվել են հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո	1,429,870	2.3	2,108,231	4.3
	Վճարման ենթակա չեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ	59,828,742	97.7	47,075,264	95.7
Ընդամենը		**61,258,612**	**100.0**	**49,183,495**	**100.0**
- Առևտրային բանկերում տեղաբաշխված ավանդներ և թղթակցային հաշիվներ	Մարվել են հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո	4,181,922	8.3	9,048,048	21.3
	Վճարման ենթակա չեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ	46,182,174	91.7	33,479,343	78.7
Ընդամենը		**50,364,096**	**100.0**	**42,527,391**	**100.0**
- Հետգնման պայմանագրեր և այլ մեկօրյա միջոցներ	Մարվել են հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո	45,707,770	100.0	122,365,066	100.0
Ընդամենը		**45,707,770**	**100.0**	**122,365,066**	**100.0**
- Ներդրումներ՝ դասակարգված որպես փոխառություններ և դեբիտորական պարտքեր	Մարվել են հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո	389,951	2.8	148,154	2.3
	Վճարման ենթակա չեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ	13,401,129	97.2	6,300,000	97.7
Ընդամենը		**13,791,080**	**100.0**	**6,448,154**	**100.0**
- Ստորադաս վարկեր	Մարվել են հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո	-	0.0	1,295,790	42.1
	Վճարման ենթակա չեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ	-	0.0	1,783,455	57.9
Ընդամենը		**-**	**0.0**	**3,079,245**	**100.0**
- Այլ վարկեր		7,324,837	100.0	7,821,877	100.0
Ընդամենը		**7,324,837**	**100.0**	**7,821,877**	**100.0**
Ընդամենը բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով		**284,341,346**	**-**	**316,776,643**	**-**

Բանկը որոշումներ է կայացնում տեղական բանկերում և ֆինանսական կազմակերպություններում միջոցների տեղաբաշխման վերաբերյալ՝ հաշվի առնելով իր՝ որպես բանկային ոլորտի կարգավորողի և վերջին ատյանի վարկատուի դերակատարումը և, հետևաբար, չի շնորհում վարկանիշներ տեղական բանկերին և ֆինանսական կազմակերպություններին: Այսպիսով, տվյալ ակտիվների վարկային որակի վերլուծությունը սահմանափակվում է համապատասխան գործարքի փուլով:

Արժեզրկման գնահատում

Ֆինանսական ակտիվների արժեզրկումը գնահատելու հիմնական գործոնները հետևյալն են. արդյոք տոկոսների և մայր գումարի վճարումները ժամկետա՞նց են ավելի քան 30 օր, արդյոք հայտնի՞ են գործընկերների որևէ ֆինանսական դժվարության, նրանց վարկային վարկանիշի նվազման կամ պայմանագրի սկզբնական պայմանների խախտման դեպքեր: Խումբն արժեզրկման գնահատումն իրականացնում է երկու պահուստների մակարդակով՝ անհատական և խմբային հիմունքներով գնահատվող պահուստներ:

Անհատապես գնահատվող պահուստներ

Խումբը սահմանում է Խմբի ֆինանսական ակտիվներում յուրաքանչյուր անհատապես նշանակալի ակտիվի պահուստի ստեղծման անհրաժեշտությունն անհատապես: Պահուստների չափի որոշման ժամանակ հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները. գործընկերոջ գործարար-ծրագրի կայունությունը, ֆինանսական բարդությունների ծագման դեպքում նրա ունակությունները բարելավելու գործունեության արդյունքները, սնանկացման պարագայում՝ կանխատեսվող ստացվելիք գումարները և ակնկալվող վճարման ենթակա շահաբաժինների գումարները, ֆինանսական օգնության ներգրավման հնարավորությունը, ապահովման իրացման արժեքը, ինչպես նաև ակնկալվող դրամական միջոցների ժամկետները: Արժեզրկումից վնասները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ կամ ավելի հաճախ, եթե չնախատեսված իրավիճակը պահանջում է ավելի մեծ ուշադրություն:

Խմբային հիմունքով գնահատվող պահուստներ

Անհատապես էական չհանդիսացող վարկերի, ինչպես նաև անհատապես էական, բայց անհատապես արժեզրկման օբյեկտիվ ցուցանիշներ չունեցող ֆինանսական ակտիվների գծով պահուստները գնահատվում են խմբային հիմունքներով: Պահուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, այդ թվում՝ յուրաքանչյուր վարկային պայուսակ դիտարկվում է առանձին:

Խմբային հիմունքով գնահատման դեպքում որոշվում է պայուսակի արժեզրկումը, որը կարող է տեղի ունենալ նույնիսկ անհատական արժեզրկման օբյեկտիվ ցուցանիշների բացակայության դեպքում: Արժեզրկումից վնասները որոշվում են հետևյալ տեղեկատվության հիման վրա. պայուսակի գծով նախորդ ժամանակաշրջանների վնասները, ընթացիկ տնտեսական պայմանները, համապատասխան մոտավոր ժամանակահատվածը՝ սկսած հնարավոր կորստի պահից մինչև այն պահը, երբ կհաստատվի, որ պահանջվում է անհատապես գնահատվող արժեզրկման պահուստի ստեղծումը, ինչպես նաև ստացման ենթակա ակնկալվող գումարները և ակտիվի արժեզրկումից հետո արժեքի վերականգնումը:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առևտրային բանկերի հետ Խումբն ուներ հակադարձ հետգնման պայմանագրեր (2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ օտարերկրյա ֆինանսական հաստատությունների և առևտրային բանկերի հետ), որոնք ներառված են հաշվանցման գլխավոր համաձայնություններում, և որոնք դեֆոլտի դեպքում ենթակա են կատարման: Խումբը կատարել է նաև մարժային ավանդներ, որոնք գրավ են հանդիսանում իր չհատուցված ածանցյալ գործիքների համար: Դեֆոլտի դեպքում հավատարմագրային կառավարիչը կարող է մարժային ավանդի հետ հաշվանցել Խմբի պարտավորությունները:

Ստորև ներկայացված աղյուսակում ներառված են հաշվանցման ենթակա իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա (ISDA, RISDA և այլն) հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները, որոնք չեն հանգեցնում հաշվանցման ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում:

հազար ՀՀ դրամ

2016 թ. դեկտեմբերի 31	**Հանաչված ֆինանսական ակտիվի/պարտավորության համախառն գումար**	**Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված հանաչված ֆինանսական ակտիվի/պարտավորության համախառն գումար**	**Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվի/պարտավորության զուտ գումար**	**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ**	**Զուտ գումար**
				Ֆինանսական գործիքներ	
Ֆինանսական ակտիվներ					
Հետգնման պայմանագրեր և այլ մեկօրյա միջոցներ	45,707,770	–	45,707,770	45,707,770	–
Ընդամենը	**45,707,770**	**–**	**45,707,770**	**45,707,770**	**–**

հազար ՀՀ դրամ

2015 թ. դեկտեմբերի 31	**Հանաչված ֆինանսական ակտիվի/պարտավորության համախառն գումար**	**Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված հանաչված ֆինանսական ակտիվի/պարտավորության համախառն գումար**	**Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվի/պարտավորության զուտ գումար**	**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ**	**Զուտ գումար**
				Ֆինանսական գործիքներ	
Ֆինանսական ակտիվներ					
Հետգնման պայմանագրեր և այլ մեկօրյա միջոցներ	122,365,066	–	122,365,066	122,365,066	–
Ընդամենը	**122,365,066**	**–**	**122,365,066**	**122,365,066**	**–**

Ստորև ներկայացված աղյուսակում ներառված են Խմբի ակտիվները և պարտավորությունները ըստ աշխարհագրական կենտրոնացման.

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2016 թ.				31 դեկտեմբերի 2015 թ.			
	Հայաստան	**ՏՀՋԿ**	**ԱՊՀ և այլ երկրների բանկեր**	**Ընդամենը**	**Հայաստան**	**ՏՀՋԿ**	**ԱՊՀ և այլ երկրների բանկեր**	**Ընդամենը**
Ակտիվներ								
Կանխիկ դրամ	24,771,453	-	-	24,771,453	12,117,804	-	-	12,117,804
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով	7,146,095	415,433,695	420,302	423,000,092	1,824,858	268,228,226	442,624	270,495,708
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով	284,341,346	-	-	284,341,346	316,776,643	-	-	316,776,643
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	2,352,333	591,641,527	-	593,993,860	1,665,748	512,762,352	-	514,428,100
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	-	-	-	-	-	103,306	-	103,306
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	101,788,443	2,209,431	-	103,997,874	101,286,020	2,222,840	-	103,508,860
Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ	-	31,431,281	-	31,431,281	-	63,733,713	-	63,733,713
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	-	85,480,295	-	85,480,295	-	63,055,674	-	63,055,674
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	77,089,263	-	-	77,089,263	78,621,958	-	-	78,621,958
Այլ ակտիվներ	13,492,197	1,530,962	80,808	15,103,967	12,594,907	97,231	-	12,692,138
Ընդամենը ակտիվներ	**510,981,130**	**1,127,727,191**	**501,110**	**1,639,209,431**	**524,887,938**	**910,203,342**	**442,624**	**1,435,533,904**
Պարտավորություններ								
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ	455,401,582	-	-	455,401,582	413,613,757	-	-	413,613,757
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	587,465,855	13,072	210,505	587,689,432	511,557,358	10,116	239,349	511,806,823
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	28,177	51,773	-	79,950	30,727	-	-	30,727
Պարտավորություններ Կառավարության հանդեպ	185,120,785	-	-	185,120,785	136,539,751	-	-	136,539,751
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	-	279,123,932	-	279,123,932	-	252,939,131	-	252,939,131
Այլ փոխառություններ	-	108,188,703	5,004,020	113,192,723	-	96,443,995	3,496,469	99,940,464
Թողարկված պարտատոմսեր	8,788,038	-	-	8,788,038	3,244,388	-	-	3,244,388
Այլ պարտավորություններ	4,212,549	222,670	-	4,435,219	3,168,021	236,945	2,701	3,407,667
Ընդամենը պարտավորություններ	**1,241,016,986**	**387,600,150**	**5,214,525**	**1,633,831,661**	**1,068,154,002**	**349,630,187**	**3,738,519**	**1,421,522,708**
Զուտ ակտիվներ	**(730,035,856)**	**740,127,041**	**(4,713,415)**	**5,377,770**	**(543,266,064)**	**560,573,155**	**(3,295,895)**	**14,011,196**

Իրացվելիության ռիսկ և ֆինանսական միջոցների կառավարում

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբը սովորական կամ չկանխատեսված իրավիճակում չի կարողանա կատարել իր պարտավորությունները վերջիններիս մարման ժամկետում: Բանկը, որպես Կառավարության բանկային գործակալ և երկրի գլխավոր դրամավարկային մարմին, պատասխանատու է պետական պարտքի սպասարկման, Կառավարության արտաքին վճարումների սպասարկման, ինչպես նաև ներքին շուկայում ազգային արժույթի կտրուկ տատանումների հարթեցման համար: Այս տեսանկյունից, կարևորվում է կանխիկի և իրացվելիության ծավալների ճիշտ կառավարումը:

Հաշվի առնելով պահուստների կառավարման նպատակները՝ ՀՀ միջազգային պահուստները բաժանվել են 3 մասի՝ գործառնական, իրացվելի և ներդրումային պայուսակների: Եթե առաջին երկուսը նախատեսվում են կարճաժամկետ/պահային և միջնաժամկետ իրացվելիության ապահովման համար, ապա վերջինի նպատակը հարստության կուտակումն է:

Տրանշների նպատակները պայմանավորում են նաև դրանց կառավարման քաղաքականությունը՝ ուղենիշերի ընտրությունը, կառավարման պասիվ կամ ակտիվ տարբերակի ընտրությունը:

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2016 և 2015 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտավորությունները՝ ըստ մնացորդային պայմանագրային ժամկետայնության: Ժամկետայնության աղյուսակում բացահայտված պարտավորությունների գումարները պայմանագրային չզեղչված դրամական միջոցների հոսքեր են: Այդ չզեղչված դրամական միջոցների հոսքերը տարբերվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացված գումարից, քանի որ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներառված գումարը հիմնված է զեղչված դրամական միջոցների հոսքերի վրա: Ածանցյալ ֆինանսական գործիքները ներառված են վճարվելիք կամ ստացվելիք պայմանագրային գումարներով, բացառությամբ այն դեպքերի, երբ Խումբն ակնկալում է մինչև մարման ժամկետը փակել ածանցյալի դիրքը, որի դեպքում ածանցյալները ներառվում են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի հիման վրա:

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2016 թ.						
	Ցպահանջ և 1 ամսից քիչ	**1-ից մինչև 3 ամիս**	**3 ամսից մինչև 1 տարի**	**1-ից մինչև 5 տարի**	**5 տարուց ավելի**	**Առանց մարման ժամկետի**	**Ընդամենը**
Ֆինանսական պարտավորություններ							
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ	455,401,582	-	-	-	-	-	455,401,582
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	584,461,402	47,434	2,472,976	1,327,832	-	-	588,309,644
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	79,950	-	-	-	-	-	79,950
Պարտավորություններ Կառավարության հանդեպ	53,700,664	97,147,271	35,248,064	1,028,752	-	-	187,124,751
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	-	372,121	14,269,746	87,065,212	42,462,439	140,854,294	285,023,812
Այլ փոխառություններ	498,237	-	7,211,169	45,150,654	76,986,933	-	129,846,993
Թողարկված պարտատոմսեր	-	-	4,782,360	5,628,720	-	-	10,411,080
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	**1,094,141,835**	**97,566,826**	**63,984,315**	**140,201,170**	**119,449,372**	**140,854,294**	**1,656,197,812**

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2015 թ.						
	Ցպահանջ և 1 ամսից քիչ	**1-ից մինչև 3 ամիս**	**3 ամսից մինչև 1 տարի**	**1-ից մինչև 5 տարի**	**5 տարուց ավելի**	**Առանց մարման ժամկետի**	**Ընդամենը**
Ֆինանսական պարտավորություններ							
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ	413,613,757	-	-	-	-	-	413,613,757
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	511,807,135	-	-	-	-	-	511,807,135
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	30,727	-	-	-	-	-	30,727
Պարտավորություններ Կառավարության հանդեպ	53,464,719	51,939,121	31,308,835	1,773,122	-	-	138,485,797
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	-	290,480	11,785,539	77,758,565	47,518,545	120,655,398	258,008,527
Այլ փոխառություններ	399,207	-	5,963,948	33,546,794	73,919,379	-	113,829,328
Թողարկված պարտատոմսեր	-	-	344,000	3,754,389	-	-	4,098,389
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	**979,315,545**	**52,229,601**	**49,402,322**	**116,832,870**	**121,437,924**	**120,655,398**	**1,439,873,660**

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Խմբի ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի փոփոխության ռիսկն է՝ շուկայական գների, ներառյալ փոխարժեքի, տոկոսադրույքների և սեփական կապիտալի գների փոփոխության արդյունքում: Խումբը դասակարգում է շուկայական ռիսկն ըստ առևտրային և ոչ առևտրային պայուսակների: Բացի արտարժույթի կենտրոնացման ռիսկից, Խումբը շուկայական ռիսկի զգալի կենտրոնացում չունի:

Տոկոսադրույքի փոփոխման ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է՝ տոկոսադրույքների փոփոխման արդյունքում:

Եռամակարդակ կառավարման ներքո Բանկի Խորհուրդը սահմանում է այսպես կոչված՝ «ռիսկի նկատմամբ իր հանդուրժողականության աստիճանը», որը նախանշում է երկարաժամկետում տոկոսադրույքի ռիսկի ընդունելի սահմանները: Այն նաև սահմանում է պայուսակի օպտիմալացման սկզբունքները: Բանկի Խորհրդի՝ «ռիսկի նկատմամբ իր հանդուրժողականության աստիճանը» արտահայտվում է որոշակի ժամանակահատվածում (ներկայումս՝ երեք տարի) և 95% հավանականությամբ ակնկալվող եկամտաբերության նվազագույն մակարդակի տեսքով: Նշված տրամաբանությունից ելնելով՝ ակտիվների օպտիմալ տեղաբաշխման մարտավարական ուղենիշերի ընդունման իրավասությունը պատվիրակվել է Ներդրումային հանձնաժողովին:

Ուղենիշերի սահմանման հիմնական նպատակը եկամտաբերության մաքսիմալացումն է ավելի կարճ (մեկ տարի) ժամանակահատվածում: Այդ որոշումների հիմքում, ի տարբերություն ռազմավարականների, դրվում են շուկայի ընթացիկ միտումները և կանխատեսումները: Օպտիմալ պայուսակի ընտրության նպատակով եկամտաբերության և ռիսկայնության գնահատումն իրականացվում է ապագա հնարավոր սցենարների մշակման միջոցով՝ մասնավորապես օգտագործելով VAR-MGARCH մոդելի սիմուլյացիաների միջոցով ստացված եկամտաբերության կորի արդյունքները, ինչպես նաև սեփական և շուկայի այլ մասնակիցների փորձագիտական կանխատեսումները տոկոսադրույքների և վարկային սպրեդների վերաբերյալ: Օպտիմալ պայուսակի ընտրությունը կատարվում է Բլեք-Լիթերմանի և Մարկովիցի մոդելների միջոցով, սակայն որոշակի սահմանափակումների պայմաններում:

Ինչ վերաբերում է ռիսկի մոնիթորինգին, ապա ֆինանսական վարչության ռիսկերի կառավարման ստորաբաժանման կողմից կիրառվում են միջազգային պրակտիկայում ընդունված մի շարք ցուցանիշներ. Ռիսկային արժեքի մեթոդ (VaR), Առանցքային կետի դյուրացիա, Ինֆորմացիոն գործակից, Սպրեդ դյուրացիա, PCA դյուրացիա և հետևման սխալ:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Խմբի կապիտալի զգայունությունը, որը հաշվարկվում է՝ վերագնահատելով վաճառքի համար մատչելի հաստատուն տոկոսադրույքով ակտիվները 2016 և 2015 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հիմք ընդունելով տոկոսադրույքների ենթադրվող փոփոխությունները: Կապիտալի զգայունությունը վերլուծվում է ըստ ակտիվի մարման ժամկետների: Կապիտալի ընդհանուր զգայունությունը հիմնված է այն ենթադրության վրա, որ եկամտաբերության կորում կան զուգահեռ փոփոխություններ:

Արժույթ	2016 թ.		2015 թ.	
	Եկամտաբերության կորի փոփոխությունը, բ.կ.	Ազդեցությունը սեփական կապիտալի վրա	Եկամտաբերության կորի փոփոխությունը, բ.կ.	Ազդեցությունը սեփական կապիտալի վրա
ՀՀ դրամ	+370	(2,831,725)	+150	(557,815)
ՀՀ դրամ	-370	3,901,482	-150	611,395

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Խմբի շահույթի զգայունությունը, որը հաշվարկվել է 2016 և 2015 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական ակտիվները իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով վերագնահատելով՝ ելնելով տոկոսադրույքների փոփոխման ենթադրությունից: Աղյուսակում ներկայացված գումարներն արտահայտված են աղյուսակում նշված արժույթներին համապատասխան:

Արժույթ	2016 թ.		2015 թ.	
	Բազիսային կետերի փոփոխություն	Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների և սեփական կապիտալի զուտ արդյունքի աճ/(նվազում)	Բազիսային կետերի փոփոխություն	Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների և սեփական կապիտալի զուտ արդյունքի աճ/(նվազում)
ԱՄՆ դոլար	+/-50	(2,138,813)/2,138,813	+/-25	(975,175)/975,175
Եվրո	+/-25	(812,525)/812,525	+/-25	(773,723)/773,723
ՀՀ դրամ	+/-370	(74,678)/80,226	+/-150	(21,377)/21,981

2016 թ. դեկտեմբերի 31-ի և 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունի նաև լողացող տոկոսադրույքով չմարված պարտավորություններ:

Ստորև աղյուսակը ներկայացնում է 2016 թ. դեկտեմբերի 31-ի և 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի զգայունությունը, որը հաշվարկվում է՝ ելնելով Խմբի կողմից ստացված փոխառությունների տոկոսադրույքների փոփոխման ենթադրությունից:

Արժույթ	2016 թ.		2015 թ.	
	Բազիսային կետերի փոփոխություն	Զուտ տոկոսային ծախսի աճ/(նվազում) և սեփական կապիտալի նվազում/(աճ)	Բազիսային կետերի փոփոխություն	Զուտ տոկոսային ծախսի աճ/(նվազում) և սեփական կապիտալի նվազում/(աճ)
ԱՄՆ դոլար	+/- 50	115,494/(115,494)	+/- 20	46,799/(46,799)
ՀՓԻ	+/- 20	217,417/(217,417)	+/- 10	104,282/(104,282)

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ 3-ում ներառված իրական արժեքի գնահատման մեթոդի համար օգտագործված ելակետային տվյալների զգայունությունը բացահայտված է Ծնթգ. 29-ում:

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկը արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է: Բանկի խորհուրդը սահմանել է արտարժութային դիրքերի սահմանաչափեր՝ հիմնվելով կանոնակարգերի վրա: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի զգայունությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ՀՀ դրամի նկատմամբ կիրառված փոխարժեքների ողջամտորեն հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ բոլոր այլ փոփոխականները հաստատուն պահելով:

Արժույթ	2016 թ.		2015 թ.	
	Փոխարժեքի աճ (%)	Շահույթի և սեփական կապիտալի աճ/(նվազում)	Փոխարժեքի աճ (%)	Շահույթի և սեփական կապիտալի աճ/(նվազում)
ԱՄՆ դոլար	6.00%	32,539,996	16.83%	69,391,445
Եվրո	11.00%	11,414,925	20.84%	17,805,986
Բրիտանական ֆունտ	12.00%	4,190,279	21.10%	9,386,843
Ճապոնական իեն	13.00%	3,139,391	0.16%	56,262
Ռուսական ռուբլի	21.00%	26,420	1.22%	1,493
ՀՓԻ	8.25%	(16,388,432)	39.24%	(75,886,027)

Արժույթ	2016 թ.		2015 թ.	
	Փոխարժեքի նվազում (%)	Շահույթի և սեփական կապիտալի աճ/(նվազում)	Փոխարժեքի նվազում (%)	Շահույթի և սեփական կապիտալի աճ/(նվազում)
ԱՄՆ դոլար	-6.00%	(32,539,996)	-16.83%	(69,391,445)
Եվրո	-11.00%	(11,414,925)	-20.84%	(17,805,986)
Բրիտանական ֆունտ	-17%	(5,936,229)	-21.10%	(9,386,843)
Ճապոնական իեն	-13%	(3,139,391)	-0.16%	(56,262)
Ռուսական ռուբլի	-17.50%	(22,016)	-1.22%	(1,493)
ՀՓԻ	-8.25%	16,388,432	-39.24%	75,886,027

Փոխարժեքների ակնկալվող փոփոխությունը որոշվել է Խմբի կողմից՝ վերլուծելով տարեկան ստանդարտ շեղումները՝ հիմք ընդունելով համապատասխան փոխարժեքների պատմական շուկայական տվյալները:

Պահուստների արժութային կազմը որոշվում է յուրաքանչյուր իրացվելիության տրանշի համար առանձին՝ յուրաքանչյուր տրանշի ստեղծման հիմքում ընկած գործոնները հեջավորելու նպատակով: ՀՀ արտաքին պարտքը պահուստներ ունենալու հիմնական պատճառն է և արտարժույթի պահանջարկի խթանման հիմնական գործոնը: Հետևաբար, պահուստների արժութային կազմը հիմնականում արտացոլում է պարտքի արժութային կառուցվածքը: Կարճաժամկետ իրացվելիության տրանշի արժութային կառուցվածքը պայմանավորված է արտաքին առևտրի հետևանքով առաջացած արժույթների հոսքերով, ինչպես նաև հնարավոր միջամտման կարիքներով և ընթացիկ ծախսերով: Արժութային կառուցվածքը ենթակա է վերանայման տարեկան առնվազն 2 անգամ:

Գործառնական ռիսկ – հսկողություն դուստր ընկերությունների նկատմամբ

Ինչպես բացահայտված է Ծանոթագրություն 2-ում, Բանկն ունի կապիտալ ներդրումներ մի քանի դուստր կազմակերպություններում, որոնք ներգրավված են ֆինանսական հատվածի զարգացման և ենթակառուցվածքային գործունեության մեջ: Նման ներդրումների նպատակն է աջակցել Հայաստանի Հանրապետության ֆինանսական հատվածի զարգացմանը, ապահովել ֆինանսական համակարգի կայունությունը և բնականոն գործունեությունը, որը, ինչպես նշված է Օրենքում, Բանկի նպատակներից մեկն է:

Բանկը դուստր կազմակերպությունների գործունեության նկատմամբ հսկողությունն իրականացնում է հետևյալ կերպ.

- Բաժնետերերի ժողովներին մասնակցություն:
- Դուստր կազմակերպությունների ղեկավարների նշանակում (յուրաքանչյուր դուստր կազմակերպության Տնօրենների խորհուրդը նշանակվում է բաժնետերերի կողմից, և յուրաքանչյուր դուստր կազմակերպության Տնօրենների խորհուրդը նշանակում է Գործադիր տնօրեններ):
- Առնվազն յուրաքանչյուր տարի դուստր կազմակերպությունների գործունեության արդյունքների վերլուծություն՝ ֆինանսական տեղեկատվության դիտարկման միջոցով, ներառյալ դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների արտաքին աուդիտի արդյունքների դիտարկումը:
- Դուստր կազմակերպությունների հետագա ռազմավարական զարգացման վերլուծություն, անհրաժեշտության դեպքում նաև ներդրումների դադարեցման ռազմավարության մշակում:
- Ռիսկերի գնահատման արդյունքների հիման վրա դուստր կազմակերպությունների գործունեությունների վերանայում Բանկի ներքին աուդիտի աշխատանքների շրջանակում:

2015 թվականին Բանկը որդեգրել է քաղաքականություն՝ ակտիվացնելու բանակցությունները հնարավոր ինստիտուցիոնալ ներդրողների հետ՝ դուստր կազմակերպություններում Բանկի ներդրումների օտարման ուղղությամբ:

31. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն

Աղյուսակներում ներկայացված է հաշվետու ժամանակաշրջանի ավարտից տասներկու ամսվա ընթացքում կամ ավելի ուշ փոխհատուցվող կամ մարվող գումարների վերաբերյալ տեղեկատվություն:

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2016 թ.		
	Ընթացիկ	Ոչ ընթացիկ	Ընդամենը
Ակտիվներ			
Կանխիկ դրամ	24,771,453	-	24,771,453
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով	420,580,392	2,419,700	423,000,092
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	593,993,860	-	593,993,860
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով	122,329,202	162,012,144	284,341,346
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	82,129,257	21,868,617	103,997,874
Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ	16,284,401	15,146,880	31,431,281
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	1,685,591	83,794,704	85,480,295
Հիմնական միջոցներ	-	75,507,181	75,507,181
Ոչ նյութական ակտիվներ	-	1,582,082	1,582,082
Այլ ակտիվներ	12,260,003	2,843,964	15,103,967
Ընդամենը ակտիվներ	**1,274,034,159**	**365,175,272**	**1,639,209,431**
Պարտավորություններ			
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ	455,401,582	-	455,401,582
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	586,741,152	948,280	587,689,432
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	79,950	-	79,950
Պարտավորություններ Կառավարության հանդեպ	184,157,954	962,831	185,120,785
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	13,468,438	265,655,494	279,123,932
Այլ փոխառություններ	5,830,566	107,362,157	113,192,723
Թողարկված պարտատոմսեր	4,077,438	4,710,600	8,788,038
Այլ պարտավորություններ	4,401,304	33,915	4,435,219
Ընդամենը պարտավորություններ	**1,254,158,384**	**379,673,277**	**1,633,831,661**
Զուտ դիրք 2016 թ. դեկտեմբերի 31-ին	**19,875,775**	**(14,498,005)**	**5,377,770**

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2015 թ.		
	Ընթացիկ	**Ոչ ընթացիկ**	**Ընդամենը**
Ակտիվներ			
Կանխիկ դրամ	12,117,804	-	12,117,804
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով	269,043,647	1,452,061	270,495,708
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	514,428,100	-	514,428,100
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	103,306	-	103,306
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով	188,842,395	127,934,248	316,776,643
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	83,539,824	19,969,036	103,508,860
Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ	52,948,339	10,785,374	63,733,713
ԱՄՆ-ում տեղաբաշխված միջոցներ	1,383,474	61,672,200	63,055,674
Հիմնական միջոցներ	-	76,882,574	76,882,574
Ոչ նյութական ակտիվներ	-	1,739,384	1,739,384
Այլ ակտիվներ	11,944,342	747,796	12,692,138
Ընդամենը ակտիվներ	**1,134,351,231**	**301,182,673**	**1,435,533,904**
Պարտավորություններ			
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ	413,613,757	-	413,613,757
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	511,806,823	-	511,806,823
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	30,727	-	30,727
Պարտավորություններ Կառավարության հանդեպ	134,935,032	1,604,719	136,539,751
Պարտավորություններ ԱՄՆ-ի հանդեպ	11,153,380	241,785,751	252,939,131
Այլ փոխառություններ	4,913,593	95,026,871	99,940,464
Թողարկված պարտատոմսեր	44,389	3,199,999	3,244,388
Այլ պարտավորություններ	3,375,479	32,188	3,407,667
Ընդամենը պարտավորություններ	**1,079,873,180**	**341,649,528**	**1,421,522,708**
Զուտ դիրք 2015 թ. դեկտեմբերի 31-ին	**54,478,051**	**(40,466,855)**	**14,011,196**

